# ՆՈՐ ՋՈՒՂԱ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԺԴ ՏԱՐԻ ԹԻՒ 112 ՅՈՒՆՈՒԱՐ-ՓԵՏՐՈՒԱՐ 2016




# 2016

# ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ

# «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ» 2016



## ՊԱՏԳԱՄ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան
Թեմակալ Առաջնորդներուն,
հոգեւոր դասուն,
Ազգային Իշխանութեանց, եւ
մեր ժողովուրդի զաւակներուն

Աստուծոյ Որդւոյն մարդեղութեան եւ Նոր Տարուան խորհուրդով ու պատգամով օծուն այս օրերուն, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն հայրապետական օրհնութեամբ ու քրիստոնէական ջերմ սիրով կ՚ողջունենք ձեզ: Կ՚աղօթենք առ Ամենաբարին Աստուած, որ մեր ժողովուրդի սիրելի զաւակներուն, մեր ընտանիքներուն ու մեր Մեծ Ընտանիքին՝ ազգին կեանքը լեցնէ երկնային առատ բարիքներով ու նորանոր յաջողութիւններով:

Տարիներ առաջ մեր նախաձեռնած գեղեցիկ աւանդութիւնը շարունակելով, 2015 տարին Հայրապետական Կոնդակով հռչակեցինք «Պահանջատիրութեան տարի»: Անցնող տարուան ընթացքին, թէ՛ գաղութային եւ թէ համահայկական մակարդակներու վրայ, այլազան ու բազմազան նախաձեռնութիւններու ու ձեռնարկներու ճամբով՝ միշտ միասնական ոգիով, ամուր վճռակամութեամբ ու յառաջատեսիլ մօտեցումով, նշուեցաւ հայոց ցեղասպանութեան 100-ամեակը: Արդարեւ, մեր որդեգրած բնաբանը՝ «Յիշել, Յիշեցնել ու Պահանջել» դարձաւ հայոց ցեղասպանութեան 100-ամեակի արժեւորման մղիչ ուժը, անոր խորք, ընթացք ու նպատակ տուող ուղեգիծը:

Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի նշման ծիրէն ներս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը շեշտը դրաւ պահանջատիրութեան վրայ: մեր կազմակերպած ձեռնարկներուն, կատարած աշխատանքներուն, մշակած ծրագիրներուն, օտար եկեղեցական, քաղաքական ու պետական պատասխանատուներուն հետ ունեցած հանդիպումներուն, հայ թէ օտար շրջանակներէն ներս մեր ունեցած հրապարակային ելոյթներուն ու հրատարակութիւններու ճամբով յատուկ կարեւորութեամբ ընդգծեցինք մեր ժողովուրդի արդար դատը իրաւական մարզ փոխադրելու անյետաձգելի հրամայականը: Եւ աւելի՛ն, որպէս գործնական արտայայտութիւն մեր կատարած կոչին, պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով մեր Սուրբ Աթոռը իրաւական քայլի դիմեց Թուրքիոյ Սահմանադրական Դատարանին մօտ, պահանջելով Սիսի իր դարաւոր Կաթողիկոսարանը:

Արդարեւ, իւրաքանչիւր հայ պահանջատէր է, մեր ողջ ազգը պահանջատէր է այնքան ատեն, որ հայոց ցեղասպանութիւնը չէ ճանչցուած ցեղասպանին կողմէ եւ մեր ժողովուրդը չէ վերատիրացած իր բռնաբարուած իրաւունքներուն: Մեր պահանջատիրական պայքարը տարբեր մօտեցումներով ու շեշտաւորումներով պէտք է շարունակուի 2015-էն անդին:

Արդ, պահանջատիրական ոգիով թրծուած, եւ մեր եկեղեցւոյ, ժողովուրդին ու հայրենիքին կեանքը աւելի ծաղկեցնելու ու հզօրացնելու յանձնառութեամբ շաղախուած, 2016 տարին կը հռչակենք՝

## «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ»

Ծառայութիւնը մեր առօրեայ խօսակցութեան մէջ յաճախակիօրէն գործածուող սովորական բառ դարձած է, ինչպէս նաեւ՝ մեր կեանքին մէջ յաճախ պարզուող բնական երեւոյթ մը: Սակայն, խորունկ նշանակութիւն ունի ծառայութիւնը: Ան մարդկային կեանքին ամենէն բարձր արժէքներէն ու արժանիքներէն մէկն է: Ծառայութիւնը իր խոր էութեամբ հաւատքի ու նուիրումի շօշափելի արտայայտութիւն է, Աստուծոյ ու մեր նմանին հանդէպ ունեցած հաւատարմութեան ու սիրոյ գործնականացումն է: Ծառայու-թիւնը ճիշդ ու համապարփակ կերպով ըմբռնելու համար անհրաժեշտ է առաջին հերթին դառնալ Աստուածաշունչին, որպէս աղբիւրը աստուածային յայտնութեան եւ հիմքը՝ քրիստոնէական հաւատքին ու կեանքին:

### Ա.
### Ծառայութիւնը Աստուածաշունչին մէջ

Ի՞նչ կ՚ըսէ Աստուածաշունչը ծառայութեան մասին: Նախ ընդհանուր գիծերով ակնարկ մը նետենք Հին Կտակարանին վրայ:

Իրենց կեանքը Աստուծոյ ու ժողովուրդի ծառայութեան նուիրած մարգարէները ու եբրայեցի ժողովուրդին առաջնորդները նկատուած են Աստուծոյ ծառաները: Աստուծոյ առաջին ծառան դարձաւ Աբրահամ Նահապետը, որուն հաւատքով լեցուն ծառայական կեանքը մղեց եբրայեցի ժողովուրդը դառնալու ուխտի ժողովուրդ (ԾՆ 15.1-6). ապա Յովսէփ, որ իր ժողովուրդին ծառայեց զանոնք կերակրելով սովի եօթը տարիներուն (ԾՆ 50.20-21). Մովսէս

մարգարէն, որ եղաւ իր ժողովուրդը Եգիպտոսի գերութենէն ազատողը եւ անոր Աստուծոյ օրէնքը տուողը (Ել 14). Յեսուն, որուն առաջնորդութեամբ կատարուեցաւ խոստացեալ Քանանու երկրին գրաւումը (Յես 1-21). Դաւիթ մարգարէն, որ Աստուծոյ եւ իր ժողովուրդին միջեւ յաւիտենական ուխտ մը կնքեց (Բ.Թգ 7.18-29). Սողոմոն թագաւորը, որ նախաձեռնեց Երուսաղէմի տաճարին կառուցման (Գ.Թգ 6): Տակաւին կարելի է յիշել Գեդէոն եւ Սամփսոն դատաւորները, Սամուէլ ու Անգէա մարգարէները, Եզեկիա եւ Յովսիա թագաւորները եւ ուրիշներ, որոնք Հին Կտակարանին վկայութեան համաձայն դարձան Աստուծոյ ծառաները ու պատգամաբերները եւ իրենց ժողովուրդը հեռացուցին կռապաշտութենէն ու առաջնորդեցին դէպի աստուածային ճշմարտութիւններով ու բարոյական արժէքներով լեցուն կեանք (Դտ 7-8,15: Ա.Թգ 3.10, 7.3-17: Դ.Թգ 23.1-27: Բ.Մն 29-31: Անգ 1.12-15):

Ծառայութիւնը կը կազմէ Նոր Կտակարանին հիմքը, որովհետեւ Նոր Կտակարանին առանցքը հանդիսացող Աստուծոյ Որդին ինքզինք որպէս ծառայ նկատեց եւ որպէս մարդու ու Աստուծոյ ծառայ ապրեցաւ իր երկրաւոր կեանքը ու իրագործեց իր առաքելութիւնը: Ինչպէս Աւետարանը կը վկայէ՝ «*Մարդու Որդին, ինքն ալ, չեկա՛ւ ուրիշներու կողմէ սպասաւորութիւն ընդունելու, այլ սպասաւորելու եւ իր կեանքը շատերու համար որպէս փրկագին տալու*» (Մր 10.45: Մտ 20. 28): Իր ուսուցումներուն, հրաշքներուն ու առակներուն ճամբով Քրիստոս յատուկ կերպով շեշտեց ծառայութեան կենսական կարեւորութիւնը մարդու կեանքէն ներս: Այսպէս՝

- Բարի Սամարացիին առակով (Ղկ 10.30-37) ու աշակերտներուն ոտքերը լուալով (Յհ 13.1-12), Քրիստոս գործնապէս ցոյց տուաւ ծառայութեան մեծութիւնը:
- Ճշմարիտ ծառայութեան օրինակ դառնալով, Քրիստոս մարդոց թելադրեց ծառայութիւնը նկատելու իրենց կեանքին ուղեգիծը, Աստուծոյ մօտենալու վաւերական ճամբան:
- Իր ծառայական կեանքին օրինակով Աստուծոյ Որդին հրաւիրեց մարդը ծառայելու միայն Աստուծոյ ու աստուածահաճոյ արժէքներուն, ինչպէս կը յիշեցնէ Առաքեալը, թէ՝ ծառայել կը նշանակէ «կուռք»երը ձգելով Աստուծոյ դառնալ (Ա.Թս 1.9):
- Քրիստոս նաեւ յիշեցուց մարդոց, թէ իրաւ ծառայութիւնը պէտք է ըլլայ յօժարակամ ու անսակարկ: Այլ խօսքով, ծառայողը իր ծառայութեամբ պէտք չէ հպարտանայ. ծառայութիւնը պէտք չէ կատարէ մարդոցմէ գալիք վարձատրութեան համար, որովհետեւ ծառան իր ծառայութեան վարձատրութիւնը պիտի ստանայ Աստուծմէ, ինչպէս Աւետարանը կը յիշեցնէ՝ «*անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք*» (Ղկ 17.10):
- Վերջապէս, Քրիստոս մարդուն կողմէ իր նմանին կատարուած ծառայութիւնը կ'ընդունի որպէս իրե՛ն կատարուած ծառայութիւն՝ «*կ'ըսեմ ձեզի, որովհետեւ իմ այս փոքր եղբայրներէս մէկուն ըրիք, ինծի ըրած եղաք*» (Մտ 25.40):

Արդ, Քրիստոս ծառայութիւնը կը նկատէ մարդուն մէջ աստուածային պատկերը վերականգնելու եւ փրկութեան ճամբով մարդը դէպի Աստուած առաջնորդելու ամենէն վաւերական ճամբան: Ճամբայ մը, որ Քրիստոս իր առաքելութեամբ հունաւորեց եւ իր կեանքով ցոյց տուաւ մարդուն: Քրիստոս ըսաւ՝ «*ով որ ուզէ ինծի ծառայել՝ պէտք է ինծի հետեւի, եւ ինծի ծառայողը պիտի ըլլայ հոն՝ ուր ես կը գտնուիմ*» (Յհ 12.26):

## Բ.
## Ծառայութիւնը եկեղեցւոյ հայրերուն ուսուցումներուն մէջ

Առաջին դարու եկեղեցւոյ կեանքին մէջ ծառայութիւնը դարձաւ առանցքային ներկայութիւն: Քրիստոսի անձին օրինակէն ներշնչուած, առաքեալներ ու հաւատացեալներ իրենց առօրեայ կեանքը լեցուցին ու արժեւորեցին բազմատեսակ ծառայութիւններով: Գործք Առաքելոցի մէջ կը հանդիպինք այնպիսի դէպքերու ու երեւոյթներու, որոնք պերճախօս կերպով կը վկայեն եկեղեցւոյ կեանքին ու վկայութեան մէջ ծառայութեան տիրական ներկայութեան մասին: Ս. Ստեփանոս նախավկան տիպարներէն մէկն է առաջին դարու ծառաներէն (Գրծ 6.1-7): Եկեղեցին որքան աճեցաւ, տարածուեցաւ ու կազմակերպուեցաւ, այնքան ծառայութիւնը դարձաւ քրիստոնէական հաւատքին կենսական տարրերէն ու եկեղեցւոյ կեանքին յատկանշական երեւոյթներէն մէկը:

Եկեղեցւոյ հայրերը իրենց քարոզներուն ու պատգամներուն ճամբով յատուկ շեշտ դրին ծառայութեան վրայ՝ յիշեցնելով որ ան պէտք է դառնայ քրիստոնեայ մարդու կեանքին ուղեցոյցը ու գործին մղիչ ուժը: Այսպէս՝

Ընդհանրական եկեղեցւոյ հայրերէն Յովհան Ոսկեբերան կ'ըսէ՝ «*երբ մեր ձեռքերով կը ծառայենք աղքատներուն՝ կ'օրհնուին մեր ձեռքերը. եւ երբ աղքատի մը ծառայելէ ետք մեր ձեռքերը երկինք կը բարձրացնենք՝ Աստուած անմիջապէս կ'ողորմի մեզի եւ կու տայ մեր խնդրանքը*»:

Գրիգոր Նիւսացին կը գրէ՝ «*աննշան ու անպէտք ծառայութիւն չկայ, այնքան ատեն որ զայն կը կատարենք մաքուր սրտով ու եղբայրասիրութենէ մղուած*»:

Օգոստինոս իր կեանքի օրինակով կը վկայէ՝ «*երբ Աստուծոյ կը ծառայես՝ Աստուած չէ որ կը մեծնայ. դո՛ւն է որ կը մեծնաս*»:

Հերոնիմոս կը յիշեցնէ՝ «*իր նմանին ծառայող մարդը՝ նմանակից կ'ըլլայ Քրիստոսի, քանի Քրիստոս ինք եւս ծառայեց մարդոց*»:

Հայ եկեղեցւոյ հայրերէն յիշենք մի քանին.-

Յովհաննէս Մանդակունին կը վկայէ՝ «*եթէ կը ծառայես տկարներուն՝ Քրիստոսի է որ ծառայած կ'ըլլաս. ինք-*

*զինքին ծառայողը չի կրնար Աստուծոյ հաւատարիմ ծառան ըլլալ*»:

Անանիա Նարեկացին կ'ըսէ՝ «*խոնարհ կը նկատուինք երբ մեր նմանը ծառայ չենք դարձներ մեզի, այլ մենք կը ծառայենք անոր*»:

Սարգիս Շնորհալին Ճշմարիտ ծառայութեան ակնարկելով, կը գրէ՝ «*Աստուծոյ ծառան չի կրնար ծառայել մամոնային. իսկ ան որ մամոնային կը ծառայէ՝ Աստուծոյ ծառայութենէն կը հեռացուի*»:

Ստեփանոս Սիւնեցին տիպար ծառան կը բնորոշէ հետեւեալ ձեւով՝ «*ան որ կը ծառայէ Աստուծոյ կամ իր նմանին վարձատրութիւն ձեռք ձգելու ակնկալութեամբ եւ ոչ թէ սէրէն մղուած, վարձկան կը նկատուի*»:

## Գ.
## Ծառայութիւնը Քրիստոնէական հաւատքին էութիւնն է

Նկատի ունենալով Հին ու Նոր Կտակարաններու ուսուցումները, ինչպէս նաեւ ծառայութիւնը իրենց կեանքին մէջ ապրած եւ իրենց փորձառութեան լոյսին տակ մեզի փոխանցած եկեղեցւոյ հայրերուն վկայութիւնները, անհրաժեշտ կը նկատենք կարեւորութեամբ ընդգծել հետեւեալ կէտերը.-

Ա) Ծառայութիւնը կեանքի որակ է: Սոսկ կեանքի իւրայատուկ ձեւ կամ ոճ չէ ծառայութիւնը: Ուրիշին նկատմամբ մեր ունեցած սիրոյն, յարգանքին ու նուիրումին շօշափելի արտայայտութիւնն է ծառայութիւնը: Հետեւաբար, ծառայութիւնը պէտք է ամրօրէն շաղախուի մեր մտածումներուն ու գործերուն հետ, մեր ողջ կեանքին հետ: Ծառայութիւնը երբ կը դառնայ մակերեսային, պատահական ու շահադիտական, կը կորսնցնէ իր ճշմարիտ իմաստը: Մարդու կեանքը ծառայութեամբ միայն կ'իմաստաւորուի ու կը հարստանայ. մարդը ծառայութեամբ կը մեծնայ ու կը դառնայ յարգանքի ու գնահատանքի արժանի: Յակոբոս Առաքեալը կ'ըսէ, թէ հաւատքը առանց գործի, այլ խօսքով՝ ծառայութեան, մեռեալ տարր է (Յկ 2.17,26): Մեծ մտածողներէն Կէօթէ կ'ըսէ՝ «*կ'ապրի այն մարդը, որ ուրիշներուն համար կ'ապրի*»: Նայեցէ՛ք պատմութեան, դիտեցէ՛ք ձեր շուրջը: Ուրիշին համար իրենց ունեցածէն բաժին հանած ու իրենց կեանքն իսկ ընծայաբերած անձերը ապրած են գերեզմանէն անդին: Մեր կեանքը մեզի չի պատկանիր, ան Աստուծոյ պարգեւն է: Արդ, Աստուածատուր մեր կեան-քը ծառայութեան ճամբով պէտք է ապրիլ՝ Աստուծոյ, մեր ազգին, մեր եկեղեցւոյ ու մեր նմանին համար:

Ա՛յս է կեանքը ըմբռնելու ու իրագործելու վաւերական կերպը:

Բ) Ծառայութիւնը կեանքի ճանապարհ է: Երբ ծառայութիւնը դառնայ մեր կեանքին անբաժան ու անբաժանելի բաղադրիչ մասը, ան կը դառնայ մեր կեանքին միակ ճանապարհը: Մեր առօրեայ կեանքին դիմաց, յատկապէս ներկայ աշխարհին մէջ, կան այլազան ու բազմազան ճանապարհներ, որոնք մեզ կ'առաջնորդեն նոր ժամանակներու, Աստուածաշունչի բացատրութեամբ՝ «կռապաշտութեան», կեան-քի այնպիսի վիճակներու, ուր մեր անձը կը դառնայ գերագոյն արժէք: Քրիստոնեայ մարդուն համար, Բարի Սամարացիին օրինակով հիւանդը խնամելը, կարիքաւորին օժանդակելը պէտք է դառնայ իր կեանքին միակ ճանապարհը՝ հեռու ամէն տեսակ լուսարձակներէ ու սպասումներէ: Ֆրանսացի հռչակաւոր գրողներէն Վիքթոր Հիւկօ կը յիշեցնէ թէ՝ «*միտքը կը հարստանայ իր ստացածով, իսկ սիրտը՝ իր տուածով*»: Չհպարտանանք միայն մեր ստացածով կամ ունեցածով, այլ ուրախանանք մեր տուածով, որովհետեւ անոր մէջ Աստուծոյ օրհնութիւնը կայ:

Գ) Ծառայութիւնը կեանքի նպատակ է: Ծառայութիւնը ըլլալով մեր կեանքին ամուր շաղախն ու ճշմարիտ ճանապարհը, պէտք է նաեւ դառնայ մեր կեանքին նպատակը: Վա՜յ այն կեանքին, որ ինքնակեդրոն ու ինքնանպատակ է: Վա՜յ այն անձին, որ իր ամբարած հոգեմտաւոր արժէքները իրեն համար կը պահէ: Վա՜յ այն ունեւորին, որ իր դիզած գումարները իր անձին հաճոյքին ու փառքին համար կը վերապահէ: Չմոռնանք Քրիստոսի պատմած առակը մեծահարուստ երիտասարդին մասին (Մտ 19.16-24): Մեր ունեցածը, այլ խօսքով Աստուծոյ մեզի տուածը, Աստուած ոեւէ ժամանակ կրնայ մեզմէ առնել, Աւետարանի մեծահարուստին նման: Հետեւաբար, մեր ունեցածէն ազգին, հայրենիքին ու եկեղեցւոյ տալը պէտք է դառնայ մեր կեանքին յստակ ուղեցոյցը. եւ՝ այսօ՛ր, որովհետեւ վաղը կրնայ ո՜ւշ ըլլալ: Չմոռնանք երբեք, որ Աստուծոյ Որդին իր ունեցածէն սոսկ բաժին մը չտուաւ մարդուն, այլ՝ ինքզի՛նք տուաւ: Ճշմարիտ քրիստոնեան ան է, որ իր կեանքը իմաստաւորող ու առաջնորդող նպատակ կ'ընտրէ ուրիշին ծառայելը՝ հեռու ամէն տեսակ ցուցական ու փառասիրական երեւոյթներէ: Պօղոս Առաքեալ կը յորդորէ ըսելով՝ ծառայեցէք լուռ ու անսակարկ կերպով, եւ ոչ թէ՝ սոսկ մարդոց գնահատանքը շահելու համար (Եփ 16.6-8, Կղ 3.22-24), եւ կոչ կ'ընէ Քրիստոսի հետեւողներուն՝ «*որքան ատեն որ ժամանակը մեր ձեռքն է՝ բարիք ընենք բոլորին*…» (Գղ 6.10):

## Դ.
## Ծառայութիւնը եկեղեցւոյ կոչումն է

Ծառայութիւնը դարձաւ Քրիստոսի կեանքին ու առաքելութեան հիմքը, ճանապարհը ու նպատակը: Աստուծոյ Որդին ծառայութեամբ իրագործեց իր փրկագործական ծրագիրը: Այսպէ՛ս պէտք է ըլլայ նաեւ Քրիստոսի փրկագործական ծրագիրը շարունակելու կոչուած Քրիստոսի խորհրդական մարմնոյն՝ եկեղեցւոյ կեանքն ու առաքելութիւնը: Հետեւաբար, իր էութեամբ ու կոչումով ծառայութի՛ւն է եկեղեցին: Քրիստոս իր երկրաւոր առաքելութեան աւարտին իր աշակերտները աշխարհ ղրկեց, որպէսզի անոնք ծառայութեան ճամբով Քրիստոսին աշխարհ բերած արժէքներն ու սկզբունքները փոխանցեն մարդոց եւ, Աստուծոյ թագաւորութեան պատգամաբերները դառնան:

Երբ ընդհանուր ակնարկ մը նետենք եկեղեցւոյ պատմութեան վրայ, պիտի տեսնենք, թէ կեանքի ամենէն դժուար պայմաններուն մէջ իսկ եկեղեցւոյ միակ ճամբան ծառայութիւնն է եղած, անոր հզօրագոյն զէնքը ծառայութիւնն է դարձած: Հոն, ուր եկեղեցին հեռու մնացած է ծառայութենէն, ան փաստօրէն հաւատարիմ չէ մնացած իր կոչումին: Հոն, ուր եկեղեցին ծառայութիւնը դարձուցած է իր կեանքին առանցքը ու նպատակը, ան դարձած է հզօր ու կենսունակ: Հոն, ուր եկեղեցին իր հեղինակութիւնը տեսած է այլ տեղ եւ ոչ թէ ծառայութեան մէջ, ժողովուրդը հեռացած է եկեղեցիէն: Հոն, ուր եկեղեցին ինքզինք նոյնացուցած է ժողովուրդի ցաւին ու տառապանքին հետ՝ դառնալով ծառայական ներկայութիւն ժողովուրդի կեանքէն ներս, ժողովուրդը ամրօրէն կառչած է եկեղեցւոյ:

Հայ եկեղեցին միշտ հաւատարիմ մնացած է իր քրիստոսատուր կոչումին: Դիտեցէ՛ք մեր եկեղեցւոյ կեանքի ճանապարհը՝ Հայաստանէն մինչեւ Կիլիկիա ու ապա Սփիւռք: Մեր կեանքի խաւար ճամբաներուն վրայ, մեր եկեղեցին Աւետարանին լոյսն է սփռած՝ ծառայելով մեր ժողովուրդին. մեր պատմութեան դժնդակ ժամանակներուն, մեր եկեղեցին իր ժողովուրդի կողքին է եղած, դարձեալ ծառայելով մեր ժողովուրդին:

Այսօր եւս, հայ եկեղեցին պէտք է ծառայութիւնը դարձնէ իր կեանքի միակ ճանապարհը, իր առաքելութեան միակ նպատակը: Քրիստոս իր հեղինակութիւնը կերտեց ծառայելով: Մեր եկեղեցին, ինչպէս անցեալին այսօ՛ր եւս, ինքզինք պիտի արժեւորէ իր կոչումին հաւատարմութեամբ՝ միայն ծառայելով: Այսօր մեր ժողովուրդին կեանքը այնպիսի սուր կարիքներով, ահաւոր դժուարութիւններով, խոր մտահոգութիւններով ու լուրջ մարտահրաւէրներով է լեցուն, որոնց դիմաց մեր եկեղեցին չի կրնար անտարբեր մնալ, դիտողի կամ լսողի կրաւորական վիճակի մէջ ըլլալ: Հեռու ամէն տեսակ մակերեսային, պատա-հական ու ցուցական ձեւերէն, մեր եկեղեցին կոչուած է ծառայական այնպիսի մօտեցումներ որդեգրել, այնպիսի ձեւեր մշակել, որոնք ըլլան ազդու ու համահունչ՝ տուեալ պայմաններու մեր ժողովուրդի կարիքներուն ու սպասումներուն:

## Ե.

## Ծառայութիւնը համայնքային ու ղեկավարական կառոյցներուն դարպաւորութիւնն է

Ծառայութիւնը սոսկ կրօնական կամ բարոյական պարտաւորութիւն չէ. ան համամարդկային արժէք է ու անհրաժեշտութիւն: Հին դարերէն սկսեալ քաղաքակրթութիւններ ու մշակոյթներ, մտածողներ ու արուեստագէտներ յատուկ կերպով ընդգծած են ծառայութեան կարեւո-րութիւնը ընկերութեան կեանքին մէջ: Իսկ ներկայ ժամանակներուն, միջազգային հռչակագիրներ եւ ընկերութեան կեանքին մէջ գործող կազմակերպութիւններ ու միութիւն-ներ իրենց կանոնագրութիւններու ճամբով կարեւորութեամբ կը շեշտեն ծառայութեան հրամայականը: Արդարեւ, մարդկային ընկերութիւնը փոխադարձ պարտաւորութիւններով իրարու առնչուած անհատներու, խմբաւորումներու ու կառոյցներու ամբողջութիւն մըն է, եւ զայն դէպի բարելաւում ու յառաջդիմութիւն առաջնորդող հզօր գործօնը ծառայութիւնն է:

Նո՛յնն է պարագան մեր ազգին: Մեր համայնքային կեանքէն ներս կը գործեն զանազան նպատակներու կենսագործման լծուած բազմաթիւ կառոյցներ: Իւրաքանչիւր կառոյցին հիմնական նպատակը մեր ժողովուրդին ծառայել է: Ա՛յս հայեցակէտով հարկ է արժեւորել մեր կազմակերպութիւններուն ու միութիւններուն աշխատանքը: Ուրեմն կառոյց, երբ մեր ժողովուրդին ծառայելը չի նկատեր որպէս իր գոյութեան պատճառը, իր գործունէութեան միակ ուղեցոյցը ու նպատակը, փաստօրէն իրաւունք չունի գոյութիւն ունենալու մեր հաւաքական կեանքէն ներս:

Նո՛յնը հարկ է ըսել պետութեան պարագային: Մեր պետութեան նպատակը, ինչպէս ոեւէ պետութեան, ծառայել է իր ժողովուրդին: Պետութիւն մը ո՛չ ինքնագոյ է եւ ո՛չ ալ ինքնանպատակ: Պետութեան ղեկավարները կ'ընտրուին ժողովուրդին կողմէ, ժողովուրդին ծառայելու համար՝ համարատուութեամբ ու պատասխանատուութեամբ: Ուրեմն պետական իշխանութիւն, որ իր օրէնսդրական, գործադիր եւ իրաւական կառոյցներու ճամբով կը թերանայ ժողովուրդին ծառայելու իր պարտաւորութեան մէջ, ընդվզում եւ հակազդեցութիւն կը յառաջացնէ ժողովուրդին մօտ: Մեր սպասումն է, որ հայրենի մեր ժողովուրդին ամբողջական նուիրումով ծառայելը միշտ մնայ հայրենի պետութեան պատասխանատուներուն առաջնահերթ պարտաւորութիւնը:

Արդ, նուիրեալ ու անշահախնդիր ծառայութեամբ է որ եկեղեցին կը պայծառանայ, կառոյց մը կը հզօրանայ, համայնք մը կը կազմակերպուի, հայրենիքը կը յառաջդիմէ ու ազգ մը քաջութեամբ կը դիմագրաւէ պատմութեան բոլոր տեսակի փոթորիկները:

## Զ.

## Ծառայութիւնը իւրաքանչիւր հայուն դարպքն է ու դափիւր

Ոեւէ կրօնի կամ ազգի պարագային, իր նմանին, ընտանիքին, դրացիին, համայնքին, կրօնին, ազգին ու հայրենիքին ծառայելը բարոյական պարտաւորութիւն է, հրամայական անհրաժեշտութիւն է, անսակարկելի պարտք է: Աշխարհի վրայ ապրող իւրաքանչիւր մարդ իր ինքնութիւնը ունի: Ինքնութիւն կ'ենթադրէ պատկանելիութիւն. պատկանելիութիւն կը նշանակէ հաւատարմութիւն. իսկ հաւատարմութիւնը կը պահանջէ ծառայութիւն: Բնականաբար, ծառայութեան կերպերը, մօտեցումները, տարողութիւնը, բնոյթն ու առաջնահերթութիւնները կրնան փոխուիլ: Ոմանք իրենց մտաւոր կարողութիւնները ի սպաս կը դնեն իրենց պատկանած հաւաքականութեան առաւել ծաղկման, ուրիշներ՝ հոգեկան կարողութիւնները, եւ տակաւին ուրիշներ՝ իրենց նիւթական կարելիութիւնները: Աս-

տուած մարդը զանազան շնորհներով ու բարիքներով օժտած է: Աստուծոյ սպասումն է, որ մարդը իր շնորհներն ու բարիքները օգտագործէ իր անձին նեղ պարունակէն անդին, ուրիշներո՛ւն համար: Ա՛յսպէս կը պատուիրէ Աստուածաշունչը: Արդարեւ, ուրիշին ծառայելը Աստուծոյ ծառայել է, ինչպէս կը յիշեցնէ մեզի Քրիստոսի Աւետարանը: Ա՛յս գիտակցութեամբ պէտք է մօտենանք ծառայութեան:

Աստուծոյ ու մարդուն ծառայ դարձած Քրիստոս միշտ կը յիշեցնէ թէ՝ «*ով որ ինծի կը հաւատայ թող խաչը առնէ եւ ետեւէս գայ*» (Մտ 16.24): Քրիստոսի հաւատալ կը նշանակէ դառնալ Բարի Սամարացի: Քրիստոսի հաւատալ կը նշանակէ՝ Աստուծոյ մեզի տուածէն բաժին մը հանել մեր նմանին, մեր եկեղեցւոյ, ազգին ու հայրենիքին: Պատմութեան ամենէն դաժան պայմաններուն մէջ մեր ժողովուրդը հաւատարիմ մնաց քրիստոնէական հաւատքի սկզբունքներուն ու արժէքներուն, նո՛յնիսկ՝ իր արեան գնով: Մեր ժողովուրդի կեանքին մէջ եղան անձեր, որոնք բարձրագոյն աստիճանի նուիրումով ու հաւատարմու-թեամբ ծառայեցին մեր ժողովուրդին, հայրենիքին ու եկեղեցւոյ՝ ոմանք իրենց հոգեմտաւոր ստեղծագործութեամբ, ուրիշներ նիւթական բարերարութեամբ, իսկ ուրիշներ իրենց արիւնը թափելով ու դարձան սուրբեր, հերոսներ, անանձնական ծառայութեամբ իրենց մեծութիւնը կերտած բարերարներ ու անմահներ:

Այսօր մեր ազգը, հայրենիքը, եկեղեցին ու գաղութները ծով կարիքներու դիմաց կը գտնուին: Ո՞վ պիտի հոգայ մեր կարիքները. ո՞վ պիտի ամոքէ մեր ցաւերը. ո՞վ լուծում պիտի գտնէ մեր մտահոգութիւններուն, եթէ ոչ մեր ժողովուրդի զաւակները, յատկապէս անոնք, որոնք կը վայելեն Աստուծոյ իրենց պարգեւած հոգեկան, մտաւոր թէ նիւթական բարիքները: Մեր ունեցած բարիքներէն գէթ մաս մը ազգին տրամադրութեան տակ դնելը իւրաքանչիւր հայուն պարտքն է ու միաժամանակ՝ պատիւը: Ազգին, հայրենիքին ու եկեղեցւոյ յաւերժութիւնը երաշխաւորող այս գերագոյն արժէքներու ծառայութեան գանձանակին մէջ, Աւետարանի բառերով՝ մեր «այրիի լուման» դնելը իւրաքանչիւր հայուն սրբազան կոչումն է: Եկէ՛ք, սիրելի հայորդիներ, տէ՛ր կանգնինք մեր նուիրական պարտքին, որպէսզի արժանի դառնանք աստուածային օրհնութեան:

* * *

Արդ, ներկայ տարին «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ» հռչակելով, առաջին հերթին կ՚աղօթենք այն բոլոր հայորդիներու հոգիներուն համար, որոնք անցեալին զանազան ձեւերով ու հանգամանքներով ծառայեցին մեր ժողովուրդին: Ինչպէս անմահանուն բանաստեղծներէն Յովհաննէս Թումանեան կ՚ըսէ՝ «*մահը մերն է մենք մահինը, մարդու գո՛րծն է միշտ անմահ*»: Արդարեւ, մեր ազգին, հայրենիքին ու եկեղեցւոյ ծաղկման իրենց մասնակցութիւնը բերող հայորդիները՝ մեր հաւաքական կեանքին մէջ կը դառնան յիշատակութեան ու գնահատանքի արժանի անձեր:

Ներկայ տարին «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ» հռչակելով, կ՚ուզենք յիշեցնել մեր ժողովուրդի զաւակներուն, թէ անհրաժեշտ է առաւել նուիրումով գործօն մասնակցութիւն բերել մեր ազգին ծառայելու վսեմ գործին, այն քաջ գիտակցութեամբ, որ Աստուած պիտի օրհնէ մեր ծառայութիւնը, եւ պատմութիւնը միշտ յարգանքով պիտի յիշէ ո՛չ թէ մեր ունեցածը՝ այլ մեր տուածը, ո՛չ թէ մեր գեղեցիկ խօսքերը՝ այլ բարի գործերը: Պատմութեան փոշիներուն մէջ կը կորսուին անոնք, որոնք միա՛յն ունենալու համար պայքարած են: Պատմութեան մայր էջին վրայ կը մնան միա՛յն անոնք, որոնք տուած են ի խնդիր գերագոյն արժէքներու կենսագործման ու յաւերժացման եւ սրբազան նպատակներու ու վեհ իտէալներու իրականացման: Ա՛յս կը վկայէ պատմութիւնը:

2016 տարին ներկայ Հայրապետական Գիրով «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ» հռչակելով, կոչ կ՚ուղղենք մեր Թեմակալ Առաջնորդներուն, Ազգ. իշխանութեանց, համայնքային, կուսակցական, ազգային, բարեսիրական, կրթական, մարզական ու մշակութային միութիւններուն ու կազմակերպութիւններուն, լուսարձակի տակ բերելու ծառայութեան կենսական կարեւորութիւնը մեր կեանքէն ներս եւ զանազան ձեռնարկներու ճամբով՝

- Գնահատելու գաղութին ծառայութիւն մատուցած ազգայինները:
- Յիշեցնելու, յատկապէս երիտասարդներուն, ազգին ծառայելու հրամայականը՝ մեր հաւաքական կեանքին իրենց գործօն մասնակցութեամբ:
- Կոչ ուղղելու զանազան կարողութիւններով ու կարելիութիւններով օժտուած մեր ազգայիններուն, որ օգտակար հանդիսանան գաղութի ծաղկման, եկեղեցւոյ պայծառացման, հայրենիքի հզօրացման ու ազգի յառաջդիմութեան նպաստող ծրագիրներուն ու աշխատանքներուն:

Այս մտածումներով ու սպասումներով անգամ մը եւս կ՚օրհնենք մեր ժողովուրդի սիրելի զաւակները ու կ՚աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ առողջութեան, յաջողութեան ու երջանկութեան բարիքներով հարստացնէ մեր ժողովուրդի զաւակներուն կեանքը:

Հայրական ջերմ սիրով,
Աղօթարար՝
**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**
**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

1 Յունուար, 2016
Անթիլիաս, Լիբանան

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԸ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ

# ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ՝ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ ՄԱՐԴՈՒՆ



Աստուծոյ Որդւոյն ծնունդը Բեթղեհէմի մէջ Յակոբոս Առաքեալ կը բնորոշէ որպէս՝ վերածնունդը մարդուն. «*Աստուած կամեցաւ մեզ վերստին ծնիլ*» (Յկ 1.18): Քրիստոնէական հաւատքին առանցքը կազմող Առաքեալին այս վկայութեան լոյսին տակ, սիրելի հայորդիներ, եկէք նայինք Աստուածաշունչին:

Արդարեւ, Աստուծոյ կամքը սկիզբն է ու մղիչ ուժը Աստուծոյ յայտնութեան: Աստուած կամեցաւ տիեզերքը ստեղծել. եւ ստեղծեց: Աստուած կամեցաւ ստեղծել մարդը, որպէս տիեզերքի պահապան եւ իրեն գործակից. եւ ստեղծեց՝ մարդը օժտելով բանականութեան ու ինքնիշխանութեան շնորհներով ու միաժամանակ յիշեցնելով անոր իր ապրած կեանքին ու կատարած գործերուն համար իր Արարիչին համարատու ըլլալու պարտաւորութիւնը:

Հակառակ այն իրողութեան, որ մարդը շահագործեց Աստուծոյ կողմէ իրեն տրուած լայն կարելիութիւնները՝ զանոնք օգտագործելով իր փառքին ու հաճոյքին համար. ինչպէս նաեւ հակառակ այն իրողութեան, որ մարդը իր կեանքին ու կատարած գործին համար մերժեց հաշուետու դառնալ Աստուծոյ, սակայն Աստուած, որպէս գթասիրտ հայր, միշտ բարին կամեցաւ մարդուն համար: Աստուած իրմէ հեռացած մարդուն մօտեցաւ, իր սէրը մերժած մարդը սիրեց, եւ մոլոր ճամբաներէն քալող մարդը հրաւիրեց քալելու ճշմարիտ ճամբէն:

Սակայն, հակառակ մարդը իր անկեալ վիճակէն ազատագրելու Աստուծոյ բարի կամեցողութեան, մարդը շարունակեց մնալ մեղանչական ու մերժողական ընթացքի մէջ: Եւ երկնային ի՜նչ պարզեւ եւ անհո՜ւն սէր. մարդուն Երկնաւոր Հայրը այնքա՜ն սիրեց իր անառակ զաւակը, որ նոյնի՛սկ իր Միածին Որդին աշխարհ ղրկեց որպէսզի մեղաւոր մարդը վերստին ծնելու երկնային շնորհքին արժանանայ (Յհ 3.3,16):

Անհրաժեշտ է հետեւեալ ընդգծումները կատարել.-

Ա) Աստուծոյ Որդւոյն ծնունդին նպատակը մարդուն վերածնունդն է: Քրիստոսի ճամբով Աստուած դարձեալ, եւ այս անգամ մարդկային բնութիւնը իւրացնելով, մօտեցաւ մարդուն, որպէսզի Աստուծմէ հեռացած մարդը Աստուծոյ մօտենայ, անառակ դարձած մարդը իր երկնաւոր Հօր որդեգիր զաւակը դառնայ: Քրիստոսի ճամբով Աստուած մարդ դարձաւ որպէսզի, եկեղեցւոյ հայրերուն բացատրութեամբ, մարդը աստուածանայ, այլ խօսքով՝ իր աստուածատուր բնութիւնը վերականգնէ: Բեթղեհէմը Աստուծոյ էջքն է մարդուն եւ մարդուն ուղղուած երկնային հրաւէր՝ բարձրանալու առ Աստուած: Բեթղեհէմը Աստուծոյ ու մարդուն հանդիպումն է: Բեթղեհէմը Որդւոյն ծնունդն է ու միաժամանակ մարդուն ուղղուած կոչ մը՝ վերստին ծնելու աստուածային միջամտութեամբ, այլ խօսքով՝ վերամարդանալու:

Բ) Աստուծոյ Որդւոյն ծնունդին նպատակը մարդուն փրկութիւնն է: Դրախտէն վտարուած մարդը շարունակած էր իր մեղապարտ կեանքը, հակառակ Աստուծոյ մարգարէներուն բազմիցս յիշեցումներուն: Մարդը դարձած էր իր փառքին ու հաճոյքին, իր անձին գերին: Անձնակեդրոն կեանքը մերժումն է աստուածակեդրոն կեանքին: Առանց Աստուծոյ ներկայութեան մարդու կեանքը դատապարտուած է մահուան: Բեթղեհէմի մէջ Աստուծոյ Որդին կը մարդեղանար մարդուն կեանքը Աստուծոյ ներկայութեամբ իմաստաւորելու ու մարդը առաջնորդելու դէպի փրկութիւն տանող ճամբան: Արդ, Քրիստոսի ծնունդը մարդուն վերածննդեան աւետիսն է եւ հրաւէրը: Եւ մարդուն վերստին ծնունդը՝ մարդը դէպի փրկութիւն առաջնորդող երաշխիքը:

Ահա վկայութիւնը Աստուածաշունչին: Ի՞նչ է այս

անհերքելի վկայութենէն եկող պատգամը մեր ժողովուրդի զաւակներուն: Ի՞նչ կ'ըսէ այսօր՝ մարդուն վերածնունդ պարգեւելու առաքելութեամբ Բեթղեհէմի մէջ ծնած աշխարհի Փրկիչը: Եկէ՛ք, լսենք խօսքը Աստուծոյ Որդւոյն.-

Քրիստոս կ'ըսէ՝ ես աշխարհ եկայ որպէսզի կեա՛նք ունենաք (Յհ 14.6) վաւերական ու յաւիտենական կեանք, Աստուծոյ ներկայութեամբ շաղախուած կեանք, քրիստոսատուր ու քրիստոսակեդրոն կեանքը: Ինքնաքննութեան ճամբով հարց տանք մեր անձերուն. արդեօք ունի՞նք այդ կեանքը: Քրիստոսի աշխարհ բերած կեանքը ունենալու համար ի՞նչ կ'ընենք. հաւատքով, սիրով ու ծառայութեամբ թրծա՞ծ ենք մեր կեանքը: Առաքեալը կ'ըսէ՝ «*ինծի համար կեանքը Քրիստոս է*» (Փլպ 1.21), հետեւաբար, «*ես չէ որ կ'ապրիմ, այլ՝ Քրիստոս է որ կ'ապրի իմ մէջս*» (Գղ 2.20): Քրիստոս կ'ապրի՞ մեր մէջ. ներկա՞յ է Ան մեր մտածումներուն, խօսքերուն ու գործերուն մէջ…:

Խաւար աշխարհին դիմաց Քրիստոս կ'ըսէ՝ ես եմ լոյսը աշխարհին (Յհ 8.12): Մարդը դէպի խաւարային մտածումներ ու գործեր առաջնորդող եւ մարդուն կեանքը խաւարով շրջապատող ներկայ «լուսաւոր» աշխարհին մէջ կ'անդրադառնա՞նք արդեօք, որ Բեթղեհէմէն ճառագայթող լո՛յսն է աշխարհի ճշմարիտ լոյսը, կեանար լոյսը: Պատրա՞ստ ենք Քրիստոս-լոյսով լեցուելու ու լուսաւորելու մեր կեանքն ու շրջապատը: Առանց Քրիստոսի լուսափայլ ներկայութեան խաւար է մեր կեանքը:

Նիւթեղէն առաւելութիւններով յղփացած ներկայ ընկերութեան Քրիստոս կը յիշեցնէ՝ թէ ի՛նքն է աշխարհի ճշմարիտ հացը, կեանքի հացը (Յհ 6.35), ոգեղէն հացը: Իր արիւնը թափելով խաչին վրայ եւ յարութեամբ մահը յաղթելով Քրիստոս աշխարհին ճշմարիտ հացը դարձաւ: Արդեօք երկիւղածութեամբ ու ապաշխարութեամբ մօտենալով կը ճաշակե՞նք Քրիստոս-հացը, անով պաշտպանուելու կեանքի վտանգներուն դիմաց, անով զինուելու չարի յարձակումներուն դիմաց:

Մեր կեանքին առջեւ բացուած բազմազան ճամբաներուն դիմաց Քրիստոս կ'ըսէ՝ ես եմ ճշմարիտ ճամբան (Յհ 14.6): Իր կեանքի ճշմարիտ ճամբան կորսնցուցած մարդուն, Քրիստոս ցոյց կու տայ դէպի վերստին ծնունդ ու փրկութիւն տանող ճամբան: Արդեօք հաւատարմօրէն կը քալե՞նք Քրիստոս-ճամբայէն խաչը մեր ուսին հետեւելով իր թելադրութեան (Մտ 10.38):

Ներկայ աշխարհին մէջ մեր դիմաց գտնուող այլազան դռներուն դիմաց Քրիստոս կ'ըսէ՝ ես եմ դուռը. ան որ այս դռնէն ներս մտնէ պիտի փրկուի (Յհ 10.9): Պատրա՞ստ ենք մեր քայլերը հաւատքով ամրացած ուղղելու դէպի Քրիստոս-դուռը ու զայն թակելու ըսելով՝ «*բա՛ց մեզ Տէր*…»:

Այո՛, սիրելի հայորդիներ, Բեթղեհէմի ճամբով Քրիստոս մեզի համար յաւիտենական կեանք է, ճշմարիտ լոյս, կենարար հաց, վաւերական ճամբայ ու կեանքի դուռ՝ մեզ դէպի վերստին ծնունդ առաջնորդող: Քրիստոսը հալածած եւ ապա Քրիստոսի հաւատքով հզօրացած ու անոր Աւետարանին մեծագոյն քարոզիչը դարձած Պօղոս Առաքեալ կը յիշեցնէ մեզի թէ՝ ան որ «*Քրիստոսի միացած է՝ նոր արարած է*» (Բ. Կր 6.17): Քրիստոսի միանալու, Քրիստոսով վերստին ծնունդին արժանանալու համար պէտք է Բեթղեհէմի մէջ ծնող Աստուծոյ Որդին ընդունինք եւ մեր կեանքով ու գործով զինք դաւանինք որպէս մեր կեանքին լոյսը, հացը, ճամբան, դուռը, այլ խօսքով՝ մեր կեա՛նքը:

*

* *

Աստուածայայտնութեան հոգեպարար տօնին առիթով Հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք Հայաստանի Հանրապետութեան Վսեմաշուք Նախագահ Տիար Սերժ Սարգսեանը, մաղթելով իրեն արդիւնաշատ հայրենանուէր գործունէութիւն: Եղբայրական ջերմ սիրով կ'ողջունենք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հայցելով Ամենաբարին Աստուծմէ, որ իրեն շնորհէ եկեղեցաշէն իրագործումներով հարուստ երկար գահակալութիւն: Նո՛յն սիրով կ'ողջունենք Երուսաղէմի Հայոց Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեանը եւ Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեանը, մաղթելով իրենց եկեղեցանուէր ծառայութեամբ լեցուն գահակալութիւն: Հայրական անհուն սիրով կ'ողջունենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ենթակայ մեր Թեմակալ Առաջնորդները, հոգեւորական դասը, ազգային իշխանութեանց մարմինները եւ մեր սիրելի ժողովուրդին զաւակները, աղօթելով որ Բեթղեհէմի Փրկիչը առաջնորդ ու պահապան ըլլայ իրենց:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**
**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

6 Յունուար, 2016
Անթիլիաս, Լիբանան



# ԱՆՍԱՀՄԱՆԵԼԻՆ ՍԱՀՄԱՆՒԵՑ

*«Թէեւ Աստուած էր բնութեամբ,*
*եւ Աստծուն հաւասար լինել հուչակւելը*
*Նրա համար Աստծու պատիւը*
*յափշտակել չէր նշանակում,*
*բայց կամովին*
*Ինքն Իրեն մերկացրեց այս պատւից՝*
*ծառայական մեր բնութիւնն Իր վրայ վերցնելով,*
*եւ մարդկանց պէս եղաւ*
*ու մարդկային կերպարանքով ճանաչւեց»:*
(Փլպ 2.6-7)

2016 թւականն, Նոր Տարւայ 6-րդ օր, Սուրբ Ծնունդ...

Տօնն է Յիսուս Քրիստոսի Ծննդեան.

Տօնը՝ Անսահմանելիին, որ սահմանի մէջ եկաւ,

Տօնը՝ Անպարագրելիին, որ պարագրւեց...

Ծննդեան մի տօն, որ տարբեր է բոլոր ծնունդներից. Խորհուրդ խորին է:

Նոր Տարւայ առաջին այս օրերին բոլորս էլ ուրախ եւ գոհունակ սրտերով ենք միմեանց ողջունում, առատացած ամէն մէկս մի նւէրով: Իսկ այս առաւօտ, անխտիր բոլորս էլ աւելի ենք հարստացած՝ ստացած լինելով ամենամեծ նւէրը մարդկութեան ողջ պատմութեան մէջ. մի նւէր, որ հաւասարապէս բաշխւում է բոլորիս անխտիր, եւ այն տարբեր է ստացւած միւս բոլոր նւէրներից: Աստուած մեզ տալիս է ամենաթանկարժէք նւէրը՝ Իր Միածին Որդին, որ բնութեամբ Աստուած էր՝ համագոյակից Հօրը՝ Իր բոլոր յատկանշերով:

Յիսուս Քրիստոսի Ծնունդն ամենագեղեցիկ վկայութիւնն է մի մեծ ճշմարտութեան, որ նւէրի իսկ իմաստն ու իսկութիւնն է՝ տրւել՝ Իր փառքը առատաբաշխելով, ընծայւել՝ նւիրականը ընծայաբերելով, ծնւել՝ ծնունդը կենսագործելով: Քրիստոսը կամովին Ինքն Իրեն մերկացրեց, մերկացաւ Իր աստուածային փառքից, խոնարհեց, եւ յանձն առաւ մարդկային բնութիւնն ու մարդկային պայմանները եւ «ծառայի» կերպարանք հագաւ ու հնազանդւեց Հօր կամքին մէկ նպատակով՝ մեզ ամբողջապէս ազատելու մեղքի տիղմից: Այս ընծայական կեանքից, սակայն, երբէք չպակասեց աստուածային փառքը, որ ծնունդով լուսաւորեց մի ամբողջ կեանք՝ նոր իմաստ տալով մարդկութեան կեանքին:

Եթէ համատեսական Աւետարանները բացենք եւ կարդանք Յիսուս Քրիստոսի ծնունդի պատմութիւնը, մեր առջեւ բացւելու է մի պատմութիւն, որ կարելի է կոչել Մեծ Աւետիսի պատմութիւն, Գաբրիէլ հրեշտակապետի միջոցով բարի լուրի աւետումը Սուրբ Կոյսին, որ *«Աստուած քեզ հետ է…Դու արժանացար Նրա շնորհին»* (Ղկ 1.28,30). հրեշտակների բարի լուրի աւետիսը հովիւներին, որոնք դաշտերում ականջալուր էին՝ *«Ծնուեց ձեր Փրկիչը, որ օծեալ տէրն է»* (Ղկ 2.11). Երկնակամարի շողարձակ աստղի բարի լուրի աւետիսը արեւելքի մոգերին, որոնց ճամբան հասաւ Բեթղեհէմ՝ երկրպագելու նոր Արքային, արդարութեան Արեգակին, յաւիտենական Թագաւորին, Անսահմանելիին, որ զարմանահրաշօրէն խանձարուրի մէջ փաթաթւած էր, մսուրի մէջ դրւած եւ ժամանակի մէջ սահմանւած՝ պալատ, արքունիքի փոխարէն՝ կենդանիների բնակավայրում հանգստացող:

Արդարեւ, կարելի է այս բոլորի մասին ընդմիշտ ընթերցել, անդադար խօսել, երկար մտորել, եւ զարմանալու հիանալ գողտրիկ, բայց ամենընծայ այս հիահրաշ Ծնունդի պատմութեամբ, որ այսօր մեր առջեւ բացւում է խորհրդածական երկու մտածում, որոնք երկու հիմնական հարցերից են բխում.

Ա) Ինչպիսի՞ն էր Աստուածորդու բնութիւնը:

Յիսուս Քրիստոսն աստուածային բնութիւն ունէր, նոյն բնութիւնը, որ Հայրը ունէր, եւ սակայն ժամանակի մէկ կէտում, Նա խոնարհեց ու մարդեղացաւ, ծնւելով Սուրբ

Կոյս Մարիամից: Չկայ աւելի գեղեցիկ բացատրութիւն քան Առաքեալի բառերի ամբողջութիւնը, իբրեւ բանալի, որ բացում է մեր մտքերը. «*Քրիստոսն Ինքը տեսանելի պատկերնէ աներեւոյթ Աստծու*» (Կղ 1.15)՝ Անսահմանելիին, որ սակայն սահմանուեց մարդկային մարմնի մէջ: Այո՛, Նա մարդեղացաւ, ժամանակաւորապէս մերկացաւ Իր աստուածային փառքից, բայց մնաց Աստուած եւ ստեղծիչը ամէն ինչի:Արարչագործութեան տէրն իջաւ երկիր, արաչագործութեան իմաստութիւնն իջաւ մարդկային կեանք, որ նորից արարի, նորից վերահաստատի կորու-սեալ դրախտը՝ մարդուն վերադարձնելով յաւիտենական բարութեան ու երջանկութեան օթեւան, այնպէս՝ ինչպէս արարչութեան բարի օրերին, որովհետեւ «*Նրա գոյութիւնը ամէն բանից առաջ է եւ ամէն բան Նրանով է գոյացել*» (հմմտ. Յհ 1.2-3): Այս փառաւոր ծնունդը յաւիտենական է իր լոյսով, փառքով. այն լոյսն ու փառքը, որ մարդկային աչքը տեսաւ եւ մարդկային ձեռքերը շօշափեցին, եւ դարձեալ առաքեալի իսկ բառերով՝ «*Որդին, որ Հօր փառքի լոյսն է եւ ճշգրիտ պատկերը Նրա էութեան, որ խօսքի զօրութեամբ պահում է տիեզերքը, Իր անձով մեր մտքերը սրբելուց յետոյ նստեց, երկնքում, Աստծու՝ գերագոյն զօրութեան աջ կողմում*» (Եբր 1.3):

Բ) Ինչո՞ւ Աստուածորդին մարդեղացաւ:

Հարցն ինքնին մարդկութեան պատմութեանամեծնամեծ խորհուրդն է՝ ոմանց համար անըմբռնելի ու անիմանալի, իսկ ուրիշների համար հաւատքի վկայութեան առհաւատչեայ եւ ճշմարտութեան իմացում: Այո՛, նա ծնուեց. այո՛, Նա իբրեւ Արքայ ծնուեց. այո՛, Նա մարդեղացաւ, բայց ոչ որպէս սովորական թագաւոր, Նրա ծննդի լուրը սովորական արքունիքում չաւետուեց՝ այնտեղից աշխարհին աւետելու, այլ մէկընդմիշտ աշխարհին աւետուեց, եւ աշխարհից հասաւ ծննդավայր. աւետիսը մենաշնորհը չդարձաւ բժիշկների, դայեակների, պալատականների, այլ մի կոյսի, հովիւների եւ իմաստունների: Խորհո՞ւրդը այս մարդեղութեան. մի ծնունդ, որ տրւում է, ո՛չ թէ մի երկրի համար, ո՛չ թէ մի ընտանիքի կամ մի թագաւորութեան, այլ՝ ամբողջ աշխարհին, ամբողջ մարդկութեան եւ Աստծու թագաւորութեան: Ծնուեց մի Մանուկ, ում անուան մէջ է իմաստը աստուածային ծրագրի՝«*Դրա համար իսկ Նա (Աստուած) օծեց Ինձ, ուղարկեց Ինձ՝ աւետարանելու աղքատներին, բժշկելու սրտով բեկւածներին, գերիներին ազատութիւն քարոզելու եւ կոյրերին՝ տեսողութիւն*» (Ես 61.1): Այս բոլորը անելու համար անհրաժեշտ էր մարդ դառնալ՝ մարդուն մարդկայնօրէն սովորցնելու, անհրաժեշտ էր սահմանի մէջ մտնել՝ մարդկօրէն Աստուածութիւնը ցոյց տալու, որ Աստուած երկնքում է, միաժամանակ նաեւ՝ երկրում: Նրա թագաւորութիւնը յաւիտենական է եւ կարող է միայն հաստատուել մարդկային հոգիների եւ սրտերի մսուրի մէջ. «*Ահա թէ ինչու Քրիստոսն ամէն ինչով պէտք է նման լինէր իր եղբայրներին, որպէսզի կարողանար ողորմած եւ վստահելի մի քահանայապետ լինել Աստծու մօտ՝ Աստծու ժողովրդի մեղքերը քաւելու համար*» (Եբր 2.17):

Մի խօսքով՝ Յիսուս Քրիստոսը, որպէս Աստուած մարդեղացաւ, որպէսզի կարողանայ մեզ բարձրացնել Աստծուն:

Յիսուս Քրիստոսը մարդեղացաւ, որպէսզի Իր կեանքն ընծայաբերի եւ մեզ ազատի, սրբի եւ յաւիտենական կեանք պարգեւի:

Այս հրաշափառ Ծնունդը կոչ է եւ աստուածային պատգամ՝ այն մեծ սիրուց բխող, որ յաւիտենական ուխտն է եւ խոստումը Աստծու՝ «Էմմանուէլ», Աստուած մեզ հետ...

Այո՛, այսօր մի անգամ եւս լսեցինք Հրաշափառ Ծննդեան աւետիսն ու աստուածային պատգամը, այնպէս՝ ինչպէս հովիւներն ու մոգերը լսեցին: Սակայն, բաւարար չէ միայն լսել այդ բարի լուրը՝ աւետիսը: Այո՛, կարեւոր է ստանալը, ունենալը, բայց առաւել կարեւոր է այն տարածելը:

Եկէ՛ք միասնաբար տարածենք այդ բարի լուրը՝

**Քրիստոս ծնուեց եւ յայտնուեց.**
**Ձեզ եւ մեզ մեծ աւետիս...**

*Սիրոյ ջերմ ողջոյնիւ,*

*Աղօթարար՝*

***Բաբգէն արք. Չարեան***

*Առաջնորդ Սպահանի հայոց թեմի*

2016.01.06

***Նոր Ջուղա***

## ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ 10-ՐԴ ԾՐՋԱՆՈՒՄ, ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ ԺՈՐԺԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԸ ԵՒ ԴԿՏՐ. ԿԱՐԷՆ ԽԱՆԼԱՐԵԱՆԸ

***

## ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ 10-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՍՊԱՀԱՆԻ ԵՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ԸՆՏՐՒԵՑ ԺՈՐԺԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԸ



Ուրբաթ՝ փետրուարի 26-ին, Իրանի Իսլամական Խորհրդարանի 10-րդ նստաշրջանի ընտրութիւնների շրջագծում, Սպահանի եւ հարաւային իրանահայութեան ընտրատարածքում, խորհրդարանի պատգամաւոր ընտրուեց Ժորժիկ Աբրահամեանը:

Ինչպէս նախորդ ընտրութիւնները, այս անգամ եւս հարաւային իրանահայութիւնը կառչած մնալով իր քաղաքացիական ու ազգային իրաւունքներին՝ խուռներամ շարքերով մասնակցեց ընտրութիւններին եւ ընտրողների շուրջ 99 տոկոսը քուէարկեց Ժորժիկ Աբրահամեանի օգտին:

Յատկանշական է, որ միջօրէից առաջ Սպահանի նահանգապետ պրն. Զառգառփուրը, ընկերակցութեամբ Սպահան քաղաքի գաւառապետ պրն. Քաֆիլիի, այցելեց Նոր Ջուղայի հայ համայնքի ընտրատեղամասերից հայոց ազգային կրթահամալիր («Արմէն» դպրոց), որտեղ պատուիրակութեանը դիմաւորեցին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանն ու ազգային մարմինների ներկայացուցիչները, իսկ Ժորժիկ Աբրահամեանն ընկերակցութեամբ իր Կենտրոնական շտաբի յանձնախմբի անդամների ներկայացաւ Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոց եւ քուէարկեց սոյն ընտրատեղամասում:

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՍՊԱՀԱՆԻ ՈՒՐԲԱԹՕՐԵԱՅ ԱՂՕԹԱՊԵՏԻՆ



Կիրակի՝ 2016 թուականի յունուարի 3-ի կէսօրին, Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի գլխաւորութեամբ, Պատգամաւորական Ժողովի Դիւանի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետեր պրնք. Վարուժ Մինասեանը, Վրէժ Տէր-Մարտիրոսեանը, Վարուժ Մովսիսեանը եւ Թեմական Խորհրդի անդամ պրն. Սարօ Դիլանչեանը այցելեցին Սպահան քաղաքի ուրբաթօրեայ աղօթապետ հոջ. այաթ. Թաբաթաբայիին: Հանդիպման նպատակն էր ազգային իշխանութեան եւ համայնքի անունից աղօթապետին եւ իսլամ հանրութեանը շնորհաւորել իսլամի մարգարէի ծննդեան տօնը:

Հանդիպման ընթացքում երկուստեք շեշտուեց, որ միաստուածեան կրօնների նպատակներից է աշխարհում խաղաղ եւ համերաշխ կեանք ստեղծել ու տարածել, եւ եթէ յաճախ ականատես ենք լինում կրօնի եւ Աստծու անունով կատարւող ոճրագործութիւններին եւ անմարդկային վերաբերմունքներին, յստակ է, որ այդ արարքները դատապարտելի են եւ հակառակ Աստծու կամքին:



Այաթ. Թաբաթաբային ազգային առաջնորդարանի պատուիրակութեանը եւ նրանց միջոցով համայն հայութեանը շնորհաւորեց Ամանորի եւ Ս. Ծննդեան տօների առիթով եւ յորդորեց, որ քրիստոնեայ աշխարհի հոգեւորականութիւնը իր խրատական եւ դաստիարակիչ խորհուրդներով ու քարոզչութեամբ զգուշացնի յատկապէս մեծապետական երկրների ղեկավարներին՝ հեռու մնալու այն բոլոր արարքներից, որոնք մարդկային կեանքը վտանգի են ենթարկում: Այս կապակցութեամբ առաջնորդ Սրբազան Հայրը յիշեցրեց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետն իր պաշտօնական բոլոր հանդիպումների ընթացքում, նոյնիսկ Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահի հետ ունեցած տեսակցութեան ժամանակ, ճիշտ այս ուղղութիւնն է որդեգրել եւ շեշտել, որ գերուժերը պէտք է իրենց գործունէութիւնը կենտրոնացնեն՝ ամբողջ աշխարհում խաղաղութիւն եւ համերաշխութիւն ապահովելու համար:

Թեմակալ առաջնորդն իր բարեմաղթանքների աւարտին հրաւիրեց աղօթապետին՝ յարմար առիթով այցելելու Ս. Ամենափրկչեան վանք:

## ՍՊԱՀԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԵՒ 5-ՐԴ ՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՅՑ

Երկուշաբթի՝ 2016 թուականի յունուարի 4-ի միջօրէին, Ս. Ամենափրկչեան վանք այցելեցին Սպահանի քաղաքապետ դկտ. Մեհդի Ջամալինեժադը, Սպահանի 5-րդ շրջանի քաղաքապետ դկտ. Ասադզադեգանը, Սպահան քաղաքի ճարտարապետական հիմնարկի եւ քաղաքապետարանին ենթակայ այլ բաժանմունքների պատասխանատուներ՝ ամանորեայ շնորհաւորանքներ փոխանցելու համար:



Պատուիրակութեանը դիմաւորեցին եւ Ս.Ա. վանքի Ծաղկեայ դահլիճում հիւրընկալեցին Թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետերն ու անդամները:

Փոխադարձ բարեմաղթութիւններ փոխանցելուց եւ յուշանուէրներ յանձնելուց յետոյ, քաղաքապետ դկտ. Ջամալինեժադը համապարփակ բացատրութիւն ներկայացրեց Սպահանում՝ անցնող տարուայ ընթացքում իրականացուած ծրագրերի եւ ապագայի համար նախատեսուած աշխատանքների մասին, միաժամանակ շնորհակալութիւն յայտնեց հայ համայնքին՝ Սպահան քաղաքին կապուած յաջողութիւնների եւ ձեռքբերումների գործում իրենց ուրոյն դերակատարութիւնն ու համագործակցութիւնը ցուցաբերելու համար, շեշտելով, որ հայ համայնքը տակաւին շատ աւելի մեծ տարողութիւն ունի՝ արհեստի եւ արուեստի բնագաւառներում նորանոր ներդրումներ կատարելու:

Դկտ. Ջամալինեժադը յատուկ կերպով շեշտեց քաղաքապետարանին առնչուող առաջնորդարանի եւ հայ համայնքի հարցերին վերահասու լինելու կապակցութեամբ առանձնայատուկ ուշադրութեանը եւ մատնանշեց, յանձնարարել է նման հարցերում պատասխանատուները արտակարգ գործունէութիւն ծաւալեն:



Ազգային իշխանութեան ներկայացուցիչների հետ հանդիպումից յետոյ, քաղաքապետարանի պատուիրակութիւնն այցելեց ազգային ծերանոց, որտեղ նրանց դիմաւորեցին Ն.Ջ. Հայ կանանց գթութեան միութեան վարչութեան անդամները, ծերանոցի աշխատակազմը եւ տարեցները: Հայ կանանց գթութեան միութեան վարչութեան նախագահ տկն. Արմինէ Սիմոնեանը հիւրերին բարիգալստեան խօսք ուղղելուց յետոյ, հակիրճ կերպով տեղեկութիւն փոխանցեց միութեան 100-

ամեայ բեղուն գործունէութեան վերաբերեալ: Այնուհետեւ Սպահանի քաղաքապետը բարեմաղթանքներ կատարեց եւ առողջութիւն ու երկար կեանք ցանկացաւ տարեցներին եւ նրանց նուիրեց «Մշակոյթի եւ իմացականութեան տուն» հաստատութեան կողմից պատրաստուած ծաղիկները:

Հայ կանանց գթութեան միութեան վարչութեան կողմից ամանորեայ նուէրներ յանձնուեցին հիւրերին:

# ՍՊԱՀԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ, ԻՍԼԱՄԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹԵԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ԱՅՑ



Երկուշաբթի՝ 2016 թուականի յունուարի 4-ի յետմիջօրէի ժամը 4:00-ին, Սպահանի նահանգապետ դկտ. Զարգարփուրի գլխաւորած պատուիրակութիւնն այցելեց ազգային առաջնորդարան: Պատուիրակութեանը մաս էին կազմում Իսլամական մշակոյթի եւ առաջնորդութեան Սպահանի գերատեսչութեան ընդհանուր տնօրէն հոջ. ալաթ. դկտ. Աուզանին, Մշակութային ժառանգութեան կազմակերպութեան ընդհանուր տնօրէն Ֆէրէյդուն Ալլահեարին եւ նրանց ենթակայ բաժինների պատասխանատու անձինք:

Թեմակալ առաջնորդի բարիգալստեան խօսքերից եւ շնորհակալութեան արտայայտութիւններից յետոյ, հերթաբար արտայայտուեցին նահանգապետ դկտ. Զարգարփուրը եւ հոջ. Աուզանին՝ ամանորեայ եւ Ս. Ծննդեան տօների առթիւ իրենց շնորհաւորանքները փոխանցելով:



Սպահանի նահանգապետ դկտ. Զարգարփուրը գերշ. Սրբազան Հօրը փոխանցեց Իսլամական մշակոյթի եւ առաջնորդութեան նախարար Ալի Ջաննաթիի շնորհաւորական նամակը ուղղուած թեմակալ առաջնորդին եւ հայ համայնքին:

Առաջնորդ Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնեց պետական բոլոր մարմիններին ու կազմակերպութիւններին, որոնք Իրանի ամբողջականութեան, խաղաղութեան եւ ապահովութեան համար աշխատում են նուիրումով, ինչը պատճառ է դարձել, որ տարածաշրջանի մէջ Իրանը ներկայանայ իբրեւ հզօրագոյն եւ ամենաանդորր երկիր. պրն. նահանգապետը երկրորդելով գերշ. Սրբազան Հօր խօսքը, յայտնեց, որ Իրանում ապրող բոլոր ազգութիւնների եւ միաստուածեան կրօնների հետեւորդների միասնութիւնը, սրտակցութիւնը եւ համագոյակցութիւնն է պատճառը այդ իրականութեան:

Պրն. Զարգեարփուրն ակնարկելով Իրանի իսլամական խորհրդարանի յառաջիկայ ընտրութիւններին, յոյս յայտնեց, որ ինչպէս միշտ այս անգամ եւս հայ համայնքն իր լիարժէք մասնակցութիւնն է բերելու այս կարեւոր գործին:

Իսլամական մշակոյթի եւ առաջնորդութեան Սպահանի գերատեսչութեան ընդհանուր տնօրէն հոջ. Աուզանին եւս խօսելով առաքինութիւնների մասին եւ ակնարկելով մարդու մէջ գոյութիւն ունեցող մարդկային ոգուն եւ աստուածային հոգուն, իր համոզումը յայտնեց առ այն, որ միաստուածեան կրօնների հետեւորդների իրար շուրջ համախմբուելը, համակեցութիւնն ու միասնութիւնը ճիշտ այդ աստուածային հոգու ներկայութեան արգասիքն են, ինչը դարեր ի վեր գեղեցիկ արտայայտութիւն է գտել Սպահանում:



Հանդիպումից յետոյ, պատուիրակութիւնը, Առաջնորդ Սրբազան Հօր եւ առաջնորդարանի պատասխանատուների ընկերակցութեամբ այցելեց ազգային ծերանոց: Պատշաճ հիւրընկալութեան ընթացքում ար-տայայտուեց հոչ. Առզանին՝ շնորհաւորելով ծերանոցի աշխատակազմին եւ բնակիչներին տօնական օրերի կապակցութեամբ եւ երկար կեանք մաղթեց տարեցներին: Ծերանոցում ներկայ էին Բարեկեցութեան հիմնարկի պատասխանատուները, ովքեր Հայ կանանց գթութեան միութեան վարչութեան նախագահ տկն. Արմինէ Սիմոնեանի բարիգալստեան խօսքից յետոյ արտայայտուելով՝ խօսեցին ծերանոցին կապւած Բարեկեցութեան հիմնարկի ներդրումների եւ ցուցաբերած օժանդակութիւնների մասին, միաժամանակ ազգային ծերանոցը ներկայացնելով իբրեւ լաւագոյնը Սպահանում:

Նահանգապետի միջոցով ծաղիկներ նւիրւեցին տարեցներին, իսկ Հայ կանանց գթութեան միութեան կողմից յուշանւէրներ յանձնւեցին պատուիրակութեան անդամներին:

## ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՒ

«Թէջարաթ» դրամատան պատասխանատուներ



«Սադերաթ» դրամատան պատասխանատուներ



«Հաքիմ» մզկիթի պատասխանատուներ



Կրթադաստիարակչութեան պատասխանատուներ



«Մելլաթ» դրամատան պատասխանատուներ





# ՍՊԱՀԱՆԻ ԵՒ ԻՐԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԲԱՆԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՋԵՀԱԴԻՒ ԱՅՑԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Շաբաթ՝ 2016 թուականի յունուարի 9-ի միջօրէին, Ս. Ամենափրկչեան վանք այցելեց Սպահանի եւ Իրանի կենտրոնական եւ հարաւային շրջանի բանակի ընդհանուր հրամանատար Ջեհադին, ում ընկերակցում էին բանակի զինուորական եւ հոգեւորական բարձրաստիճան պաշտօնեաներ:



Պատուիրակութեանը դիմաւորեցին Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գեր. Տ. Բաբգէն արք. Չարեանը, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետերը, նաեւ Պատգամաւորական ժողովի ներկայացուցիչները:

Ծաղկեայ դահլիճում տեղի ունեցած հանդիպման ընթացքում, թեմակալ առաջնորդը ողջունեց հիւրերի ներկայութիւնը՝ գեղեցիկ աւանդութիւն համարելով տօնական օրերին իրար այցելութիւնը: Գեր. Տ. Բաբգէն արք. Չարեանը միաժամանակ հիւրերին շնորհաւորեց խլամ կրօնի մարգարէի ծննդեան տօնի առթիւ եւ գնահատեց Իրանի ամբողջականութեան եւ ապահովութեան համար ծառայող մշտարթուն բանակայիններին:

Հրամանատար Ջեհադին, իր եւ պատուիրակութեան անձնակազմի կողմից շնորհաւորելով Ամանորի եւ Յիսուս Քրիստոսի Ծննդեան տօների առթիւ, յիշեցրեց, որ Իրանը միշտ էլ վայելել է հայ համայնքի շինարար եւ գործօն մասնակցութիւնը՝ երկրի վերելքի, զարգացման եւ նոյնիսկ զինուորական ծառայութեան ասպարէզներում:



Շնորհաւորանքներ փոխանցելուց եւ հիւրասիրուելուց յետոյ, պատուիրակութիւնն այցելեց Ս. Ամենափրկչեան վանքի «Խաչատուր Կեսարացի» թանգարանում գտնուող Եփրեմ Խանի տաղաւարը, ով Իրանի պատմութեան մէջ եւ ռազմական ոլորտում իր ուրոյն դերն ու դրական ազդեցութիւնն է ունեցել:

# ԿՈՐԷԱՅԻ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔՈՒՄ



Չորեքշաբթի՝ 2016 թուականի յունուարի 27-ի առաւօտեան ժամը 11:30-ին, Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գեր. Տ. Բաբգէն արք. Չարեանը եւ Թեմական Խորհրդի ատենապետ պրն. Վրէժ Տէր-Մարտիրոսեանը Սպահանի նահանգապետ պրն. Զառգարփուրի կողմից հրաւիրուել էին նահանգապետարան, որտեղ նահանգապետի, Իսլամական Մշակոյթի եւ Առաջնորդութեան Սպահանի գերատեսչութեան, պետական եւ հոգեւորական այլ պատուիրակութիւնների հետ հանդիպում ունեցան Հարաւային Կորէայի Գուանգջու քաղաքի կաթողիկէ համայնքի արքեպիսկոպոսարանի աւագ հոգեւորական արքեպիսկոպոս Կիմ Հի-Ջունգին եւ նրան ընկերակցող պատուիրակութեանը:

Արքեպիսկոպոս Հի-Ջունգը Հարաւային Կորէայի կաթոլիկ եպիսկոպոսական կոնֆերանսի Քրիստոնեայ Աշխարհի Յարաբերութեան եւ Կրօնների Երկխօսութեան Յանձնաժողովի ատենապետի հանգամանքով հրաւիրուել էր Իրան՝ մասնակցելու Իսլամական Մշակոյթի եւ Հաղորդակցութեանց Հիմնարկութեան կողմից կազմակերպուած «Կրօնների եւ Քաղաքակրթութիւնների Երկխօսութեան Հինգերորդ Նստաշրջան»-ին:

Կորէացի պատուիրակութեանը մաս էին կազմում «Կրօնները՝ Հարաւային Կորէայի Համար Խաղաղութեան Կոնֆերանս»-ի նախագահ քահանայ Կիմ

Գուանգ-Ջունը, «Խաղաղութիւն եւ Կրօն» պարբերականի խմբագիր Հիւնդօ Փառքը եւ ուրիշներ:

Հանդիպման ընթացքում երկու երկրների միջեւ եւ ի հետեւումն դրա՝ միաստուածեան կրօնների հետեւորդների միջեւ բարի-դրացիական յարաբերութիւնների զարգացման համար մտածումներ փոխանակեցին ներկաների միջեւ եւ կարեւոր երեւոյթ նկատեց այս ուղղութեամբ տարուող աշխատանքների ծաւալումը:



Հանդիպման աւարտին, Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը Կորէացի պատուիրակութեանը Ս. Ամենափրկչեան վանք հրաւիրեց, որտեղ նրանք, «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցին այցելելուց յետոյ, հիւրընկալուեցին Ծաղկեայ դահլիճում: Հանդիպմանը ներկայ գտնուեցին նաեւ Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետերը եւ հոգեւորականաց դասի ներկայացուցիչներ:

Ներկաները աշխարհում խաղաղութեան, համերաշխութեան, քրիստոնէական սիրոյ տարածման եւ ազգերի ու կրօնների միջեւ համակեցութեան ու հանդուրժողականութեան համար կարեւոր համարեցին նման հանդիպումներն ու ծանօթացումները: Արք. Հի-Ջունգն իր ուրախութիւնը յայտնեց, որ Իրանը ապահով եւ ընդունելի մթնոլորտով երկիր է միաստուածեան կրօնների հետեւորդների համար: Նա նշելով, որ Հարաւային Կորէայում եւս կողք-կողքի ապրում են յիսունից աւելի կրօնների հետեւորդներ, շեշտեց, որ Իրանն ու Հարաւային Կորէան կարող են գեղեցիկ օրինակ հանդիսանալ այլ երկրների համար:



Հանդիպումից, յուշանուէրներ փոխանակելուց եւ հիւրասիրուելուց յետոյ, պատուիրակութիւնն այցելեց Ս.Ա. վանքի «Խաչատուր Կեսարացի» թանգարան, որից յետոյ հրաժեշտ տուեցին ազգային առաջնորդարանի պատասխանատուներին:

# ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՄԻԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿՐՕՆՆԵՐԻ 7-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Հինգշաբթի՝ 2015 թուականի յունուարի 28-ին, Սպահան «Ասեման» հիւրանոցի սրահներից մէկում կայացաւ Միաստուածային կրօնների 7-րդ միջազգային համագումարը:



Համագումարին ներկայ էին Իրանի իսլամական մշակոյթի եւ առաջնորդութեան նախարար պրն. Ջաննաթին, կրօնական ու ազգային փոքրամասնութիւնների հարցերով նախագահի խորհրդական հոջ. Իւնեսին, Իսլամական մշակոյթի եւ առաջնորդութեան Սպահանի գերատեսչութեան եւ միաժամանակ Միաստուածային կրօնների գրասենեակի պետ հոջ. Առզանին, Սպահանի նահանգապետ Զառգառփուրը, Սպահան քաղաքի ընդհանուր քաղաքապետ Մեհդի Ջամալինեժադը եւ հրաւիրուած այլ բարձրաստիճան պաշտօնեաներ:

Համագումարին մասնակցել էին տարբեր երկրների, այդ թւում Իրանի, Արաբական միացեալ Էմիրութիւնների, Աֆղանստանի, Բրիտանիայի, Աւստրալիայի, Նիգերիայի, Իրաքի, Եմենի, Օմանի, Կոնգոյի եւ Պակիստանի աստուածային կրօնների՝ իսլամի, զրադաշտականների, հրեաների, քրիստոնեաների (Կաթոլիկ, Ուղղափառ եւ Բողոքական) ու Յովհաննէս մկրտչի հետեւորդների ներկայացուցիչներ:

Սպահանի հայոց թեմի անունից սոյն համագումարին մասնակցած պատուիրակութիւնը նախագահում էր թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը: Պատուիրակութեանը մաս էր կազմում նաեւ Սպահանի

հայոց թեմի Թեմական խորհրդի ատենապետ պրն. Վրէժ Տէր-Մարտիրոսեանը:



Համագումարի ընթացքում դասախօսութեամբ հանդէս եկան նախարարը, նախագահի խորհրդականը, հոջ. Աւզանին, Սպահանի նահանգապետը եւ կրօնական փոքրամասնութիւնների ներկայացուցիչները:

Սպահանի հայոց թեմի անունից ընթերցւեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեան խօսքը, որի մէջ ասել էր. «*Տարածաշրջանում տիրող ճգնաժամը բնորոշ չէ միայն իսլամ եւ քրիստոնեայ աշխարհին: Այն բազում խնդիրներ է յարուցել ողջ մարդկութեան համար*»: Գերաշնորհ Սրբազան Հայրը նշել էր, որ այսօր աստուածային կրօնները կարող են առանց միմեանց ինքնութիւնն ու իւրայատկութիւնը վտանգելու, սրտակցութեամբ համագործակցութիւն ծաւալել եւ խաղաղ համակեցութիւն ունենալ: Ըստ նրա. «*Բոլոր կրօններն ու իշխանութիւնները պէտք է իմանան, որ անցեալի համեմատութեամբ, այսօր պարտաւոր են աւելի շատ համագործակցել անհաբեկչութեան ու ծայրահեղականութեան դէմ պայքարի ուղղութեամբ*»:

Նշելով, որ միաստուածային կրօնների հետեւորդները դարեր շարունակ կողք-կողքի խաղաղ կեանք են վարել Իրանում, Սպահանի հայոց թեմի առաջնորդն ասել էր. «*Իրանում տարբեր կրօնների հետեւորդները տարբեր բարքեր ունենալով, միշտ յարգել են միմեանց տարբերութիւններն ու հաւատալիքները*»:




Համագումարի աւարտին, յուշագրեր յանձնւեցին նախարարին եւ նախագահի խորհրդականին, ներկայացւեց միաստուածային կրօնների 6-րդ համագումարի ընթացքում ներկայացուած յօդուածները բովանդակող բազմահատոր գիրքը, ստորագրւեց Իսլամական մշակոյթի եւ առաջնորդութեան «Իրան 1404» անւանումով աշխատանքային ծրագրերի փաստաթուղթը, ապա Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի ընթացքում Նոր Ջուղայի եւ հարաւային իրանահայութեան նահատակ զինւորների ընտանիքները գնահատւեցին. նահատակների ընտանիքների անդամներից երկուսը, ովքեր ներկայացել էին համագումարին, պարգեւատրւեցին յուշանւէրով:

# ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՇԻՐԻՄՆԵՐԻ ՎՐԱՅ




Իրանի իսլամական յեղափոխութեան յաղթանակի 37-րդ տարեդարձի առթիւ, չորեքշաբթի՝ 2016 թուականի փետրուարի 3-ի առաւօտեան, Նոր Ջուղայի Հայոց ազգային գերեզմանատանը, Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի նախագահութեամբ եւ թեմի հոգեւորականաց դասի մասնակցութեամբ, Հոգեհանգստեան արարողութիւն կատարւեց Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի ընթացքում ընկած նահատակների հոգիների խաղաղութեան համար:

Արարողութեանը ներկայ էին Թեմի ազգային մարմինների ներկայացուցիչները, Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի ընթացքում զոհւած հայ նահատակների հարազատները, Նոր Ջուղայի հայոց ազգային

«Քանանեան» աղջկանց եւ «Կատարինեան» տղայոց դպրոցների ուղեցոյց բաժնի աշակերտներն ու պատասխանատուները եւ ժողովուրդ:



Առանձնաբար Հոգեհանգստեան արարողութիւն կատարուեց նահատակներ՝ Հենրիկ Տէր-Յովհաննիսեանի, Վարդան Աբրահամեանի, Հրաչ Յակոբեանի, Ռայմոնդ Բաղրամեանի եւ Վրէժ Բաղումեանի շիրիմների մօտ: Յիշուեց նաեւ Ահւազի հայոց ազգային գերեզմանատանն ամփոփուած նահատակ Մկրտիչ Թովմասեանը:






Հոգեհանգստեան արարողութիւնների աւարտին, ներկաներին իր պատգամը փոխանցեց գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը՝ բնաբան ունենալով *«Տէրը իմ հովիւն է. ես ումի՞ց պէտք է վախենամ»* աստուածաշնչական համարը: Գերշ. Սրբազան Հայրը շեշտելով, որ հայրենիքի ամբողջականութեան եւ ազատութեան ճանապարհին իրենց կեանքը նուիրաբերած հերոսների յիշատակը մշտապէս ներկայ պէտք է լինի մեր մտքում եւ առօրեայ կեանքում իբրեւ մեր փառքն ու պատիւը, աւաց, որ մենք նրանց հպարտութեամբ պէտք է յիշենք եւ մեծարենք:



Գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը խօսքն ուղղելով ներկայ աշակերտութեանը, եւ յիշելով, որ հայ ժողովուրդը նահատակութեան ճանապարհ անցած եւ «նահատակ եկեղեցի» ու «նահատակ ժողովուրդ» կոչումներին արժանացած ազգ է, յորդորեց նրանց՝ հայ քաջ նահատակների ոգով զինուել եւ նրանց տեսիլքով ապրել ու ստեղծագործել:



Թեմակալ առաջնորդն իր խօսքի աւարտին իր, ազգային իշխանութեան եւ հայ ժողովրդի անունից երկրի կրօնապետին, նախագահին, բոլոր պատասխանատուներին եւ համայն ժողովրդին շնորհաւորեց Իրանի իսլամական յեղափոխութեան 37-րդ տարեդարձի առթիւ, միաժամանակ նաեւ մեծ յաղթանակ համարեց Իրանի վերջին ձեռքբերումները՝ միջուկային էներգիայի խնդիրներին առնչւող բանակցութիւնների մէջ:

# ԲԱՆԻՄԱՑՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԵՏ

Շաբաթ՝ 2016 թուականի փետրուարի 13-ի միջօրէին, Ս. Ամենափրկչեան վանք ներկայացաւ Բանիմացների Խորհրդի ներկայացուցիչ այաթ. Մահդաւին, որին ընկերակցում էին Սպահան քաղաքի ընդհանուր եւ 5-րդ շրջանի քաղաքապետերը, Քաղխորհրդի նախագահը եւ «Յեղափոխութեան քարոզչութեան միութեան» բազմամարդ պատուիրակութիւնը՝ կազմուած իսլամ հոգեւորականներից եւ հոգեւորականութեան ուսանողներից:



Այցելութեան նպատակն էր հանդիպել եւ մեծարել Իրաք-Իրան պարտադրեալ պատերազմի ընթացքում նահատակուած հայ զինուորների ընտանիքներին:

Պատուիրակութեանը դիմաւորեցին Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունճանեանը, Պատգամաւորական ժողովի դիւանի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետերն ու ներկայացուցիչները եւ հայ նահատակ զինուորների ընտանիքները:

Հանդիպման սկզբում ողջոյնի եւ բարիգալստեան խօսքով ներկայացաւ հոգշ. Հայր Սուրբը եւ իր ուրախութիւնն ու գոհունակութիւնը յայտնեց, որ երկրի բարձրաստիճան պատասխանատուները միշտ իրենց ուշադրութեան առարկան են դարձնում հայ համայնքը եւ յատկապէս հայ նահատակներին ու նրանց ընտանիքներին:



Այաթ. Մահդաւին, նշելով, որ Իրանի իսլամական հանրապետութեան ղեկավարութիւնն ու համակարգը համահաւասար արժէք եւ գնահատական են տալիս Իրանի բոլոր քաղաքացիներին եւ յատուկ կերպով կարեւորում են ազգային ու կրօնական փոքրամասնութիւնների իրաւունքները, շեշտեց, որ համակեցութիւնն ու խաղաղ գործակցութիւնը Իրանի գեղեցիկ իւրայատկութիւններից է: Նա իր խորը ցաւակցութիւնը յայտնեց հայ նահատակների ընտանիքներին եւ բարձր գնահատեց նրանց գիտակցութիւնն ու նրանց զաւակների սխրանքը՝ երկրի ամբողջականութեան եւ բնակչութեան անվտանգութեան պահպանման համար իրենց կեանքի գնով զոհողութիւնը:

Հանդիպման աւարտին, պատուիրակութեան պատասխանատուների միջոցով յուշանուէրներ յանձնեցին նահատակների ընտանքիներին:

Վերջում հիւրերն այցելեցին «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի եւ «Խաչատուր Կեսարացի» թանգարան:



# ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԶԱՆԱԶԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Ա) Շաբաթ՝ փետրուարի 27-ին, Ս. Ամենափրկչեան վանք այցելեց զբօսաշրջութեան գծով Հայաստանի Հանրապետութեան վարչապետի խորհրդական Տիգրան Կարապետեանը, ով Իրանի Իսլամական Հանրապետութեան զբօսաշրջութեան պատասխանատուների հետ հանդիպումներ էր անցկացրել՝ նպատակ ունենալով երկու երկրների միջեւ առկայ եւ զարգացման տարողութիւն ունեցող զբօսշրջութեան յարաբերութիւնների առաւել բարելաւումը, ընդարձակումը եւ նորանոր ծրագրերով ու որակով օժտելն ու նոր գործունէութիւն ծաւալելը:



Պրն. Կարապետեանը «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի եւ «Խաչատուր Կեսարացի» թանգարան այցելելուց յետոյ, Ս. Ամենափրկչեան վանքի Ծաղկեայ դահլիճում հիւրընկալուեց Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի, Պատգամաւորական ժողովի դիւանի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետերի միջոցով:



Հանդիպման ընթացքում պրն. Կարապետեանը համապարփակ զեկոյց ներկայացրեց Իրանում ունեցած իր հանդիպումների եւ հետապնդած նպատակների վերաբերեալ եւ այս ուղղութեամբ ազգային առաջնորդարանի աջակցութիւնը խնդրեց՝ զբօսարջութեան հետ կապւած ծրագրերի իրականացման համար:



Թեմակալ առաջնորդը շեշտեց, որ Սպահանի հայոց թեմի ազգային առաջնորդարանի քաղաքականութիւնը միշտ եղել է ամբողջ հնարաւորութիւններն ի սպաս դնել Հայաստանի Հանրապետութեան պետականութեան ամրապնդման եւ Իրան-Հայաստան յարաբերութիւնների բարելաւման ուղղութեամբ եւ վստահեցրեց, որ ոչ մի ջանք չի խնայւի պրն. Կարապետեանի հետապնդած ծրագրերի իրականացման համար ու առաջնորդարանն իր ամբողջական համագործակցութիւնը կը ցուցաբերի այս կապակցութեամբ:

***

Բ) Կիրակի՝ փետրուարի 28-ին, Ս. Ամենափրկչեան վանքի Ծաղկեայ դահլիճում Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանին, Իրանի իսլ. խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան նորընտիր պատգամաւոր պրն. Ժորժիկ Աբրահամեանին, Պատգամաւորական ժողովի դիւանի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետեր պրնյք. Վարուժ Մինասեանին, Վրէժ Տէր-Մարտիրոսեանին եւ Վարուժ Մովսիսեանին այցելեց ռումինահայ ծերակուտական (սենատոր) Վարուժան Ոսկանեանը, աւելի քան երկու տասնամեակ նախարարական, երեսփոխանական եւ կուսակցական կարեւոր պաշտօններ է զբաղեցրել Ռումանիայի քաղաքական կեանքի մէջ, նաեւ բեղուն գործունէութիւն է ծաւալել եւ շարունակում է ունենալ ռումանահայ համայնքի կազմակերպչական եւ ղեկավարման աշխատանքներում:

Պրն. Ոսկանեանի Իրան կատարած այցելութեան նպատակն է եղել Թեհրանում իր ռումիներէնով հեղնակած «Ճշուկների Մատեան» գրքի պարսկերէն թարգմանութեան շնորհանդէսին մասնակցելը, որի շրջանակում իր տիկնոջ հետ միօրեայ ճամբորդութիւն էր կազ-

մակերպել դէպի Սպահան: Նա, ազգային առաջնորդարանի պատասխանատուների կարգադրութեամբ, առիթն ունեցաւ այցելել Նոր Ջուղայի Հայոց ազգային կրթահամալիր, որտեղ հիացմունքով իրազեկ դարձել ուսումնարանի արձանագրած յաջողութիւնների մասին: Հիւրերն այցելեցին նաեւ «Ս. Բեթղեհէմ» եւ «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցիներ եւ «Խաչատուր Կեսարացի» թանգարան:



Հանդիպման ընթացքում, իբրեւ ծանօթացում, պրն. Ոսկանեանը լայն բացատրութիւններ փոխանցեց Ռումինիայում ունեցած իր աշխատանքների մասին, նաեւ տեղեկութիւններ փոխանցեց ռումինահայ համայնքի ազգային-կրօնական կեանքի եւ կացութեան վերաբերեալ:



Թեմակալ առաջնորդը ողջունելով հիւրերին, նոյնպէս ընդհանուր գծերով ներկայացրեց Սպահանի հայոց թեմի կացութիւնը, ինչը մեծ տպաւորութիւն թողեց պրն. Ոսկանեանի վրայ:

Հանդիպման աւարտին առաջնորդարանի կողմից յուշանւէր յանձնւեց պրն. Ոսկանեանին, ով փոխադարձաբար իր գրքի հայերէն եւ պարսկերէն թարգմանութիւններից մէկական օրինակ յանձնեց Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանին:

***

Գ) Երկուշաբթի՝ փետրուարի 29-ի առաւօտեան ժամը 10:00-ին, Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը հիւրընկալեց Ալբանիայի ազգային հեռուստատեսութեան տնօրէն Մարթին Լեքային, նրա գլխաւոր խորհրդականին եւ ընկերակցող համագործակիցներին: Հանդիպմանը ներկայ էր նաեւ Իրան Իսլ. Խորհրդարանում հարաւային իրանահայութեան նորընտիր պատգամաւոր պրն. Ժորժիկ Աբրահամեանը:



Պատւիրակութիւնը պետական մակարդակով համագործակցութիւններ ծաւալելու նպատակով էր ճամբորդել Իրան:

Հանդիպումը զուտ ծանօթացման բնոյթ ունէր, որի ընթացքում թեմակալ առաջնորդը ճիշտ գնահատելով զանազան երկրների եւ Իրանի միջեւ զարգացող համագործակցութիւնները, լայն տեղեկութիւններ փոխանցեց Թեմի ընդհանուր կացութեան եւ համայնքի կեանքի ու գործունէութեան վերաբերեալ: Առաջնորդ Սրբազան Հայրը անդրադարձաւ Իրանում կրօնական փոքրամասութիւնների վայելած ազատութիւնների, իրաւունքների եւ պետական յատուկ ուշադրութիւնների մասին, նաեւ այն հսկայածաւալ աշխատանքներին եւ յատկացումներին, որոնք պետութեան կողմից տրամադրւում են ազգային ժառանգութիւնների եւ կոթողների պահպանման համար, միաժամանակ յիշեցնելով, որ հարեւան մի շարք երկրներում, ի շարս նրանց Ադրբեջանում ճիշտ հակառակ երեւոյթի ականատեսն ենք լինքում:



Պրն. Մարթին Լեքան յիշեցնելով, որ մօտ ապագայում Ադրբեջանի Հանրապետութիւնում տեղի է ունենալու յատուկ համագումար՝ Ադրբեջանը ներկայացնելու իբրեւ կրօնների համակեցութեան ռահվիրայ, որին հրաւիրւած է նաեւ Միացեալ Ազգերի Կազմակերպութեան գլխաւոր տնօրէն Բան Քի-Մունը, յարմար առիթ համարեց՝ գրութեամբ եւ պաշտօնական յայտարարութեամբ իրազեկ պահել Մ.Ա.Կ.-ի գլխաւոր տնօրէնին Ադրբեջանի իրական դէմքի եւ հակահայ ու խտրականութեամբ լեցուն գործունէութեան մասին:

# 2016-Ի ԱՄԱՆՈՐԸ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔՈՒՄ



2016 թւականի յունւարի 1-ի առաջին պահերին՝ առաւօտեան ժամը 00:30-ին, Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցում եւ վանքի բակում, աննախադէպ բազմութեամբ Նոր Ջուղայի եւ Շահինշահրի հաւատաւոր հայորդիներ իրար շուրջ էին հաւաքուել, աղօթք բարձրացնելու առ Աստուած՝ գոհութիւն յայտնելու անցնող տարւայ ընթացքում շնորհած բարիքների համար եւ խնդրելու՝ որպէսզի գալիք Նոր տարին դառնայ ցանկալի եւ աստուածահաճոյ: Ներկաների մէջ նաեւ կային օտարերկրացի այցելուներ, ովքեր թէպէտ իրենց երկրներից հեռու, սակայն ջերմ մթնոլորտում համայնքիս զաւակների հետ անցկացրին 2016 թւականի առաջին ժամերը:



Գոհաբանական աղօթքը նախագահում էր Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ՝ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը, ներկայ էին գերշ. Տ. Վարուժան արք. Հերկէլեանը, Շահինշահրի հոգեւոր հայր հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, հոգշ. Տ. Արտակ վրդ. Արաբեանը, հոգեւորականաց եւ դպրաց դասերը:

Գոհաբանական մաղթանքի աւարտին, թեմակալ առաջնորդը կարճ շնորհաւորանքի խօսքից յետոյ հրաւիրեց գերշ. Տ. Վարուժան արք. Հերկէլեանին՝ ներկայ հաւատացեալներին իր պատգամը փոխանցելու: Գերշ. Սրբազան Հայրն անդրադառնալով իրարայաջորդ տարիների արագ եւ սրընթաց անցմանը, շեշտեց, որ մարդ իր կեանքի կարճ տարիներին պէտք է օգտագործի ժամանակը՝ լաւագոյն գործերով եւ առաքինութեամբ զարդարելու այն եւ իր շուրջ տարածելով քրիստոնէական սէր ու յարգանք՝ կեանքը դարձնի բեղուն ու քաղցր:



Եկեղեցական արարողութիւնից յետոյ, Ս. Ամենափրկչեան վանքի բակում տեղի ունեցաւ հրավառութիւն եւ հիւրասիրուեցին բոլոր ներկաները: Ամանորեայ երգ-երաժշտութեան ներքոյ գեղեցիկ եւ յիշարժան պահեր ապրեցին բոլորը: Ծրագիրը կազմակերպել էր Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհուրդը:

***

Յունւարի 1-ի առաւօտեան ժամը 11:00-ին, մեծահանդէս թափօրով Ս.Ա. վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի մուտք գործեց պատարագիչ թեմակալ առաջնորդ՝ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը՝ սուրբ եւ անմահ Պատարագ մատուցելու Ս. Խորանի վրայ: Պատարագիչ Սրբազան Հօրն սպասարկում էին արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը եւ արժն. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը: Ս. Խորանի վրայից սարկաւագի բաժինն երգեց հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, իսկ Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս.Ա. վանքի «Կոմիտաս» երգչախումբը:



Ս. Պատարագին ներկայ էին գերշ. Տ. Վարուժան արք. Հերկէլեանը, հոգեւորականաց եւ դպրաց դասե-

րը: Ինչպէս միշտ, եկեղեցին եւ վանքի բակն աւլեցուն էր հաւատացեալ հայորդիներով:



Գերշ. Սրբազան Հայրը Պատարագի ընթացքում ամանորեայ իր պատգամը փոխանցեց ներկայ բազմութեանը՝ բնաբան ունենալով փիլիպեցիներին գրած Պօղոս առաքեալի նամակից (3.13) աւետարանական հատուածը, որտեղ առաքեալն ասում է. «***Աշխատում եմ անցեալը մոռանալ ու նայել գալիքին***»: Պատարագիչ Սրբազան Հայրը իր խօսքը փոխանցեց կենտրոնանալով չորս սկզբունքների վրայ՝ ա) մոռանալ մեր անյաջողութիւնները եւ լինել ներողամիտ, բ) հրաժարուել ոխակալութիւնից, գ) վերականգնել մեր յարաբերութիւնները եւ դ) յետ կենալ օրինազանցութիւններից: Գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանն իր խօսքի վերջաւորութեանը աղօթեց հիւանդների եւ կարօտեալների համար, աղօթեց նաեւ այս աշխարհից չարիքների եւ անմարդկային արարքների վերացման, աստուածային սիրոյ, փոխադարձ յարգանքի եւ հանդուրժողականութեան տարածման ու հաստատման համար:



Ներկայ հաւատացեալները արարողութեան ընթացքում ստացան տարուայ առաջին Ս. Հաղորդութիւնը:

Ս. Պատարագից յետոյ, ազգային իշխանութիւնը եւ ժողովուրդը ներկայացան առաջնորդ Սրբազան Հօրը եւ իրենց շնորհաւորանքներն ու բարեմաղթանքները փոխանցեցին նրան: Ընթացքում արտայայտուեց Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի ատենապետ պրն. Վրէժ Տէր-Մարտիրոսեանը՝ խօսելով 2015 թւականի մեր Թեմի ձեռքբերումների մասին եւ նշեց, որ 2016 թւականի համար ազգային իշխանութիւնը ծրագրել է մեծ աշխատանքներ իրականացնել՝ ի շահ թեմի զաւակների բարօրութեանը:

## Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԵՐԻ ՆԱԽԱՏՕՆԱԿԸ՝ ՃՐԱԳԱԼՈՅՑԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ



Երեքշաբթի՝ յունուարի 5-ի երեկոյեան ժամը 5-ից, Նոր Ջուղայի Ս. Յովհաննու, Ս. Աստուածածին, Ս. Ներսէս եւ Ս. Ստեփանոս եկեղեցիներում եւ Ծահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում սկսուեց Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօների նախատօնակի՝ Ճրագալոյցի Ս. Պատարագը, ուր պատարագիչ հայրերը եկեղեցիների սուրբ խորանից աւետեցին մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան լուրը:

Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը նախագահեց Ս. Յովհաննու եկեղեցու արարողութեանը, որը մատուցեց արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանի ձեռամբ: Երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբը:

Յընթացս Ս. եւ անմահ Պատարագի, թեմակալ առաջնորդն ընթերցեց Ս. Ծննդեան տօնի առիթով Մեծի Տանն Կի-

լիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի պատգամը՝ «Քրիստոսի ծնունդը՝ վերածնունդը մարդու» խորագրով:



Իր պատգամում, շնորհազարդ Հայրապետը նշելով, որ Յակոբոս առաքեալը Աստծու Որդու ծնունդը Բեթղեհէմում բնորոշել է որպէս մարդու վերածնունդ, անդրադարձել էր Քրիստոսի ծննդի երկու նպատակնե-րին՝ մարդու վերածննդին ու փրկու-թեանը, եւ կարեւորութեամբ ընդգծել, որ Քրիստոսին միանալու, Քրիստոսով վերստին ծննդի արժանանալու համար պէտք է Բեթղեհէմի մէջ ծնած Աստծու Որդուն ընդունել եւ մեր կեանքով ու գոր-ծով նրան դաւանել՝ որպէս մեր կեանքի լոյսը, հացը, ճամբան, դուռը, այլ խօսքով՝ մեր կեանքը:

Վերջում ներկաները Ս. Հաղորդու-թիւն ստացան պատարագիչ քահանայ հօրից եւ շտապեցին՝ Փրկչի Ծննդեան տօնը նշելու իրենց հարազատների հետ:

## Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Չորեքշաբթի՝ 2016 թւականի յունւարի 6-ի առաւօ-տեան, Նոր Ջուղայի Ս. Բեթղեհէմ, Ս. Մինաս, Ս. Ստե-փանոս եկեղեցիներում եւ Շահինշահրի «Սրբոց Վար-դանանց» դպրոցի սրահում մատուցւեց սուրբ եւ անմահ Պատարագ՝ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօների առիթով:



Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը եպիսկոպոսական հանդի-սաւոր Պատարագ մատուցեց Ս. Բեթղեհէմ եկեղեցում: Պատարագիչ Սրբազան Հօրն սպասարկում էին արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանը եւ արժն Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգ-չախումբը, ղեկավարութեամբ խմբավար Արմէն Ամիր-խանեանի:

Յընթացս արարողութեան, առաջնորդ Սրբազան Հայրն իր պատգամը փոխանցեց ներկայ հաւատա-ցեալներին, որտեղ նա անդրադառնալով մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի մարդեղացման եւ ծննդեան խոր-հուրդին՝ ասաց, որ Աստուածորդու այս աշխարհ գալու նպատակը ուրիշ բան չէր, եթէ ոչ՝ մարդուն մեղքի կա-պանքներից ազատելը եւ դէպի երկնքի արքայութեան ճանապարհ առաջնորդելը, ի՛նչը պարտաւորեցնում է մեզ վերանորոգ հաւատով եւ ապաշխարութեամբ սրբացւած՝ առաքինի կեանք վարել եւ ջանալ այսօրւայ դաժանութիւններով լեցուն աշխարհը խաղաղ եւ բա-րութեամբ լեցուն միջավայրի վերածել:



Յաւարտ սուրբ եւ անմահ Պատարագի տեղի ունե-ցաւ Ջրօրհնէքի արարողութիւն: Միւռոնաթափ աղաւ-նին հանդիսաւոր կերպով վեր բարձրացւեց Ս. Խորան, որտեղ Ջրօրհնէքի արարողութեան աղօթքներին, շա-րականներին եւ սաղմոսներին խառնելով իր մէջ բո-վանդակող սրբալոյս Միւռոնի մաքրարար եւ շնորհալի հեղումը՝ սրբագործեց ջուրը, որը բաժանւեց այնքա՜ն երկար սպասած հաւատացեալներին:

Նոյն օրը, կէսօրից յետոյ, Ջրօրհնէքի արարողու-թիւն տեղի ունեցաւ նաեւ Նոր Ջուղայի միւս եկեղեցի-

ներում. ժամը 14:00-ին, Ս. Սարգիս եկեղեցում՝ արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբյեանի, ժամը 15:00-ին Ս. Յովհաննու եկեղեցում՝ արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանի եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում՝ արժն. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանի միջոցով:



Երեկոյեան ժամը 5:30-ին, գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի նախագահութեամբ եւ ձեռամբ, Ջրօրհնէքի կարգ կատարուեց առաջնորդանիստ Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցում: Արարողութեանը մասնակցում էին հիւրաբար Նոր Ջուղայում գտնւող գերշ. Տ. Վարուժան արք. Հերկէլեանը, թեմի ամբողջ հոգեւորականաց եւ դպրաց դասերը. իսկ երգեցիկ խումբն էր Ս.Ա. վանքի «Կոմիտաս» երգչախումբը:

Ջրօրհնէքի արարողութեան աւարտին, թեմակալ առաջնորդն օրւայ պատշաճ իր քարոզը փոխանցեց ներկայ բազմութեանը՝ անդրադառնալով տօնին եւ Յիսուս Քրիստոսի այս աշխարհ բերած աստուածային սիրոյն, եւ շեշտեց, որ աստուածահաճոյ եւ արժանի կեանք ունենալու համար մեր Տիրոջ պատուիրած սէրը պէտք է կեանքի վերածել փոխադարձ յարգանքի եւ հանդուրժողականութեան հիման վրայ:



Արարողութիւնից եւ միւռոնաբոյր ջուրը հաւատացեալներին բաժանելուց յետոյ, առաջնորդարանի Ծաղկեայ դահլիճում գերշ. Սրբազան Հայրն ընդունեց Ս. Ծննդեան տօնի առթիւ շնորհաւորանքները:

## Ս. ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐԻ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ

Աստծու մօտ սիրոյ բարեխօս եւ սիրահարների պաշտպան սրբի՝ Ս. Սարգիս զօրավարի տօնի առթիւ, հովանաւորութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի եւ նախաձեռնութեամբ նոյն թեմի Կրօնական խորհրդի, ուրբաթ՝ յունուարի 22-ի երեկոյեան ժամը 8:00-ից, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան մարզասրահում տեղի ունեցաւ երիտասարդական տօնախմբութիւն, ուր Նոր Ջուղայի եւ Շահինշահրի հայ համայնքների 18-ից 35 տարեկան երիտասարդները տօնը նշեցին ուրախ եւ խանդավառ միջավայրում:



Երեկոն սկիզբ առաւ Կարին Տէր-Մարտիրոսեանի հանդիսավարութեամբ, ով տօնի խորհրդին անդրադառնալով, հանդէս եկաւ օրւայ առթիւ պատշաճ խօսքով ու մաղթանքներով՝ ի մասնաւորի բնաբան ունենալով թեմի առաջնորդ Սրբազան Հօր ճշտած կարգախօսը, որտեղ ասւած է *«Սէրը աղն է կեանքի, յաւերժահամն է կեանքի»*:



Այնուհետեւ երիտասարդ մասնակիցները, ովքեր իրենց գլուխներին եւ դաս-

տակներին կրում էին եռագոյնը խորհրդանշող ժապաւէններ, տօնը նշեցին պարելով՝ «Անի» նուագախմբի կատարմամբ հնչած ուրախ երգերի ներքոյ:



Ծրագրում տեղ էին գտել հիւրասիրութեան եւ վիճակախաղի բաժինները: Ներկաներին բաժանուեցին աղի բլիթներ:



Տօնախմբութեանը ներկայ էին նաեւ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգեշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը եւ Կրօնական խորհրդի անդամներ Վարուժ Մովսիսեանն ու Սաքօ Տէր-Յովհաննիսեանը: Ընթացքում Սրբազան Հայրը շնորհաւորելով Ս. Սարգիս զօրավարի տօնի կապակցութեամբ՝ բոլորին մաղթեց երջանկութիւն ու իղձերի իրականացում եւ կոչ արեց առաւել աշխուժութեամբ վայելել սիրոյ եւ սիրահարների այս գեղեցիկ տօնի առթիւ կազմակերպուած միջոցառումը: Սրբազան Հօր հայրական խօսքերից յետոյ երիտասարդների խանդավառութիւնը բազմապատկեց եւ երեկոն իսկական տօնի վերածուեց՝ պարերին խուռներամ մասնակցութեամբ:

Վերջում թեմակալ առաջնորդի եւ Կրօնական խորհրդի անդամների ձեռամբ վիճակախաղի երկու շահողներն ստացան նոյն խորհրդի կողմից նախատեսուած ոսկէ պարգեւները՝ խաչը եւ Ս. Մարիամ Աստուածածնի պատկերով մեդալիոնը:




Ծրագրի կազմակերպման գործում Կրօնական խորհրդի հետ համագործակցել էին Ն.Ջ. Հայուհեաց բարեգործական ընկերութիւնը եւ Ն.Ջ. Հայ կանանց գթութեան միութիւնը՝ խորհրդանշական ժապաւէնների, օրւայ անուշաբոյր պատառիկների եւ աղի բլիթների պատրաստման աշխատանքը յանձն առնելով:

## ԵՐԿՕՐԵԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ Ս. ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐԻ ՏՕՆԻ ԵՒ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՄԱՆՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ



Ուրբաթ եւ շաբաթ յունուարի 22-ին եւ 23-ին՝ Ս. Սարգիս զօրավարի եւ միեւնոյն ժամանակ Նոր Ջուղայի Ս. Սարգիս եկեղեցու անուանակոչութեան տօների առթիւ, համանուն եկեղեցում հոգեպարար արարողութիւններ մատուցուեցին՝ ուխտաւոր հաւատացեալների մասնակցութեամբ:

Ուրբաթ, կէսօրից յետոյ ժամը 3:00-ին, եկեղեցու շրջափակում, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի ձեռամբ եւ Թեմի հոգեւորականաց ու դպրաց դասերի մասնակցութեամբ կատարուեց Աղօրհնէք եւ ոչխարների զենում, իսկ երեկոյեան ժամը 6:00-ին՝ Հսկումի արարողութիւն: Հսկումի արարողութեան ընթացքում, Սրբազան Հայրն օրւան պատշաճ իր պատգամը փոխանցեց հաւատացեալներին:



Թեմակալ առաջնորդն իր քարոզում անդրադառնալով հաւատի կարեւորութեանը, եւ բնաբան ունենալով Պօղոս առաքեալի խօսքը, որտեղ ասւած է. «*Հաւատն առանց գործի մեռած է*», նշեց, որ մարդն իր գործով ու առօրեայ կեանքով պէտք է իր սէրն ու հաւատը ցոյց տայ Աստծու նկատմամբ: Այնուհետեւ անդրադառնալով Ս. Սարգիս զօրավարին ու նրա նահատակւած զինակիցներին, ասաց, որ Ս. Սարգիսը վկան դարձաւ այն հաւատի, որը աշխարհ բերւեց Քրիստոսի միջոցով եւ փոխանցւեց մեզ, որպէսզի ապրենք դրանով, նո՛յն վստահութեամբ մօտենանք Աստծուն, արժեւորենք եւ իմաստաւորենք մեր կեանքը: Գերշ. Սրբազան Հայրն իր պատգամի աւարտին օրհնելով երիտասարդներին, ցանկացաւ, որ սիրոյ բարեխօս Ս. Սարգիսը երիտասարդների բարեխօսը դառնայ Աստծու մօտ՝ նրանց բոլոր իղձերի ու խնդրանքների կատարման համար:



Նոր Ջուղայի Հայոց առաքելական եկեղեցեաց վարչութեան կազմակերպութեամբ եւ յատուկ նշանակւած յանձնախմբի միջոցով, ուրբաթ օրւայ յետմիջօրէից, եկեղեցու շրջափակում սկսւեց հարիսայի պատրաստման աշխատանքը:

Շաբաթ՝ յունւարի 23-ի առաւօտեան, Ս. Սարգիս եկեղեցում բազմաթիւ հաւատացեալների մասնակցութեամբ, սկիզբ առաւ եպիսկոպոսական սուրբ եւ անմահ Պատարագ՝ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի ձեռամբ, եւ մասնակցութեամբ հոգեւորականաց ու դպրաց դասերի:



Երկօրեայ արարողութիւնների երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ խմբավար Արմէն Ամիրխանեանի:



Ս. Պատարագի ընթացքում յաւուր պատշաճի քարոզեց գերշ. Սրբազան Հայրը: Նա ներկաներին ուղղած իր հայրական խօսքի մէջ համառօտ ակնարկ ունեցաւ Ս. Սարգիս Զօրավարի վարքի ու գործունէութեան մասին, եւ սուրբերի կեանքը լաւագոյն օրինակը ներկայացրեց՝ Քրիստոսի ուսուցանած հաւատն ու քարոզած կեանքը վայել կերպով ապրելու եւ արժեւորելու համար:



Գերշ. Սրբազան Հայրն իր խօսքի մի այլ բաժնում խօսելով Ս. Սարգսի նկատմամբ հայ ժողովրդի ունեցած յատուկ վերաբերմունքի մասին՝ իբրեւ սիրոյ եւ երիտասարդների փափագները կատարող սուրբի, մաղ-

թեց, որ սուրբի բարեխօսութեամբ բոլոր հաւատացեալների, ի մասնաւորի երիտասարդների կեանքը ողողի եւ ուռճանայ աստուածային սիրով եւ հաւատարմութեամբ:



Առաջնորդ Սրբազան Հայրն իր պատգամի աւարտին գնահատանքի խօսք ուղղեց հոգեւորականաց եւ դպրաց դասերին, երգեցիկ խմբին, Կրօնական Խորհրդին, Նոր Ջուղայի Հայոց առաքելական եկեղեցեաց վարչութեանը, Կանանց ու Մատաղի յանձնախմբերին, մատաղացու նւիրողներին, այլ նւիրատուներին եւ բոլոր հաւատացեալներին՝ իրենց զօրակցութեամբ եկեղեցին պայծառացնելու համար:

Ս. Պատարագի աւարտին Ս. Խորան բարձրացան հոգեւորականաց ու դպրաց դասերը, եւ պատարագիչ Սրբազան Հօր նախագահութեամբ Ս. Սարգիս Զօրավարի աջով կատարւեց Ջրօրհնէքի արարողութիւն: Օրհնւած ջուրը բաժանւեց ներկայ հաւատացեալներին՝ դառնալու հիւանդութիւնների ու ցաւերի բուժման, դժւարութիւնների փարատման եւ հաւատի հզօրացման միջոց:



Եկեղեցու մէջ տեղի ունեցած արարողութիւններից յետոյ, բակում կատարւեց Մատաղօրհնէք, եւ հարիսայի պատրաստման յանձնախմբի երկօրեայ աշխատանքի հասոյթը օրհնւելուց յետոյ բաժանւեց ժողովրդին:

Նշենք, որ արարողութեանը մասնակցել էին նաեւ Ն.Ջ. Հայոց ազգային «Արմէն» տարրական երկսեռ համալիրի 6-րդ դասարանցիները իրենց ուսուցիչների եւ Ծնողական խորհրդի ընկերակցութեամբ:

## «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՏԱՐԻԱՅ» ԱՌԹԻՒ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵԿԵՂԵՑՈՒՄ



Շաբաթ՝ յունւարի 30-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Ս. Յովհաննու եկեղեցում, ժամը 5:30-ին, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի եւ մասնակցութեամբ քահանայից ու դպրաց դասերի տեղի ունեցաւ կիրակնամուտի ժամերգութիւն, որի աւարտին, թեմակալ առաջնորդ Սրբազան Հօր միջոցով՝ ընթերցւեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի Հայրապետական գիրը՝ 2016 թւականը «Ծառայութեան տարի» հռչակելու կապակցութեամբ:

Սրբատառ հռչակագրում Վեհափառ Հայրապետը ծառայութիւնը մարդկային կեանքի ամենաբարձր արժէքներից ու արժանիքներից մէկը համարելով, այդ երեւոյթին անդրադարձել էր հետեւեալ գլուխների ներքոյ.

ա. Ծառայութիւնը Աստուածաշնչում

բ. Ծառայութիւնը եկեղեցու հայրերի ուսուցումներում

գ. Ծառայութիւնը քրիստոնէական հաւատքի էութիւնն է

դ. Ծառայութիւնը եկեղեցու կոչումն է

ե. Ծառայութիւնը համայնքային ու պետական կառոյցների պարտաւորութիւնն է

զ. Ծառայութիւնը իւրաքանչիւր հայի պարտքն է ու պատիւն է

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսն իր հռչակագրի աւարտին կոչ էր ուղղել՝ լուսարձակի տակ բերելով ծառայութեան կենսական կարեւորութիւնը մեր կեանքում, զանազան ձեռնարկների միջոցով՝

- Գնահատելու համայնքին ծառայութիւն մատուցած

ազգայիններին:



- Յիշեցնելու, յատկապէս երիտասարդներին, ազգին ծառայելու հրամայականը՝ մեր հաւաքական կեանքին՝ իրենց գործօն մասնակցութեամբ:

- Կոչ ուղղելու տարբեր կարողութիւններով ու հնարաւորութիւններով օժտուած մեր ազգայիններին, որ օգտակար հանդիսանան համայնքի ծաղկման, եկեղեցու պայծառացման, հայրենիքի հզօրացման ու ազգի առաջադիմութեան նպաստող ծրագրերին ու աշխատանքներին:

Վերջում թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը ողջունելով Վեհափառ Հայրապետի մտայղացումը՝ 2016 թւականը «Ծառայութեան տարի» հռչակելու կապակցութեամբ, յորդորեց՝ առաւել յանձնառութեամբ ծառայել ազգին, հայրենիքին, եկեղեցուն եւ համայնքին:



Ժամերգութեան ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկիչ վանքի «Տաթեւ» երգչախումբը՝ խմբավար Համիկ Ալեքսանդրեանի ղեկավարութեամբ: Արարողութեանը ներկայ էին նաեւ թեմի ազգային մարմինների եւ միութիւնների ներկայացուցիչներն ու հաւատացեալ ժողովուրդ:

# ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՏՕՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Երեքշաբթի՝ 2016 թւականի փետրուարի 2-ին, սրբոց Ղեւոնդեանց տօնին, որը միաժամանակ քահանայութեան եւ քահանաների տօնն է, սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց Նոր Ջուղայի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցում, որին նախագահեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը: Ս. Պատարագը մատուցեց Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գումանեանի ձեռամբ: Երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբը: Ներկայ էին Սպահանի հայոց թեմի բոլոր քահանայ հայրերը, ովքեր զգեստաւորուած հետեւում էին արարողութեանը, սպասարկում էր դպրաց դասը, եւ աղօթակից էր հաւատացեալների բազմութիւնը:



Քարոզի պահին, հոգշ. Հայր Սուրբը բնաբան ունենալով՝ «*Ով որ մարդկանց առաջ դաւանի, թէ հետեւում է Ինձ, Մարդու Որդին էլ նրա՛ն պիտի դաւանի իբրեւ Իրեն հետեւորդի՝ Աստծու հրեշտակների առաջ: Իսկ ով որ Ինձ ուրանայ մարդկանց առաջ, Մարդու Որդին էլ նրա՛ն պիտի ուրանայ Աստծու հրեշտակների առաջ*» (Ղկ 12.8-9) աւետարանական հատուածը, շեշտեց, որ իւրաքանչիւր քրիստոնեայի հպարտութիւնն ու պարծանքը պէտք է լինի դաւանել եւ վկայել քրիստոնէական սուրբ հաւատը, ինչի համար քաջութեամբ ապրեցին, գործեցին եւ անգամ մահը յանձն առան սուրբ Ղեւոնդեանք, ովքեր իրենց կեանքը նւիրաբերեցին հաւատի եւ հայրենիքի համար:



Հոգշ. Հայր Սուրբը շնորհաւորելով թեմակալ առաջնորդին եւ թեմի քահանաներին իրենց տօնի առիթով, իր խօսքը

շարունակեց՝ ասելով, որ հոգեւորականը զօրաւոր է եւ յաջողակ իր ծառայական կեանքում, երբ իր հետ ունի իր ժողովրդի աջակցութիւնը, սէրն ու համակրանքը:



Ս. Պատարագի աւարտին Հոգեհանգստեան արարողութիւն կատարուեց Թեմում ծառայած ննջեցեալ քահանայ հայրերի հոգիների խաղաղութեան համար:

Եկեղեցական արարողութիւնից յետոյ, ներկայ հաւատացեալները Ս. Խորանի առջեւ կանգնած հոգեւորականաց դասին մօտենալով, իրենց շնորհաւորանքն ու բարեմաղթանքները փոխանցեցին նրանց:



Եկեղեցու բակում, Նոր Ջուղայի Հայոց եկեղեցեաց վարչութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ գեղարուեստական կոկիկ յայտագիր, որի ընթացքում ընթերցուեց Ս. Գրիգոր Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» գրքից աղօթք, երգեր ձօնեցին հոգեւորականներին, խօսք ասուեց Եկեղեցեաց վարչութեան կողմից եւ հոգեւորականաց դասի անունից շնորհակալութիւն յայտնեց արժ. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը:




Առաջնորդ Սրբազան Հայրը շնորհաւորական եւ շնորհակալական խօսքերով եզրափակեց հանդիսութիւնը՝ շեշտելով, որ հայ հոգեւորականութիւնը միշտ եղել է իր ժողովրդի կողքին իբրեւ բարի եւ քաջ հովիւներ: Թեմակալ առաջնորդը անդրադառնալով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի կողմից 2016 թուականը «Ծառայութեան տարի» հռչակելուն, յիշեցրեց, որ ծառայութիւնը եկեղեցուն եւ նրա ճանապարհով՝ հայ ժողովրդին եղել է հայ հոգեւորականի ուղին եւ կեանքի հրամայականը:

Հիւրասիրութեան աւարտին, առաջնորդ Սրբազան Հօր ձեռամբ յուշանուէրներ յանձնուեցին Թեմի բոլոր հոգեւորականներին, արարողութեանը մասնակցած սարկաւագներին եւ տկն. Քլար Ղեւոնդեանին, որը սրտաբուխ նուիրատւութիւն էր՝ կատարուած տկն. Տիգրանուհի Օրօջեանի կողմից:

## ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԸ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Հինգշաբթի՝ փետրուարի 4-ի առաւօտեան, Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցում, Սրբոց Վարդանանց տօնի առիթով, Ս. Պատարագ մատուցուեց արժ. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանի միջոցով:



Արարողութեանը մասնակցում էին քահանայից ու դպրաց դասերը, իսկ երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս.Ա. վանքի «Կոմիտաս» երգչախումբը:

Աւանդոյթի համաձայն, Ս. Պատարագին ներկայ գըտ-



նուեցին նաեւ Նոր Ջուղայի հայոց ազգային դպրոցների տեսչութիւնները, ուսուցչական կազմերը, Ծնողական խորհուրդները ու աշակերտութիւնը:

Ս. Պատարագի ընթացքում յաւուր պատշաճի քարոզեց պատարագիչ Քահանայ Հայրը, ով ակնարկելով հայ ժողովրդի քրիստոնէութեան ընդունմանը, ասաց. «*Հայ ժողովրդին ոչ ոք չկարողացաւ հեռացնել իր հաւատից, քանի որ դա Աստծու նկատմամբ ունեցած հաւատ էր: Ճի՛շտ է, հայ ժողովուրդը պարտուեց Աւարայրի ճակատամարտում, բայց մեծաթիւ զոհեր խլեց թշնամուց: Հայն ընկաւ պատերազմում, բայց չուրացաւ իր հաւատը եւ պահեց իր կրօնն ու ազգութիւնը: Եւ դարեր յետոյ հայ ժողովուրդը նոյն այդ ոգով կերտեց Սարդարապատի ու Արցախի հերոսամարտերը*»:

Քարոզի աւարտին արժ. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանն իր խօսքն ուղղելով ներկաներին, ի մասնաւորի աշակերտութեանը, կոչ արեց՝ լաւ մարդ ու լաւ հայ դառնալու համար ուսումնասիրել հայոց պատմութիւնը, լաւ ճանաչել մեր նախնիներին եւ յատկապէս ճանաչել հայ ազգի արժէքներն ու արժանիքները:

Վերջում Ս. Հաղորդութիւն ստացան հայոց դպրոցի աշակերտութիւնն ու միւս ներկաները:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ ՆՇՈՒԵՑ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՆԱԽԱՏՕՆԱԿԸ

Շաբաթ՝ փետրուարի 13-ի երեկոյեան, Տեառնընդառաջի նախատօնակի առթիւ, Նոր Ջուղայի Ս. Ստեփանոս, Ս. Յովհաննու, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Ս. Մինաս եկեղեցիներում, հերթաբար արժ. Տ. Սեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանի, արժ. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանի, արժ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանի եւ արժ. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանի միջոցով իրականացուեցին եկեղեցական հոգեպարար արարողութիւն եւ աւանդական հրավառութիւն:





Նշուած եկեղեցիներում քահանայ հայրերը ելոյթ ունեցան օրուան պատշաճ քարոզով, ապա արարողութեան աւարտին կատարեցին մանուկների տաճար ընծայման կարգը, իսկ նորապսակ զոյգերի ընկերակցութեամբ եկեղեցիների բակում վառեցին աւանդական խարոյկը:

Արարողութիւնից յետոյ, նոյն օրը երեկոյեան ժամը 7:00-ին, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան շրջափակում, նախաձեռնութեամբ Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի եւ կազմակերպութեամբ Նոր Ջուղայի Հայոց առաքելական եկեղեցեաց վարչութեան, տեղի ունեցաւ հրավառութիւն: Խարոյկը բոցավառեցին Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանն ու նորապսակ զոյգերը:

Այնուհետեւ միութեան սրահում կայացաւ ամենամեայ միջոցառումը, ուր նորապսակ զոյգերը եւ նորածինները ու իրենց ծնողները հանդիպեցին Հայր Սուրբին եւ ազգային մարմինների ներկայացուցիչներին: Ծրագրին ներկայ էին նաեւ քահանայից դասը, Պատգամաւորական ժողովի դիւանի եւ Թեմական ու Կրօնական խորհուրդների ներկայացուցիչները եւ Ն.Ջ. Հայոց առաքելական եկեղեցեաց վարչութեան անդամները:



Ծրագրի հանդիսավարութիւնը կատարեց Մանիա Ղուկասեանը, իսկ ընթացքում արտայայտուեցին Եկեղեցեաց Վարչութեան նախագահ պրն. Ղուկաս Ծատուրեանը եւ Կրօնական Խորհրդի ատենապետ պրն. Վարուժ Մովսիսեանը, ովքեր շնորհաւորելով բոլորին տօնի կապակցութեամբ, փոխանցեցին իրենց ջերմագին մաղթանքները:





Երեկոյի շարունակութեան մէջ հրաւիրեալները լուսանկարուեցին Հայր Սուրբի եւ ազգային մարմինների ներկայացուցիչների հետ, որից յետոյ նորապսակները եւ նորածինները ու իրենց ծնողները հերթաբար հատեցին նախատեսուած տորթերը:

Մթնոլորտն առաւել աշխոյժ դարձաւ կանանց եւ տղամարդկանց համար կազմակերպուած մրցոյթներով, որոնց շահողները պարգեւատրուեցին յուշանուէրներով:



Վերջում, ձեռամբ Հայր Սուրբի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների եւ Եկեղեցեաց Վարչութեան անդամների յուշանուէրներ յանձնուեցին նախ նորածիններին, ապա՝ նորապսակ զոյգերին, որից յետոյ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը ներկաներին տուեց իր օրհնանքը: Նա սկզբում փոխանցեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի հայրական օրհնանքը եւ մաղթանքները, ապա շնորհաւորեց բոլոր նորածինների ծնողներին՝ իրենց ընտանիքները զաւակներով համալրելու կապակցութեամբ ու նորապսակ զոյգերին մաղթեց անսահման սէր, հաւատարմութիւն, փոխզիջում ու փոխհասկացողութիւն:



Հոգշ. Հայր Սուրբը վերջում շնորհակալութիւն յայտնեց Կրօնական Խորհրդին, ի մասնաւորի Եկեղեցեաց Վարչութեանը՝ այս գեղեցիկ միջոցառումը կազմակերպելու համար:

## ՆՈՐԱՄՈՒՏ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ



2014-2015 եւ 2015-2016 ուսումնական տարեշրջաններին, դոկտորայի, գերլիսանսի, լիսանսի եւ գերդիպլոմի մակարդակներում երկրի տարբեր համալսարաններ մուտք գործած Նոր Ջուղայի եւ Շահինշահրի 66 հայ երիտասարդ-ուհիներին գնահատելու նպատակով՝ Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի նախաձեռնութեամբ, չորեքշաբթի՝ յունուարի 27-ի երեկոյեան, Նոր Ջուղայի հայոց ազգ. կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» դահլիճում կազմակերպուել էր գնահատման երեկոյ, որին նշուած տարեշրջանների նորամուտ ուսանողներից ու իրենց ծնողներից բացի, ներկայ էին նաեւ թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը, Իրանի Իսլ. Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը, Պատգամաւորական ժողովի Դիւանի եւ Թեմական ու Կրօնական խորհուրդների ատենապետեր՝ Վարուժ Մինասեանը, Վրէժ Տէր-Մարտիրոսեանն ու Վարուժ Մովսիսեանը, Կրթական խորհրդի անդամները եւ հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչներ:

Սկզբում ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Կրթական

խորհրդի գործավար եւ երեկոյի հանդիսավար Մադլէն Ղարիբեանը, ով իր խօսքում շնորհաւորելով նորամուտ ուսանողներին իրենց յաջողութեան համար, առաջադէմ եւ դաստիարակւած սերունդը հայ ազգի յարատեւման երաշխիքը համարեց:



Ապա Կրթական Խորհրդի անունից ելոյթ ունեցաւ նոյն խորհրդի անդամ Սոնիկ Բաղումեանը: Նա շնորհաւորանքի խօսք ասելով նորամուտներին՝ իրենց բարձրագոյն կրթութեան ուղին սկսելու կապակցութեամբ, նշեց. «*Դուք՝ որպէս համալսարանականներ, պէտք է գիտութեանը վերաբերուէք նորովի մօտեցմամբ եւ ձեր վերաբերմունքը ճշտէք ոչ միայն գիտութիւն ձեռք բերելու առումով, այլեւ ձերը արարելու կարեւոր եւ յստակ պարտականութեամբ. դա է մարդկային հասարակութիւնների զարգացման երաշխիքը, որի արդիւնքում դուք կը կարողանաք աւելացնել մարդկային հասարակութիւնների գիտական շտեմարանը՝ յանուն մարդու երջանկութեան, որը հիմքն է կազմելու նաեւ ձեր, ընտանիքների, հայ ազգի ու հայրենիքի երջանկութեան*»:



Այնուհետեւ օրւայ առթիւ բանախօսութիւն ծաւալեց Իրանի Իսլ. խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը, ով ողջունելով նորամուտների յաջողութիւնները, իր խօսքի սկզբնական բաժնում անդրադառնալով գիտութեան զարգանալու արագ ընթացքին՝ կարեւորութեամբ նշեց, որ կարելի է համալսարանը աւարտել, սակայն երբեք չի կարելի կրթւելն աւարտել, քանի որ գիտութեան աշխարհի հետ զուգահեռ քայլելու համար՝ հարկաւոր է օրըստօրէ նորացնել եւ թարմացնել գիտելիքների պաշարը:

Խօսքի շարունակութեան մէջ բանախօսը մատնանշելով գիտութեան շնորհիւ ձեռք բերւող հնարաւորութիւններն ու առաւելութիւնները՝ յորդորեց չբաւարարուել ընտրած ճիւղում մասնագիտանալով եւ յաջողութիւններ արձանագրելու համար փորձել զուգահեռ մասնագիտութիւններ ձեռք բերել կամ նւազագոյն գիտելիքներ կուտակել յատկապէս տնտեսութեան, քաղաքականութեան, իրաւագիտութեան եւ հասարակագիտութեան ասպարէզներում:



Պրն. Բեգլարեանն իր խօսքի վերջին բաժնում հայ ազգի պատմութեան եւ արժէքների ճանաչելն ու ուսումնասիրելը հայ ուսանողի պարտականութիւնը համարելով, կարեւորութեամբ ընդգծեց, որ այդպիսով կարող ենք մեր հայ ծնւելու փաստը դարձնել ինքնավստահութեան եւ հպարտութեան առիթ:

Ծրագրի շարունակութեան մէջ պաստառի վրայ ցուցադրուեցին անւանի իրանահայերից լուսանկարներ՝ նրանց կենսագրական գծերին ու գործունէութեանն անդրադարձող ամփոփ բացատրականներով:

Արտայայտւեց նաեւ Թեմական Խորհրդի ատենապետ Վրէժ Տէր-Մարտիրոսեանը, ով իր ուրախութիւնը յայտնելով համալսարանների մուտքի քննութիւններում հայ երիտասարդների յաջողութեան կապակցութեամբ, նրանց նորանոր յաջողութիւներ մաղթելով, նշեց. «*Համալսարանն աւարտելուց յետոյ ոչ միայն պէտք է մտածէք ձեր եւ ձեր ընտանիքի համար բարեկեցիկ կեանք ապահովելու մասին եւ երկրի վերելքի ու յառաջդիմութեան ուղղութեամբ, այլեւ պէտք է ունենաք ազգային մտածողութիւն եւ ձեր գիտութիւնն ու եռանդը ներդնէք նաեւ ազգային կեանքը զարգացնելու եւ բարեփոխելու համար*»:

Այնուհետեւ թեմակալ առաջնորդ Սրբազան Հօր, խորհրդարանի պատգամաւորի եւ Սպահանի հայոց

թեմի Պատգամաւորական ժողովի Դիւանի ու Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետերի, ինչու չէ նաեւ Կրթական խորհրդի ատենապետուհի Սաթենիկ Աւետումեանի միջոցով նորամուտ ուսանողներն առանձնաբար ստացան իրենց գնահատագրերն ու նուէրները: Իսկ այս բաժնի աւարտին Կրթական խորհրդի կողմից եւ առաջնորդ Սրբազան Հօր ձեռամբ յատուկ պատուոգիր շնորհուեց խորհրդարանի պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանին՝ իր պատգամաւորութեան 12 տարիների ընթացքում հայոց դպրոցների կողքին լինելու եւ դրանց զօրավիգ հանդիսանալու համար:



Երեկոյի եզրափակիչ խօսքն արտայայտեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը, որը գնահատելով Կրթական խորհրդին՝ երեկոյի կազմակերպման համար, ուսանողներին ասաց, թէ գիտութեան օրուայ զարգացումների հետ համընթաց քայլեն եւ շարունակ թարմացնեն իրենց գիտելիքները:

Սրբազան Հայրն իր խօսքի շարունակութեան մէջ կարեւորելով մարդու նկարագիրը, նշեց «*Երբեմն մարդը գիտութեան ոլորտում բարձրանում է, սակայն չի կարողանում ճիշտ վերաբերմունք ցոյց տալ իր նմանի նկատմամբ*», եւ երիտասարդ ներկաներին յորդորեց իրենց նկարագիրն առողջ պահել՝ հայրենիքի, ազգի, եկեղեցու եւ համայնքի նկատմամբ:

Վերջում Տ. Բաբգէն արք. Չարեանը յիշեցնելով, որ աննպատակ կեանքը մարդուն դէպի անդունդը կը տանի, իսկ նպատակադրուածը՝ մարդուն կառաջնորդի դէպի այնտեղ, ուր Աստուած կը վարձատրի, կոչ ուղղեց հրաւիրեալներին, որ կրթուելուց բացի մասնակցութիւն ունենան ազգային եւ հոգեւոր ծրագրերին՝ բազմակողմանի զարգանալու եւ զանազան գիտելիքներով հարըստանալու համար:

Երեկոյի աւարտին երկու տարեշրջանների նորամուտներն առանձնաբար լուսնակարուեցին, որից յետոյ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:





# ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՒ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ՝ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԾԵՐԱՆՈՑ

Տարիներ է, ինչ Նոր Ջուղայի Հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարանի տեսչութեան եւ ուսուցչական կազմի ու Հայ կանանց գթութեան միութեան վարչութեան համագործակցութեամբ դրւատանքի արժանի մի աւանդոյթ է ձեւաւորուել, որի համաձայն մանկապարտէզի սաներն այցելում են Սպահանի հայոց թեմի միակ ծերանոց՝ մասնակցելու սոյն հանգստեան տան բնակիչների համար կազմակերպւած ամանորեայ միջոցառմանը եւ իրենց ջերմագին մաղթանքներն ու շնորհաւորանքները փոխանցելու այնտեղում բնակւող տարեցներին:



Միջոցառումը կազմակերպւում է ծերանոցի հիմնադիր եւ կառավարող հաստատութեան՝ Հայ կանանց գթութեան միութեան միջոցով՝ նպատակ ունենալով տօնական օրերին, տեղի բնակիչների համար ստեղծել ջերմ եւ խանդավառ մթնոլորտ ու անմոռանալի պահեր: Անկասկած երեկոն յիշարժան չի լինի, եթէ ներկայ չգտնուեն փոքրիկ սաները, ովքեր ոչ միայն բաւարարութիւն եւ հրճւանք են պատճառում ծերանոցի բնակիչներին, այլեւ իրենց գեղեցիկ կատարումներով ու քաղցր խօսքերով տօնն աւելի գունագեղ են դարձնում այս սիրալիր էակների համար:

Այս տօնախմբութիւնն այս տարի տեղի ունեցաւ կիրակի, յունւարի 3-ի երեկոյեան ժամը 4-ին: Սկզբում մանկապարտէզի Դեղին խմբակի չորս տարեկան աշակերտներին ու դպրոցի պատասխանատուներին լայն ժպիտներով դիմաւորեցին Կանանց գթութեան միութեան անդամուհիները: Այնուհետեւ բոլորը համախմբւեցին ծերանոցի սրահում, ուր աւելի ուշ իրենց միացան Ձմեռ պապն ու Ձիւնանուշը:

Ծրագրում տեղ էին գտել սաների հիասքանչ կատարումները՝ ամանորեայ թեմաներով երգերն ու արտասանութիւնները, իսկ ընթացքում հնչեցին հայկական երգեր, որոնց ներքոյ շուրջպար բռնեցին աշակերտները, Ձմեռ պապը, Ձիւնանուշը եւ միւս ներկաները: Երեխաների մօտ յատկապէս մեծ տպաւորութիւն գործեց Ձմեռ պապիկի հետ մօտիկից շփւելը եւ նրա հետ մտերմիկ ու անկեղծ զրոյցներ ունենալը:

Ծարունակութեան մէջ ջերմ խօսքերով հանդէս եկաւ հիւրընկալ միութեան վարչութեան նախագահ Արմինէ Սիմոնեանը, ով բարի գալստեան խօսք ասաց հիւրերին, շնորհաւորեց Ամանորը եւ իր խորին շնորհակալութիւններն յայտնեց դպրոցի պատասխանատուներին սաների այցելութիւնը կազմակերպելու համար: Նա անդրադառնալով այն հանգամանքին, որ 2016 թւականը Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի կողմից հռչակւել է Ծառայութեան տարի, մաղթեց բոլորին՝ առաւել ջերմեռանդութեամբ ծառայել հայ ազգին ու հայրենիքին:



Յաջորդիւ արտայայտւեց Նոր Ջուղայի մանկապարտէզ-նախակրթարանի տեսչուհի Քառոլին Դիլանչեանը, ով իր ուրախութիւնը յայտնեց Նոր տարւայ առթիւ ծերանոցի յարկի ներքոյ տարբեր սերունդների համախմբման եւ յատկապէս փոքրերի աշխուժութեան եւ կենսուրախութեան ու տարեցների խոհեմութեան եւ իմաստութեան շնորհիւ ստեղծւած գեղեցիկ համադրութեան համար, ծերանոց կատարւող այցելութիւնները դպրոցի պատասխանատուների եւ աշակերտութեան պարտքը համարելով, ասաց, որ նման ծրագրերի շնորհիւ ոչ միայն մեր ուշադրութիւնն ու յարգանքն ենք ցուցաբերում տարեցներին, այլեւ աշակերտները սովորում են տարեցների նկատմամբ ունենալ խնամքով ու գուրգուրանքով վերաբերմունք:



Այնուհետեւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որից յետոյ փոքրիկներն իրենց ձեռքով դպրոցի Ծնողական խորհրդի պատրաստած նւէրները յանձնեցին տարեցներին, իսկ ծերանոցի բնակիչներն ու սաները Ձմեռ պապիկից ստացան Կանանց գթութեան միութեան միջոցով պատրաստւած նւէրները:

## ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ 37-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ՔԱՆԱՆԵԱՆ» ԴՊՐՈՑԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ

Նոր Ջուղայի հայոց ազգ. «Քանանեան» աղջկանց միջնակարգ դպրոցի տնօրինութեան, ուսուցչական կազմի եւ ծնողական խորհրդի համատեղ նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ իրագործուեցին երկու միջոցառումներ, ուր հանդիսութեամբ նշուեց Իրանի Իսլ. յեղափոխութեան 37-ամեակը:



Երկուշաբթի՝ փետրուարի 15-ի առաւօտեան հայոց ազգ. կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում տեղի ունեցաւ «Վիկտորինա» մրցոյթը, որտեղ դպրոցի 8-րդ եւ 9-րդ դասարանների աշակերտուհիները ու ծնողները պատասխանեցին ընդհանուր գիտելիքների շրջագծում նախատեսուած հարցումներին: Որպէս հանդիսատես ներկայ էին՝ Սպահան քաղաքի 3-րդ շրջանի Կրթադաստիարակչութեան հիմնարկի միջնակարգի առաջին բաժնի պատասխանատու պրն. Սեփեհնին, դպրոցի աշխատակազմի ներկայացուցիչներ, ծնողներ եւ աշակերտներ:



Մրցոյթի կազմակերպման եւ հարցաշարի պատրաստման բարդ աշխատանքն իրականացրել էին՝ հայերէն առարկաների դասատու Սեդա Դիլանչեանը եւ գրադարանավարուհի Կարին Տէր-Մարտիրոսեանը, իսկ իրաւարարութեան պատասխանատու գործն ստանձնել էին ուսուցչուհիներ՝ Կարինէ Մինասեանն ու Սիւնէ Մինասեանը: Հաղորդավարութեամբ ելոյթ ունեցան գրադարանավարուհին ու դպրոցի փոխտեսուչ Ռիմա Սիմոնեանը, իսկ մասնակիցները հանդէս եկան տասնվեց երեք հոգանոց խմբերի ներքոյ:

Սկզբում բոլոր խմբերը պատասխանեցին մրցութային առաջին փուլի հայերէն եւ պարսկերէն հարցերին, ապա արդիւնքների ամփոփումից յետոյ, լաւագոյն երկու խմբերը թեւակոխեցին եզրափակիչ փուլ: Վերջում յաղթող ճանաչուեց խմբերից մէկը՝ աշակերտներ Ռենիա եւ Անիա Մինասեանների ու ծնող Արաքս Մինասեանի անդամակցութեամբ: Յաղթող խմբի անդամները պարգեւատրուեցին պրն. Սեփեհնիի եւ դպրոցի տեսչուհի տկն. Սալարիֆարի ձեռամբ:

Ծրագրի աւարտին պրն. Սեփեհնին բարձր գնահատեց դպրոցի պատասխանատուների այս իւրօրինակ նախաձեռնութիւնը:

Յատկանշական է, որ սոյն միջոցառումը մեծ խանդավառութիւն առաջացրեց ոչ միայն մասնակից աշակերտուհիների, այլեւ ծնողների մօտ, ովքեր առիթ ունեցան իրենց զաւակների կողքին մրցելու, վայելելու ծրագրի հաճելի եւ աննկարագրելի եռուզեռը եւ յատկապէս առաւել հարստացնելու իրենց գիտելիքների շտեմարանը:



Պանծալի առիթին նուիրուած երկրորդ նախաձեռնութիւնն էր հայոց ազգ. կրթահամալիրի կենտրոնական դահլիճում կազմակերպուած իրանահայութեան տարազների ցուցահանդէսը, որի աշխատանքի մեկնարկը տրուեց շաբաթ՝ փետրուարի 20-ի առաւօտեան՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Բաբգէն արք. Չարեանի միջոցով ժապաւէնի հատմամբ: Ցուցահանդէսի պաշտօնական բացմանը ներկայ էին Սպահան քաղաքի 3-րդ շրջանի Կրթադաստիարակչութեան հիմնարկի տնօրէն պրն. Դահիղը եւ նրան ընկերակցող պատուիրակութիւնը, թեմի ազգային մարմինների ներկայացուցիչներ, դպրոցի ծնողները ու աշակերտութիւնը եւ համայնքի անդամներ:

Ժապաւէնի հատումից յետոյ ներկաները բոլորուեցին սրահում, ուր ցուցադրուել էին 17-20-րդ դարերի իրանահայութեան տարազներից լուսանկարներ, իսկ կենտրոնում ուշագրաւ էին յատկապէս Նոր Ջուղայի եւ Փերիա

ու Չհարմահալ գաւառների նորահարսի, կնոջ, ուսուցչուհու եւ աշակերտուհու հանդերձանքներով զգեստաւորուած վեց աղջիկներն ու խնամքով դասաւորուած աւանդական կենցաղային իրերը:



Սկզբում ողջոյնի խօսքով հանդէս եկաւ դպրոցի փոխտեսուչ Ռիմա Սիմոնեանը: Նա նշելով, որ ցուցահանդէսը կազմակերպուել է ուսուցողական եւ դաստիարակչական նպատակների հիման վրայ, ընդգծեց, թէ ցուցադրուած լուսանկարները պատկանում են 1984 թուականին տեղի ունեցած իրանահայութեան տարազների ցուցահանդէսին, որը իրականացուել էր Խաժակ Տէր-Գրիգորեանի ղեկավարութեամբ կատարուած լայն ուսումնասիրութիւնների արդիւնքում: Տկն. Սիմոնեանը նշեց նաեւ, որ լուսանկարների արխիւը համալրելու գործում դպրոցին օժանդակել է Հիլդա Խուդաբախշեանը:

Այնուհետեւ գրադարանավարուհի Կարին Տէր-Մարտիրոսեանը պարսկերէն լեզուով ներկաներին բացատրեց ցուցահանդէսի բնոյթն ու կազմակերպման նպատակները:



Դպրոցի տեսչուհի տկն. Սալարիֆարն իր ելոյթի ընթացքում հանգամանօրէն անդրադարձ ունեցաւ հագուստի ծագումնաբանութեանը՝ զանազան ազգութիւններում, ապա դրւատանքով յիշեց իրանահայութեան կառուցողական գործունէութիւնը՝ Իրանի պատմութեան տարբեր հանգրւաններում:

Բացման հանդիսութեան շարունակութեան մէջ ներկաները առիթ ունեցան դիտելու ցուցադրուած հագուստներն ու լուսանկարները:

Ցուցահանդէսի աշխատանքն աւարտեց փետրուարի 25-ին: Այս գեղեցիկ նախաձեռնութեան իրականացման գործում դպրոցի պատասխանատուների հետ սերտ համագործակցութիւն էին ցուցաբերել համայնքի միութիւններն ու մի շարք անհատներ:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳ. ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ՝ ՓԵՏՐՈՒԱՐ ԱՄՍՈՒԱՅ ԸՆԹԱՑՔՈՒՄ



Նոր Ջուղայի Հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարանի փոքրիկ սաներին ազգային եւ հոգեւոր արժէքներին ու տօներին ծանօթացնելու, ինչու չէ նաեւ նրանց համար գեղեցիկ եւ անակնկալներով լի մթնոլորտ ապահովելու համար՝ դպրոցի տեսչութիւնը, ուսուցչական կազմն ու Ծնողական խորհուրդը, ուսումնական տարեշրջանի ընթացքում նախաձեռնում եւ կազմակերպում են բազմաթիւ ձեռնարկներ ու միջոցառումներ:

Ստորեւ ներկայացնում ենք փետրուար ամսուայ ընթացքում իրականացուած միջոցառումները:

Հայ ազգի պատմութեան պանծալի դրւագներից՝ Վարդանանց պատերազմի եւ Վարդան զօրավարի սխրագործութիւնների մասին երեխաներին բացատրւեց չորեքշաբթի, փետրուարի 3-ի առաւօտեան՝ Ծնողական խորհրդի նախագահ Սոնիա Դիլանչեանի միջոցով, ով դիւրըմբռնելի ձեւով նկարագրեց իրադարձութիւնը եւ հայ ժողովրդի անսասան հաւատը: Այնուհետեւ պատմութեանն ուշի-ուշով հետեւող աշակերտներին անակնկալի բերեց զինազգեստներ կրող «Վարդան Զօրավարը», ով փոքրիկներին յորդորեց՝ լինել ազգասէր եւ հայրենասէր: Ծրագրի աւարտին երեխաները կատարեցին հայրենասիրական երգեր ու արտասանութիւններ եւ ստացան Ս. Վարդան Զօրավարի պատկերով փազլներ:



Բարեկենդան տօնը խանդավառ մթնոլորտի ներքոյ նշւեց կիրակի, փետրուարի 7-ի առաւօտեան: Օրն սկսւեց դպրոցի պատասխանատուների ջերմեռանդ աշխատանքով, քանի որ սեղմ ժամանակի ընթացքում բոլոր աշակերտները պէտք է դիմայարդարւէին եւ առանձնաբար լուսանկարւէին՝ ադիբուդիի (պոպկորն) կերպարով: Ծնողական խորհրդի շաբաթներ կատարած աշխատանքի շնորհիւ բոլորի համար պատրաստւել էին կերպարին համապատասխան գլխարկներ: Լուսանկարւելուց յետոյ, տօնը շարունակւեց ծաղրածուի ներկայութեամբ, ով ջանք չխնայեց մանուկներին ուրախացնելու համար, ինչն ակնյայտ էր նրանց շուրթերից չհեռացող ժպիտից ու աչքերում առաջացած հրճուանքի փայլից: Վերջում աշակերտներին բաժանւեցին ադիբուդիի կապոցներ:



Շաբաթ, փետրուարի 13-ի առաւօտեան, մանկապարտէզ-նախակրթարան ներկայացան արժ. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանը եւ բրշն. Ջանիկ սրկ. Ղազարեանը, որտեղ բակում բոլորւած սաների ու ուսուցիչների ներկայութեամբ նշւեց Տեառնընդառաջի նախատօնակը՝ տօնի խորհրդի բացատրութեամբ եւ շարականների կատարմամբ: Այնուհետեւ ներկաների միջոցով հնչեց «Տէրունական աղօթք»-ը եւ քիչ անց ամենակրտսեր խմբակի ներկայացուցիչների միջոցով բոցավառւեց գունաւոր թղթերով զարդարւած աւանդական թուփը, իսկ դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները շրջելով խարոյկի շուրջ, կատարեցին մանկական եւ հայրենասիրական գեղեցիկ երգեր: Միջոցառման աւարտին բոլորը հիւրասիրւեցին համեղ հրուշակով եւ մանուկներն ուսուցչուհիների օգնութեամբ թռան խարոյկի վրայից:



Այբբենարան մաս առաջին գրքի դասաւանդումն աւարտելուն պէս մայրերի եւ աշակերտների մասնակցութեամբ չորեքշաբթի, փետրուարի 17-ի առաւօտեան իրականացւեց գողտրիկ միջոցառում: Ծրագիրը յագեցած էր երգերի կատարմամբ եւ զւարճալի մրցոյթներով: Աշակերտներն ութը չորս հոգանոց խմբերի բաժանւելով մրցեցին միմեանց հետ եւ պատասխանեցին նախատեսւած հարցերին՝ ընդհանուր գիտելիքների եւ սովորած հնչիւնների շրջագծում, ապա աւազով պատրաստեցին ձեռքի աշխատանքներ, որտեղ պատկերւած էին իւրացրած ձայնաւոր եւ բաղաձայն տառերը:



Չորեքշաբթի, փետրուարի 24–ին, աշակերտների համար բեմականացւեց հայ գրականութեան գոհարներից մէկը՝ Յովհաննէս Թումանեանի «Ծիտը», դպրոցի Ծնողական խորհրդի անդամուհիների կատարմամբ: Դերակատարները մեծ ջանք էին գործադրել սոյն հեքիաթի ներկայացումը մանուկների համար առաւել տպաւորիչ դարձնելու ուղղութեամբ:





Շաբաթական զրոյցի թեմաները մանկապարտէզի Դեղին խմբակի սաների համար դիւրընկալելի դարձնելու նպատակով դպրոցի պատասխանատուները պարբերաբար կազմակերպում են զանազան այցելութիւններ, եւ այս անգամ երկուշաբթի՝ փետրուարի 29-ի առաւօտեան, պատկան շաբաթւայ թեմայի՝ «Գիրք եւ գրադարան»-ի կապակցութեամբ, խմբակի սաներն այցելեցին Ս. Ամենափրկիչ վանք: Այցելութիւնը մեծ տպաւորութիւն գործեց փոքրիկների մօտ, քանի որ սկզբում նրանք վանքի տպարանում դիտեցին պատկան սարքերն ու գիրք տպագրելու գործընթացը, ապա «Ներսէս Շնորհալի» գրադարանում գարդարանավարուհի Վերգինէ Միրզախանեանի բացատրութեամբ ծանօթացան գրադարանի կանոններին ու մանկական բաժնի հնարաւորութիւններին: Վերջում գրադարանավարուհին իւրաքանչիւր աշակերտին յանձնեց գրադարանի անդամակցութեան քարտը:



Ս. Ա. վանք կատարած այցելութեան նախավերջին հանգրուանը եղաւ «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցին, որից յետոյ աշակերտները բարձրացան «Ծաղեայ դահլիճ», ուր հանդիպեցին թեմի առաջնորդ Տ. Բաբգէն արք. Չարեանին, հաճելի զրոյց ունեցան նրա հետ եւ ստացան Սրբազան Հօր հայրական օրհնանքը:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ԱՐՄԷՆ» ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԻ ԶԵԿՈՅՑ ՅՈՒՆՒԱՐ ԱՌ ՓԵՏՐՒԱՐ 2016 Թ.

- Յունւար 2016 թւականին Կրթադաստիարակչական հիմնարկի 3-րդ բաժանմունքի տնօրէն պրն. Աբոլֆազլ Դադիրը, աշխատակազմով, Նոր Տարւայ առիթով այցելեց դպրոց: Հանդիպման ընթացքում շնորհաւորանքից ու բարեմաղթանքից յետոյ, նա դպրոցի աշխատակազմին գնահատագրեր յանձնեց, որից յետոյ տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն դպրոցի Ծնողական խորհրդի միջոցով:



- Յունւար 2016 թւականին Կրթադաստիարակչական հիմնարկի ոչ-շահադիտական դպրոցների գլխաւոր տնօրէնը եւ նոյն հիմնարկի 3-րդ բաժանմունքի պատասխանատուները դպրոց այցելեցին, եւ հանդիպում ունեցան ուսուցչական կազմի հետ: Ընձեռուած առիթի ընթացքում նրանք լսեցին ուսման գործընթացի առընչութեամբ ունեցած դժւարութիւնները եւ ուսուցիչների առաջարկները:



- Յունւար 2016 թւականին Կրթադաստիարակչական հիմնարկի պատասխանատուների եւ մի շարք դպրոցների տնօրէնների մասնակցութեամբ դպրոցում կայացաւ խորհրդաժողով: Ժողովում քննարկւեց զանազան նիւթեր եւ աւարտւեց հիւրասիրութեամբ:
- Յունւար 2016 թւականին Սպահանի ոստիկանապետի տեղակալ Ղաֆարին եւ Սպահանի 15-րդ շրջանի ոստիկան Քալանթարին, այցելեցին դպրոց: Ոստի-

կանապետը աշակերտներին բացատրեց, թէ դպրոցից մինչեւ տուն հասնելը, ի՞նչ հարցեր կարելի է առաջանան, որոնցից խուսափելու նպատակով նախազգուշական եւ ապահովական միջոցներ խորհուրդ տուեց:



Ժամանած ոստիկանապետը դպրոցի տնօրէններ օրդ. Լիոնտին Աբրահամեանին եւ պրն. Վրէժ Ծիրանեանին գնահատագրեր յանձնեց:

- 3 փետրուար 2016 թւականի առաւօտեան «Արմէն» երկսեռ համալիրի 5-րդ եւ 6-րդ դասարանի աշակերտները, ուսուցչական կազմի եւ Ծնողական խորհրդի ընկերակցութեամբ մասնակցեցին Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմում, հայազգի նահատակների Հոգեհանգստեան արարողութեանը, ապա ծաղիկներ զետեղեցին իւրաքանչիւրի շիրիմին:



- 4 փետրուար 2016 թւականի առաւօտեան «Արմէն» երկսեռ համալիրի 5-րդ եւ 6-րդ դասարանի աշակերտները, դպրոցի տնօրինութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական խորհրդի ընկերակցութեամբ մասնակցեցին «Սրբոց Վարդանանց» տօնի առիթով Ս.Ա. վանքի եկեղեցում մատուցւած Ս. Պատարագին: Օրւայ քարոզը լսելուց յետոյ ստացան Ս. Հաղորդութիւն:



- 6 փետրուար 2016 թւականի առաւօտեան «Արմէն» երկսեռ համալիրի 1-ին մինչեւ 6-րդ դասարանի աշակերտները, դպրոցի բակում ներկայացրին համեստ յայտագիր: Աւելի բարձր դասարանցիներն ամփոփ կերպով անդրադարձան Վարդանանց պատերազմին: Ներկայացրին Ս. Վարդան Մամիկոնեանի արտասանած ճառը, իր զինւորներին խրախուսելու նպատակով: Հնչեցին օրւայ պատշաճ երգեր եւ ասմունքներ: Փոքր դասարանի աշակերտները Սրբոց Վարդանանց տօնին յատուկ լոզունգով համալրեցին նախաձեռնութիւնը:



«Սրբոց Վարդանանց» տօնին նւիրւած մի ամբողջ շաբաթւայ ընթացքում աշակերտներն ընթերցեցին նիւթեր եւ պատրաստեցին պատի թերթեր:

Նախաձեռնութեամբ դպրոցի տնօրինութեան եւ Ծնողական Խորհրդի, դպրոցի սրահում կազմակերպւեց գրքերի ցուցահանդէս-վաճառք, նւիրւած Իրանի իսլամական յեղափոխութեան 37-րդ տարելիցին: Բազմաթիւ այցելուներ վայելեցին ընձեռած հնարաւորութիւնը: Գրքերը դասաւորւել էր զանազան տարիքի եւ համապատասխան ենթաբաժանումներով՝ հայերէն, պարսկերէն եւ անգլերէն լեզուներով, գիտական, կրօնական, ուսուցողական եւ այլ բնոյթի բովանդակութեամբ:

Ցուցահանդէսն իր տեւողութեան ամբողջ ընթացքում մեծ ոգեւորութիւն եւ եռուզեռ ստեղծեց թէ՛ դպրոցում եւ թէ՛ աշակերտների մօտ:



- 7 փետրուար 2016 թւականին Բարեկենդանը տօնւեց դպրոցի հարազատ մթնոլորտում: Սոյն տօնի ընթացքում դպրոցի աշակերտները հանդէս եկան իրենց ձեռքով պատրաստած դիմակներով: Իւրաքանչիւր աշակերտ իր դասարանով ներկայացաւ իրաւարար ուսուցչական կազմին, ցուցադրելով այն դիմակները,

որոնք պատրաստել էին ճաշակով եւ բծախնդրութեամբ: Երեխաները կրում էին նաեւ պատրաստի դիմակներ, որոնք մաս չկազմեցին մրցոյթին, իսկ պատրաստուած դիմակների լաւագոյնները գնահատուեցին եւ ստացան նուէրներ: Դպրոցի աշակերտները Ծնողական խորհրդի միջոցով պատրաստուած պատառներով հիւրասիրուեցին:

- 10 փետրուար 2016 թւականին, Իրանի իսլամական յեղափոխութեան 37-րդ տարելիցը տօնուեց դպրոցի յարկի տակ: Իւրաքանչիւր դասարանի աշակերտութեան համար նախատեսուել էր մէկական մարզական մրցութիւն, դպրոցի մարզանքի ուսուցիչների նախաձեռնութեամբ:



Կազմակերպւածը մեծ խանդավառութիւն ստեղծեց: Մրցոյթների յաղթողները գնահատուեցին պարգեւներով: Ծրագրի աւարտին աշակերտները հիւրասիրուեցին պատրաստուած պատառներով:

- 14 փետրուար 2016 թւականին երթեւեկութեան կանոնների պահպանման դասընթացներ անցկացուեցին դպրոցի «Ալենուշ Տէրեան» սրահում, սոյն բնագաւառի պատկան պատասխանատու տկն. Ֆառահի միջոցով: Պատասխանատուն երթեւեկութեան կանոնների կապակցութեամբ մի շարք կարեւոր ցուցմունքներ տուեց, ապա տրուած հարցերին համապատասխան ու անթերի պատասխանողներին գնահատեց նուէրներով:

- 14 փետրուար 2016 թւականին դպրոցի բակում տօնուեց Տեառնընդառաջը: Օրւայ խորհուրդը բացատրելու եւ արարողութեան կարգը կատարելու նպատակով հրաւիրուել էր արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանը: Արարողութիւնից յետոյ թուփը բոցավառուեց քահանայի ձեռամբ:



Աւանդութեան համաձայն Ծնողական խորհրդի միջոցով պատրաստուած հրուշակը եւ չարազը բաժանուեց աշակերտութեանը:

Յատկանշական է որ Տեառնընդառաջի արարողութեանը ներկայ էին Կրթադաստիարակչական հիմնարկի 3-րդ բաժանմունքի պատասխանատուները եւ Ղազւին քաղաքից ժամանած պատուիրակութիւն՝ կազմուած ուսման ոլորտի պատասխանատուներից:

## Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ «ԿՈՄԻՏԱՍ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲՆ ԻՐ ԲԵՂՈՒՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ 40-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԸ ՆՇԵՑ ՄԵԾ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ

Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախմբի 40-ամեայ յոբելեանի առիթով հանդիսաւոր ձեռնարկ տեղի ունեցաւ ուրբաթ՝ փետրուարի 19-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում՝ ներկայութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի, քահանայից դասի, ազգային մարմինների, միութիւնների եւ հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչների եւ մի շարք այլ հրաւիրեալների:

Սկզբում երեկոյի հաղորդավար Արթին Մուրադեանն իր բացման խօսքում նշելով, որ ամեակները ոչ միայն յոբելեարին գնահատելու եւ մեծարելու համար են, այլեւ նոր ծրագրերի նախատեսութեան, զարգացման եւ վերելքի ճամբաներ որոնելու մասին յիշեցնող առիթներ են, ամփոփ զեկոյցով հանդէս եկաւ 1975 թւականին ծնունդ առած երգչախմբի հիմնադրման եւ 40-ամեայ գործունէութեան մասին:



Բացման խօսքից յետոյ, գերշ. Տ. Բաբգէն արք. Չա-

րեանի միջոցով եւ ներկաների յոտնկայս ունկնդրութեամբ ընթերցւեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի օրհնութեան գիրը՝ այս առիթի կապակցութեամբ, իսկ յաջորդիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանն ընթերցեց թեմակալ առաջնորդ Սրբազան Հօր ուղերձը:



Երեկոն ողողուած էր Նոր Ջուղայի եւ Շահինշահրի զանազան մշակութային խմբերի հիասքանչ ելոյթներով, որտեղ դերակատարները իրենց արուեստով մեծարեցին, շնորհաւորեցին եւ առաւել բեղուն գործունէութիւն մաղթեցին 40-ամեայ յոբելեարին:



Գեղարուեստական բաժնում պարային համարներով հանդէս եկան Փերիոյ Կրթ. միութեան «Էրեբունի» պարախումբը՝ Ալինա Գրիգորեանի եւ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի «Կռունկ» պարախումբը՝ Նունէ Մկրտչեանի ղեկավարութեամբ:



Իր կատարումներով երեկոն համեմեց Շահինշահրի «Նաւօտ» երգչախումբը՝ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի գեղարուեստական ղեկավարութեամբ, ասմունքեցին Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Մշա-





կութային միաւորի «Կռունկ» ասմունքի խմբի անդամներ՝ Թալին Մովսիսեանն ու Լեռնիկ Ծատուրեանը՝ ղեկավարութեամբ Ռիմա Սիմոնեանի, իսկ մաէստրօ Համիկ Ալեքսանդրեանի խմբավարութեամբ Ս.Ա. վանքի «Տաթեւ» երգչախումբը երգեր կատարեց:



Գեղարուեստական բաժնի եզրափակիչ ելոյթները իրականացւեցին «Կոմիտաս» անունը կրող երկու երգչախմբերի միջոցով՝ մաէստրօ Արմէն Ամիրխանեանի գեղարուեստական ղեկավարութեամբ:



Սկզբում երգեց Ս.Ա. վանքի «Կոմիտաս» երգչախմբի երիտասարդական խումբը, որն այս տարի նշում է իր հիմնադրման 10-ամեակը, ապա իր անզուգական կատարմամբ հանդիսատեսի ականջը շոյեց յոբելեարը՝ Ս.Ա. վանքի «Կոմիտաս» երգչախումբը:



Երգերից մէկը մենակատարեց հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը՝ խմբի ձայնակցութեամբ:

Ելոյթի աւարտին ներկաները բուռն ծափողջոյններով գնահատեցին չորս տասնամեակներ գործունէութիւն ծաւալած երգչախմբին, սոյն գնահատանքին անմաս չմնացին նաեւ երգչախմբի եկեղեցական խմբի անդամուհիները, ովքեր այդ պահին բեմ հրաւիրուեցին:



Գեղարուեստական բաժինը մէջբերում էր այս առիթով ստացած ուղերձներից հատուածների ընթերցմամբ, որոնք էին՝ Հ.Հ.-ի Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանի, «Ալիք» օրաթերթի խմբագրութեան, Փերիոյ Կրթասիրաց միութեան կենտրոնական վարչութեան, Փերիոյ Կրթասիրաց միութեան Թեհրանի մասնաճիւղի վարչութեան, Հայ ուս. «Չհարմահալ» միութեան Նոր Ջուղայի մասնաճիւղի վաչութեան, Ս.Ա. վանքի «Տաթեւ» երգչախմբի, Ս.Ա. վանքի «Կոմիտաս» երիտասարդական երգչախմբի, Հայաստանի երաժշտական ընկերութեան վարչութեան, «Կոմիտաս» երգչախմբի նախկին խմբավար Ռադիկ Մելիքեանի եւ արուեստագէտ Անի Բաբայեանի ուղերձները:



Ծրագրի ընթացքում Սպահանի հայոց թեմի ազգային մարմինների անունից ելոյթով հանդէս եկաւ Թեմական խորհրդի ատենապետ Վրէժ Տէր-Մարտիրոսեանը, որից մի հատուած մէջբերում ենք.

««*Կոմիտաս»-ին դժուար թէ խումբ անուանես: Նա ընտանիք է բառի բուն իմաստով: Ընտանիք, միաւորուած հայ երգի հիմնաքարի շուրջ: Նրա դայլայլը սովորական ելեւէջ չէ, այլ մէկը միւսով ապրող կոմիտասցու հոգու թրթիռ… Արտասահմանեան հանդիսատեսի շռայլ գովասանքներն անգամ նրա համեստութեան շղարշը չպատռեց: Նրա 40-ամեայ անցեալը խտացած չորս դարն է մեր պատմութեան եւ նպատակը նախ եւ առաջ խստապահանջ ջուղայեցուն բաւարարելը: Չորս տասնամեակ արհեստավարժ խմբավարներով առաջնորդուած «Կոմիտաս»-ն այսօր երաշխաւորում է բարձրաճաշակ արուեստը*»:



Օրուայ եզրափակիչ խօսքն ասաց թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը, ով դրուատանքով արտայայտուելով «Կոմիտաս» երգչախմբի 40-ամեայ գործունէութեան՝ ի մասնաւորի եկեղեցական արարողութիւնների ընթացքում երգեցողութեամբ հանդէս գալու կապակցութեամբ, ասաց. ««*Կոմիտաս» երգչախումբը ոչ միայն պատարագների ընթացքում իր երգեցողութեամբ պայծառացրել է մեր եկեղեցիները, այլեւ եկեղեցիներից դուրս բեմերի վրայ հայ հոգեւոր եւ ժողովրդական երգերն է մատուցել մեր ժողովրդին: Երգչախումբն իր երգով մեր ժողովրդի դարերից եկող խորը հաւատն առկայծ է պահել եւ տարածել ամենուրեք՝ մեր Թեմի իւրաքանչիւր զաւակի հոգու եւ սրտի մէջ*»:



Յատկանշական է, որ հինգշաբթի՝ յունուարի 7-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում, երգչախմբի անդամ-ուհիների մասնակցութեամբ կազմակերպուած ամենամեայ խրախճանքի ընթացքում, Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի ձեռամբ եւ երգչախմբի վարչութեան

նախագահ ԱրմէՆ Մանուրեանի միջոցով, 40-ամեայ գործունէութեան առթիւ, պատւոյ գրեր շնորհուեցին վաստակաշատ անդամուհիներ՝ Էմմիկ Վարդանեանին, Նւարդ Վարդանեանին եւ Օֆիկ Գէորգեանին:

Ուրբաթ՝ փետրուարի 12-ի առաւօտեան, Ս. Յովհաննու եկեղեցում Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի միջոցով եւ հոգեւորականաց դասի մասնակցութեամբ Հոգեհանգստեան կարգ կատարուեց՝ ի յիշատակ «Կոմիտաս» երգչախմբի ննջեցեալ անդամ-ուհիների:





# ՋԱՒԱԽՔԻՆ ՆՒԻՐՒԱԾ ԱԶԳԱՅԻՆ-ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ 3-ՐԴ ՓԱՌԱՏՕՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Նախաձեռնութեամբ Հայ Դատի «Արձագանք» քարոզչական յանձնախմբի, հինգշաբթի՝ փետրուարի 18-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում տեղի ունեցաւ Ջաւախքին նւիրւած ազգային-յեղափոխական երգերի 3-րդ աշակերտական փառատօնը՝ մասնակցութեամբ Նոր Ջուղայի հայոց ազգ. «Արմէն» տարրական երկսեռ կրթական համալիրի 4-րդ, 5-րդ եւ 6-րդ դասարանների աշակերտ-ուհիների: Ծրագրին ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Բաբգէն արք. Չարեանը, շրջանի Հայ Դատի յանձնախմբի, ազգային մարմինների, միութիւնների եւ հայոց ազգ. դպրոցների ներկայացուցիչներն ու հոծ բազմութիւն:



Փառատօնի մեկնարկը տրուեց հաղորդավար Մեղրի Ղուկասեանի բացման խօսքով, որից յետոյ մասնակից 14 աշակերտները ելոյթ ունեցան հետեւեալ հերթականութեամբ ու երգերով.

Արգիշտ Քեշիշեան՝ «Ո՛չ, չեն մեռնում հերոսները»

Սելին Մարութեան՝ «Հպարտ գնացէ՛ք»

Անի Ղազարեան՝ «Պի՛տ պաշտպանիմ»

Արփինէ Մովսիսեան՝ «Քայլի՛ր միշտ առաջ»

Լիլիթա Յովսէփեան՝ «Գարեգին Նժդեհի երգը»

Անի Մինասեան՝ «Իմ փոքրիկ Հայաստան»

Թենի Ծատուրեան՝ «Կարմիր կակաչներ»

Լիանա Ղազարեան՝ «Դաշնակցութեան երգը»
Արթուր Քամարզարեան եւ Արին Քեշիշեան՝ «Մշեցի մօր երգը»
Սիսիան Մարկոսեան՝ «Տեսնեմ Անին»
Սիսիան Քալանթար Օհանեան՝ «Նժդեհիկների քայլերգը»
Վանա Յակոբ Չաքերեան՝ «Թիկունքդ լայն»
Դիին Յովհաննիսեան՝ «Տունն իմ հայրենի»



Որպէս եզրափակիչ ելոյթ բոլոր մասնակիցների խմբական կատարմամբ հնչեց «Հայ Ասպետի» երգը, որն առաւել խանդավառութիւն եւ ոգեւորութիւն առաջացրեց հանդիսատեսի մօտ: Երեկոյի ընթացքում հնչած կատարումներն աշակերտներին սովորեցրել էր երգուսոյց Արսինէ Մարգարեանը:

Աշակարտական ելոյթների աւարտին ձեռամբ Սրբազան Հօր եւ կազմակերպիչ յանձնախմբի անդամ Անդրանիկ Ջաւահիրեանի, բոլոր կատարողներին շնորհուեցին յուշանուէրներ եւ գնահատագրեր, իսկ փառատօնի կազմակերպման գործում յանձնախմբին օժանդակած անհատներին՝ շնորհակալագրեր:

Վերջում ներկաներին իր հայրական օրհնանքը փոխանցեց թեմակալ առաջնորդ Տ. Բաբգէն արք. Չարեանը, ով աշակերտների կատարած երգերի պատգամը՝ դարերի խորքից ու պատմութիւնից եկած պատգամ համարեց, որը կոչ է անում պայքարել եւ պահպանել մեր արժէքներն ու իրաւունքները: Այնուհետեւ Սրբազան Հայրը գնահատանքի խօսք ասելով ծրագրի կազմակերպիչներին եւ կատարողներին, շարունակեց. «*Հայ ժողովուրդը պիտի գոյատեւի եւ յարատեւ ապրի: Եկէք վերանորոգենք մեր ուխտը եւ մեր հայեացքը դարձնենք դէպի Ջաւախք ու ջաւախքահայութիւն, Արցախ եւ արցախահայութիւն, դէպի հայրենիք ու հայրենի ժողովուրդ, դէպի ազատ, անկախ եւ ամբողջական Հայաստան*»:

Աւանդոյթի համաձայն, այս տարի եւս ծրագրին զուգահեռ կազմակերպուեց նւիրահաւաք՝ յօգուտ ջաւախքահայութեան:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻԱՒՈՐԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՄՈՒՏ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Թւականիս յունւարի 15-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Ուսանողական Միաւորի վարչութիւնը, միութեան յարկի տակ ընդունեց ուսումնական ընթացիկ տարեշրջանում, բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում ընդունւած Նոր Ջուղայի եւ Շահինշահրի երիտասարդ-ուհիներին:

Ներկաներին ողջունեց Ուսանողական միաւորի վարչութեան նախագահ՝ Ռուբէն Մինասեանը: Նա շնորհաւորելով ուսանողների մուտքը համալսարան, անդրադարձաւ հանդիպման նպատակներին, ապա ըստ միաւորի արխիւային տւեալների, ներկայացրեց միաւորի վարչութեան միջոցով պատրաստւած մի վերլուծութիւն, որով ներկայացւում էր վերջին հինգ տարիներում համալսարան մուտք գործած երիտասարդ-ուհիների թւային աճի եւ նւազման պատկերը: Երկրորդ բաժնում, լուսանկարների ցուցադրմանը զուգահեռ, ներկայացրեց վերջին ժամանակաշրջանում միաւորի ծաւալած գործունէութիւնից համառօտ զեկոյց: Յաջորդիւ նա բնութագրեց դպրոցի միջնակարգ օղակի եւ համալսարանի հիմնական տարբերութիւնները:



Ներկաներն առիթ ունեցան նաեւ դիտելու «Ստիւ Ջաբզ»-ի ելոյթը՝ նրա կենսագրութեան երեք կարեւոր փուլերի մասին տեսաժապաւէնը: Ռ. Մինասեանը բացատրելով տեսանիւթի հիմքում ընկած պատգամը, որպէս յաջողակ ուսանող եւ երիտասարդ գիտարար, ուսանողներին խորհուրդ տւեց օրւայ պահանջների հիման վրայ ուղղւածութիւն տալ իրենց նախասիրութիւններին, տիրապետել ուսումնասիրելու մեթոդներին,

զարկ տալ նիւթի փոխանցման կարողութիւններին, որի համար շեշտը դրեց գործնական աշխատանքի վրայ, կարեւորելով անգլերէն լեզւի իմացութիւնը:



Այնուհետեւ շնորհաւորական խօսքով ելոյթ ունեցաւ միութեան Կենտրոնական վարչութեան անդամ եւ միաւորի կապ Միգանուշ Տէր-Մարտիրոսեանը, եւ ներկաներին առաջարկեց ցանկութեան դէպքում նրանց անդամակցութիւնն ու համագործակցութիւնը միաւորի հետ: Վերջում որպէս շնորհաւորանքի արտայայտութիւն եւ գնահատում, նորամուտ ուսանողներին շնորհւեց գնահատագրեր:

Հանդիպումն աւարտւեց խմբական լուսանկարւելով եւ համեստ ընդունելութեամբ:

Նշելի է, որ հանդիպմանը հրաւիրւած էին գերդիպլոմ, լիսանս, գերլիսանս եւ դոկտորայի մակարդակում ընդունւած ուսանող-ուհիները:

Միաւորին այժմ անդամակցում են 30 ուսանող-ուհի:

## ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ 20-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Նոր Ջուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան 20-րդ Պատգամաւորական ժողովը, մասնակցութեամբ՝ Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի ներկայացուցչի, թեմի Հաշւեքննիչ մարմնի, Կենտրոնական վարչութեան, միաւորների վարչութիւնների ներկայացուցիչների, միաւորների եւ Շահինշահրի մասնաճիւղի՝ Ընդհանուր կամ Ներկայացուցչական ժողովներից ընտրւած պատգամաւորների ու հրաւիրեալների, գումարւեց 2016 թւականի յունւարին՝ մի քանի նիստերի ընթացքում:

Ժողովի բացումից յետոյ, միութեան Կենտրոնական վարչութիւնը ներկայացրեց 2014-2015 թւականների երկամեայ գործունէութեան նիւթա-բարոյական զեկոյցը, ապա ժողովը քննարկելով օրակարգի իւրաքանչիւր կէտը՝ հաստատեց միութեան յառաջիկայ երկամեայ գործունէութեան բանաձեւը:

Վերջում տեղի ունեցաւ միութեան Կենտրոնական վարչութեան ընտրութիւնը եւ կատարւեց պարտականութիւնների բաժանում, ըստ հետեւեալի.

Պրն. Մասիս Մինասեան՝ նախագահ
Պրն. Զարեհ Յովսէփեան՝ փոխ-նախագահ
Տկն. Մանիա Ղուկասեան՝ քարտուղար
Պրն. Ժորժ Ղազարեան՝ գանձապահ
Պրն. Նարբէ Քոչարեան՝ գոյքապահ
Տկն. Լորեթա Դաւթեան՝ խորհրդական
Տկն. Ադրինէ Խաչատրեան՝ խորհրդական



# ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ-ՄՐՑՈՅԹ՝ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ

Նոր Ջուղայի Հայ մարզա-մշակութային «Արարատ» միութեան Երէցների միաւորի վարչութեան նախաձեռնութեամբ եւ համագործակցութեամբ միաւորի անդամուհիների, կիրակի՝ փետրուարի 7-ի երեկոյեան, միութեան մարզասրահում նշւեց հայկական աւանդական Բուն Բարեկենդանը:

Ներկաներին ողջունեց օրւայ հաղորդավար միութեան Մշակութային միաւորի «Կռունկ» ասմունքի խմբի անդամ՝ Կարէն Խանլարեանը, ով անդրադարձաւ Բարեկենդան տօնի ծագմանը եւ պատկան ծէսերին ու աւանդոյթներին: Այնուհետեւ Վահէ Յարութիւնեանի միջոցով ցրւող խանդավառ երաժշտութեամբ ներշնչւած՝ թւով 55- տարազաւորներ մասնակցեցին կերպարների ներկայացման մրցոյթին եւ ըստ իրաւարար կազմի գնահատականների՝ պարգեւատրւեցին լաւագոյնները:

Տօնախմբութեան ընթացքում, բազմահարիւր ներկաներ, վայելեցին Երէցների միաւորի պատրաստած ուտեստներն ու ըմպելիքները, իսկ մանուկները վայելեցին նախատեսւած գեղեցիկ փաթեթաւորւած քաղցրաւենիքներ: Միաւորը վաճառքի էր հանել նաեւ դիմակներ, իսկ Արինէ եւ Լուսինէ Թորոսեանների համագործակցութեամբ, կազմակերպւել էր դիմայարդարման կրպակ, ուր ցանկացողները առիթ ունեցան օրւան պատշաճ նաղշերով դիմայարդարւել:

Նշելի է, որ ծրագրի իրականացման գործում Երէցների միաւորի հետ համագործակցել էին Մշակութային եւ Սկաուտական միաւորները:

Իրաւարար կազմը ներկայացնում էր՝ Զեփիւռ Վարդեւանեանը, Ալենուշ Մարտոյեանը եւ Սեդա Բարղեանը:



## ԱՄԱՆՈՐԵԱՅ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Ուրբաթ՝ 2016 թւականի յունւարի 1-ի երեկոյեան, Շահինշահրի Հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում, տարեմուտի առթիւ մատուցւեց սուրբ եւ անմահ Պատարագ՝ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գումանեանի ձեռամբ եւ արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի ու դպրաց դասի մասնակցութեամբ:



Ս. Պատարագի քարոզի պահին իր բովանդակալից խօսքը փոխանցեց հոգշ. Հայր Սուրբը՝ բնաբան ունենալով 2-րդ Սաղմոսից. «*Տէ՛ր, եթէ իմ շուրթերը բացես, ես պիտի փառաբանեմ Քեզ*» համարը: Նա իր խօսքում ասաց. «*Սիրելի՛ հաւատացեալներ, ահաւասիկ Նոր Տարւայ առաջին օրւայ բնաբանը, ահաւասիկ Նոր Տարւայ այն առաջին խօսքերը, որ մեզանից իւրաքանչիւրը որպէս շնորհակալութիւն Աստծուն պէտք է արտայայտի: Ահաւասիկ 2016 թւականի առաջին օրն էլ հասնում է իր աւարտին: Մէկ տարի բոլորեցինք Աստծու եւ Տիրոջ առաջնորդութեամբ, փակելով 2015 թւականի օրացոյցը, եւ թեւակոխում ենք 2016 թւական՝ նոր յոյսերով, նոր երազներով, նոր մտքերով եւ մանաւանդ նոր ապագայի տեսլականով: Բնական է մարդու կեանքի ընթացքը ոչ մի ձեւով չի փոխւելու այն մէկ թւանշանի հետ, ինչպէս օրացոյցի մէջ է փոխւում, այլ՝ կեանքը շարունակւում է, կեանքը առաջ է գնում իր բնականոն ընթացքով. մարդ ինքն է, որ պէտք է փոխւի. մարդ ինքն է, որ իր կեանքի, սրտի եւ մտքի թւականն է փոխում…*

*Սէրը, յարգանքը, հեզութիւնը, համեստութիւնը, բարութիւնը, համբերատարութիւնը, միմեանց օգնութեան ձեռք մեկնելը, Աստծուն փառաբանելը այն ուղիներն են, որոնք կարող են մեր կեանքը իմաստաւորել: Մեր կեանքի իւրաքանչիւր օրն Աստծու կողմից մեզ մեծագոյն նւէրն է. պէտք է շնորհակալ լինենք Աստծուն եւ կատարենք Նրա պատւիրանները:*

*Նոր Տարին առիթ է տալիս մեզ՝ ինքնաճանաչման, գիտակցելու եւ որպէս նոր մարդ մեր կեանքերը դասաւորելու*»:

Իր խօսքի աւարտին հոգշ. Հայր Սուրբն իր, Համայնքի Վարչութեան եւ արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի անունից Նոր Տարին շնորհաւորեց համայնքի բոլոր զաւակներին՝ մաղթելով նրանց սէր, երջանկութիւն, առողջութիւն, փափագների իրականացում եւ որ ամենից կարեւորը միասնական ու միակամ աշխատանք: Հոգշ. Հայր Սուրբը նաեւ Սպահանի հայոց թեմի բարեջան առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի շնորհաւորման խօսքը փոխանցեց ներկաներին:



Եկեղեցում ներկայ գտնւող հաւատացեալները Ս. Հաղորդութիւն ստացան եւ տարւայ առաջին օրը Բարձրեալին գոհութիւն մատուցելով՝ հայցեցին Նրա օրհնութիւնը:

Երեքշաբթի՝ յունւարի 5-ին, կէսօրից յետոյ ժամերգութիւն եւ Ճրագալոյցի Ս. Պատարագ մատուցւեց հոգշ. Տ. Արտակ վրդ. Արաբեանի ձեռամբ: Յընթացս արարողութեան, պատարագիչ Հայր Սուրբն ընթերցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի հայրապետական պատգամը Ս. Ծննդեան տօնի առթիւ: Յաւարտ Ս. Պատարագի տեղի ունեցաւ նախատօնակ եւ աւետում Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան:



Այնուհետեւ երեքշաբթի՝ յունւարի 6-ի առաւօտեան մատուցւեց Ս. Պատարագ՝ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօների առիթով՝ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գումանեանի ձեռամբ: Իսկ յաւարտ Ս. Պատարագի կատարւեց Ջրօրհնէքի արարողութիւն, որից յետոյ Հայր Սուրբը դպրոցի սրահում ընդունեց շնորհաւորանքներ:

# ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՒ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ



Երեքշաբթի՝ յունուարի 5-ի առաւօտեան ժամը 10:30-ին, «Սրբոց Վարդանանց» դպրոցի շրջափակում Սպահանի հայոց թեմի ազգային առաջնորդարանի եւ Շահինշահրի հայ համայնքի պատասխանատուներին այցելեցին Շահինշահրի ուրբաթօրեայ աղօթապետի տեղակալը, գաւառապետը, քաղաքապետը ընկերակցութեամբ՝ գաւառապետարանի եւ քաղաքապետարանի բարձրաստիճան պաշտօնատարների եւ քաղաքի խորհրդի տնօրէնի ու անձնակազմի:

Դպրոցի սրահում հիւրերին ընդունեցին Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը, համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, Կրօնական խորհրդի ներկայացուցիչը եւ Հայ համայնքի վարչութեան անդամները:

Վարչութեան անունից բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ պրն. Արիս Դաւթեանը, ով շնորհակալութիւն յայտնեց հիւրերին՝ իրենց ներկայութեան համար եւ խօսքը փոխանցեց քաղաքապետին: Քաղաքապետը շնորհաւորելով Ամանորը եւ 2016 թւականը, իր ուրախութիւնն յայտնեց այս հանդիպման կապակցութեամբ եւ հանգամանօրէն ներկայացրեց այցելու պատուիրակութեանը: Նա յոյս յայտնեց, որ նոր տարւայ ընթացքում Աստծու աջակցութեամբ կարողանան աւելի ներդրում կատարել քաղաքի շէնացման եւ բարգաւաճման, ինչպէս նաեւ քաղաքացիներին ծառայելու նւիրական գործում:




Քաղաքապետը շնորհակալութիւն յայտնեց յատկապէս հայ համայնքի ցուցաբերած համագործակցութեան կապակցութեամբ՝ քաղաքապետարանի նախաձեռնութեամբ ծրագրւած եւ կազմակերպւած հասարակական եւ մշակութային ծրագրերի, ինչպէս նաեւ քաղաքի շէնացման աշխատանքների իրականացման գործում:

Այնուհետեւ Ամանորի առիթով գաւառապետ պրն. Բասիրին շնորհաւորման խօսքով ելոյթ ունեցաւ եւ իր հերթին ակնարկելով հայ համայնքի ազնիւ պահւածքը՝ բարձր գնահատեց նրանց ներդրումը քաղաքի բարգաւաճման գործընթացում, ընդգծելով հայ համայնքի ցուցաբերած մասնակցութիւնը քաղաքի անդորրը ապահովելու, ինչպէս նաեւ իրենց պարտականութիւնները լիարժէք կատարելու մէջ:

Վերոյիշեալ երկու պաշտօնատարներն էլ իրենց արտայայտութիւններում յայտնեցին, որ ինչպէս միշտ հասարակական յանձնառութեամբ կը կատարեն հայ համայնքի հանդէպ ունեցած իրենց բոլոր յանձնառութիւնները եւ ցանկալի է հարկ եղած համադրումները կատարուեն՝ աշխատանքները դիւրին եւ նպատակաւլաց իրագործելու համար:

Օրւայ բարեմաղթանքներին միանալով՝ ուրբաթօրեայ աղօթապետի տեղակալը յոյս յայտնեց, որ երկու միաստւածեան՝ քրիստոնեայ եւ իսլամ կրօնների հետեւորդները, ինչպէս միշտ հաշտ ու համերաշխ, փոխըմբռնմամբ եւ փոխհասկացութեամբ կապրեն եւ ձեռնամուխ կը լինեն ստեղծագործ եւ շինարար աշխատանքների:

Գերշ. Սրբազան Հայրն եւս իր հերթին իր ուրախութիւնը յայտնեց պետական բարձրաստիճան պաշտօնէութեան եւ պատասխանատուների այցելութեան առթիւ, այն համարելով պետութեան եւ փոքրամասնութիւնների միջեւ փոխյարգանքի եւ համագործակցութեան արտայայտութիւններից մէկը: Թեմակալ Առաջնորդն իր խօսքում անդրադարձաւ, որ ժամանակակից տհաճ եւ տխուր իրադարձութիւնների ակունքը հիմնականում հանդիսանում է Աստծուց՝ մարդու հեռանալու տխուր երեւոյթը, որից սկիզբ են առնում ժամանակի բոլոր տեսակի բռնարարքներն ու արիւնահեղութիւնները, դաժանութիւններն ու անմարդկային վերաբերմունքը: Երբ մարդ արարածը մոռանում է իր պարտաւորութիւնն ու յանձնառութիւնը Աստծու եւ ապա իր նմանի հանդէպ, իրեն թոյլ է տալիս պղծել սրբութիւններն ու ոտնահարել միւսների իրաւունքները: Սրբազան Հայրը յոյս յայտնեց, որ մի օր մարդը գիտակցելով իր վեհ առաքելութիւնը, դարձի կը գայ ու լսելով Տիրոջ պատգամը՝ իր Աստւածային նկարագրին համապատասխան կեանք կապրի:

Օրւայ առիթով նախապատրաստել էր հիւրասիրութիւն, որը վայելեցին ներկաները զարդարւած սրահում՝ ջերմ ու հիւրընկալ մթնոլորտում: Աւարտին Հայ համայնքի վարչութիւնը յուշանւէրներ յանձնեց բոլոր հիւրերին:

## ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՄԱՆՈՐԵԱՅ ԽՐԱԽՃԱՆՔԸ

Ուրախ ու զւարթ Նոր տարւայ սեմին
Հազար բարիքներ մեր ժողովրդին,
Ամենուր լինի սէր, խաղաղութիւն,
Հայ ժողովրդին՝ կուռ միասնութիւն:
Հայոց տներում լինի խնդութիւն,
Հայոց սրտերում՝ ծով ուրախութիւն,
2016 թւին, մենք պիտի հասնենք բարուն ու լաւին:



Երեքշաբթի՝ 2016 թ. յունուարի 19-ի յետկէսօրեայ ժամը 4:00-ին՝ «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում, այս գեղեցիկ բանաստեղծութեամբ, ամանորեայ խրախճանքի հրաւիրեալներին ողջունեց Շահինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան նորընտիր նախագահ՝ տկն. Լինա Մովսիսեանը, ով բարի գալուստ մաղթելով բոլորին՝ շնորհակալութիւն յայտնեց համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանին եւ Համայնքի վարչութեանը, որոնք միշտ անվերապահ հովանաւորել ու սատարել են միութեանը: Այնուհետեւ խօսքը փոխանցեց արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանին:

Արժն. Քահանայ Հայրն իր հերթին շնորհաւորելով Ամանորը եւ Ս. Ծնունդը, իր ուրախութիւնը յայտնեց կազմակերպուած ձեռնարկի առիթով: Քհնյ. Հայրը մաղթեց միութեան անդամներին յարատեւ ուժ, կորով, եռանդուն գործունէութիւն եւ բոլոր ներկաներին յաջող ու բարեբեր տարի:

Օրւայ առիթով կազմակերպուած գեղարուեստական բաժնում, որը գեղեցկօրէն վարեց միութեան նախկին նախագահ եւ բազմավաստակ անդամ տկն. Անահիտ Օհանեանը, իրենց գեղեցիկ երգ ու ասմունքով ելոյթ ունեցան տկնք. Նւարդ Փանոսեանը եւ Ռիտա Մկրտչեանը:

Խանդավառ երաժշտութեան ներքոյ դահլիճ մտան նաեւ Ձմեռ պապն ու Ձիւնանուշը, որոնց իրենց ծափողջոյններով ընդառաջեցին ներկաները:

Ամանորեայ բարեմաղթանքներով ելոյթ ունեցան Համայնքի վարչութեան ներկայացուցիչ պրն. Ռազմիկ Մարկոսեանը, բրշն. Ռազմիկ սրկ. Գալստանեանը եւ տկն. Անահիտ Օհանեանը, ովքեր գեղեցիկ արտայայտութիւններով բոլորին մաղթեցին քաջառողջութիւն, երջանկութիւն, սէր եւ միաբանութիւն, յոյս յայտնելով, որ 2016 թ. համայնքի ազգային-մշակութային կեանքին պարգեւի նորանոր ձեռքբերումներ:



Հանգամանօրէն եւ պատշաճօրէն բարձր գնահատւեց նաեւ տկն. Անահիտ Օհանեանը, ով երկար տարիներ բուռն նւիրւածութեամբ նախագահել է միութիւնը՝ միշտ աշխոյժ ու խանդավառ պահելով անդամներին, խթան հանդիսացել ծրագրւող աշխատանքների եւ նախաձեռնութիւնների իրագործմանը:

Նա եւս իր հերթին իր շնորհակալական խօսքն ուղղեց Համայնքի վարչութեանը, բրշն. Ռազմիկ սրկ. Գալստանեանին եւ միութեան անդամներին, ովքեր միշտ աջակցել են ու համագործակցել կազմակերպւած աշխատանքներում՝ չխնայելով որեւէ ճիգ ու ջանք:

Բոլոր ներկաները ջերմ ու հարազատ մթնոլորտում վայելեցին նախատեսւած հիւրասիրութիւնը: Ներկաներից մի քանիսը սիրայօժար մասնակցեցին նաեւ կազմակերպւած հետաքրքիր մրցոյթին՝ արժանանալով ներկաների խրախուսանքին:

## ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳԹՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Երեքշաբթի՝ 2016 թւականի փետրւարի 2-ի յետկէսօրեայ ժամը 4:00-ին, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում կայացաւ Շահինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան հանդիպումը՝ Նոր Ջուղայի Հայ կանանց գթութեան միութեան հետ, ներկայութեամբ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի, Հայ համայնքի վարչութեան ներկայացուցչի եւ զոյգ միութեան անդամների:

Բացման խօսքով հանդէս եկաւ Շահինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան նախագահ տկն.

Լինա Մովսիսեանը, ով բարի գալուստ մաղթելով ներկաներին, ամփոփ կերպով ներկայացրեց վերոյիշեալ միութեան հիմնադրման, զարգացման ու ծաւալման զեկոյցը՝ ընդգծելով միութեան գործունէութեան կարեւոր ու հիմնական աշխատանքները՝ բարեսիրական, ազգային-կրօնական, մշակութային ոլորտներում, որոնց ընթացքում ամբողջ անձնակազմը միշտ հանդէս է եկել համագործակցաբար ու միասնական ուժերով՝ դրսեւորելով իրենց լաւագոյնը եւ ոչ մի ջանք չխնայելով միութեան վերելքի ուղղութեամբ:



Տկն. Մովսիսեանն իր խօսքի շարունակութեան մէջ նշեց. «*Թէպէտ իր միութենական կեանքում հանդիպել է որոշակի դժւարութիւնների եւ խոչընդոտների, սակայն վայելելով Թեմիս ազգային իշխանութեան հովանաւորութիւնը եւ Համայնքի վարչութեան համագործակցութիւնը՝ կարողացել է յաղթահարել դրանք: Իսկ որպէս երախտագէտ մի միութիւն փոխադարձաբար իր համագործակցութիւնն է ցուցաբերել Համայնքի վարչութեանը եւ միւս անձնակազմերին*»:

Տկն. Մովսիսեանն իր խօսքում նաեւ ակնարկեց միութեան հիմնադրման 40-ամեակին, որի հանդիսութիւնը մօտ ապագայում տօնակատարելու է:

Սոյն հանդիպման կազմակերպումը ողջունեց հոգշ. Հայր Սուրբը, ով դրւատելով զոյգ միութեան անդամներին միութենական բարձր ոգին՝ որակեց նրանց որպէս յանձնառու, գործունեայ եւ գիտակից անձնաւորութիւններ, քաջառողջութիւն եւ նորանոր նւաճումներ մաղթելով նրանց:



Սոյն հանդիպմանը արտայայտւեց նաեւ Հայ համայնքի վարչութեան նախագահ՝ պրն. Մելքոն Ծիրւանեանը, ով ողջունելով ներկաներին՝ իր ուրախութիւնն յայտնեց այսպիսի հանդիպում կազմակերպելու կապակցութեամբ: Պրն. Ծիրւանեանն իր խօսքում բարձր գնահատեց Շահինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան դերակատարութիւնը՝ համայնքի ազգային-մշակութային կեանքում եւ առաւել ուժ ու կորով մաղթեց բոլոր հայ միութիւններին, որոնք անխոնջ աշխատում են հայ համայնքների վերելքի ու զարգացման ուղղութեամբ:

# ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԸ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ



Շահինշահրի եկեղեցու եւ դպրոցի անւանակցութիւնը պատեհ առիթ համարելով, Սրբոց Վարդանանց տօնին, Շահինշահրում տեղի ունեցաւ Մատաղօրհնէքի արարողութիւն՝ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի ձեռամբ եւ Համայնքի վարչութեան կազմակերպութեամբ: Օրւայ խորհրդին ներկայ էին համայնքի միութիւնների ու ազգային մարմինների ներկայացուցիչները եւ մի խումբ հաւատացեալներ:

Համայնքի իւրաքանչիւր անդամ իր լուման ներդրեց մատաղացու ոչխարի գնման համար եւ չորեքշաբթի՝ 2016 թւականի փետրուարի 3-ին, համայնքի «Սրբոց Վարդանանց» դպրոցի բակում կատարւեց Աղօրհնէքի արարողութիւն՝ հոգշ. Հայր Սուրբի ձեռամբ, ապա տեղի ունեցաւ ոչխարի զենում:



Հարիսա եփելու աշխատանքը հոգատարութեամբ

կատարեց Համայնքի վարչութեան կողմից նշանակուած յանձնախումբը:



Հինգշաբթի՝ փետրուարի 4-ի առաւօտեան, «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում եպիսկոպոսական սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց Սպահանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը, ում սպասարկում էին արժ. Տ. Վազգէն քհն. Քէօշկէրեանը եւ արժն. Տ. Սահակ քհն. Մինասեանը: Արարողութեանը ներկայ էին Ծահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, Թեմի Կրօնական Խորհրդի եւ Համայնքի վարչութեան ներկայացուցիչները, Հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի, «Սրբոց Վարդանանց» տարրական եւ «Մասիս» միջնակարգ դպրոցների ուսուցչական կազմերը, Ծնողական խորհուրդները, աշակերտութիւնը եւ բազմաթիւ հաւատացեալներ:



Օրուայ խորհրդին սպասարկեց սարկաւագաց դասը, իսկ Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ծահինշահրի «Նարեկ» երգչախումբը:

«Սրբոց Վարդանանց» զօրավարների եւ 1036 նահատակ վկաների յիշատակին մատուցող այս Պատարագի ընթացքում, յաւուր պատշաճի քարոզեց պատարագիչ Սրբազան Հայրը՝ անդրադառնալով Սրբոց Վարդանանց պատգամին՝ «*Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է*»:

Գնահատելով աշակերտների ներկայութիւնը, առաջնորդ Սրբազան Հայրը իր խօսքն ուղղելով նրանց նշեց, որ անհաւասիկ այս աշակերտներն են մեր ազգի ապագայ յոյսը, որոնք պէտք է բարձր պահեն Վարդանանց քաջերի անունը եւ շարունակեն նրանց ուղին՝ միշտ հաւատարիմ մնալով Սուրբ Ուխտին:



Սուրբ Պատարագից յետոյ, տեղի ունեցաւ Մատաղի օրհնութիւն, որից յետոյ այն բաժանուեց ներկայ հաւատացեալներին, նաեւ բացակայ կարիքաւոր ընտանիքներին:



Այնուհետեւ հրաւիրեալները վայելեցին օրուայ առիթով կազմակերպուած ճաշկերոյթը, որի ընթացքում հնչեցին բարեմաղթանքներ եւ Սրբոց Վարդանանց տօնին նուիրուած գեղեցիկ երգեր:



# ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԱՌԹԻՒ ՏԱՐԱԶԱՀԱՆԴԷՍ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Ուրբաթ՝ 2016 թուականի փետրուարի 5-ի երեկոյեան, Շահինշահրի Հայ համայնքի վարչութեան կողմից նշանակուած յանձնախմբի նախաձեռնութեամբ կազմակերպուել էր գեղեցիկ տարազահանդէս եւ ուրախ տօնախմբութիւն՝ Բուն Բարեկենդանի առիթով՝ համայնքի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում:



Տօնախմբութեանը ներկայ էին նաեւ Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունճանեանը, Հայ համայնքի վարչութիւնը, դպրոցի ուսուցչական կազմը, Ծնողական խորհուրդը, միութիւնների ներկայացուցիչները եւ մեծ թւով ժողովուրդ:



Դահլիճը մուտք գործելուն պէս հանդիսատեսի աչքի առջեւ բացւում էր ճաշակով զարդարուած բեմը՝ բազմերանգ պատկերներով, ժպտուն խաղալիքներով ու համեղ մրգերով:

Օրուայ բեմավարն էր հայոց դպրոցի ուսուցչուհի Անահիտ Այւազեանը, որը բարի գալուստ մաղթելով բոլորին՝ գեղեցկօրէն ներկայացրեց Բուն Բարեկենդանի խորհուրդը՝ իր խօսքում նշելով, որ «*Բարեկենդանի արմատները հասնում են մեր բնապաշտպանական շրջանի ժամանակ, դա զարթօնքի տօնակատարութիւն է, գարնան զարթօնքի: Քրիստոնէութիւնը վերափոխեց ժողովրդական տօնացոյցը, սակայն ժողովրդական տօնահանդէսները գոյատեւեցին զուգահեռ: Տօնակատարութեան անբաժանելի մաս են կազմում զւարճալի խաղերը, որոնցից բացի տեղի էին ունենում հիմնական արարողակարգեր, թատերախաղեր, որոնք մեր հին Հայաստանում՝ Պատմական Հայաստանում, սկսած Վանից, Մշոյ աշխարհից, Սասունից, Ջաւախքից, պատմական Գանձակից, Արցախից եւ այլուր, իւրաքանչիւրն ունէր իր անւանումը, սակայն սոցիալական առումով համարեա թէ նոյն բովանդակութիւնը*»:




Այնուհետեւ բեմավարը տարիքային կարգով բեմ հրաւիրեց տարազ հագած մանուկ-պատանիներին՝ ներկայացնելով նրանց անունն ու հագած տարազը: Նրանցից իւրաքանչիւրը հանդիսատեսին ներկայացնում էր հեքիաթային կամ մուլտֆիլմի մի հերոսի ու կերպարի:

Ծրագիրն աւելի հաճելի էր դարձրել նաեւ պրն. Լէօ Ծիրւանեանի պատասխանատւութեամբ հնչող հայկական ուրախ երգ ու երաժշտութիւնը:

# «ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ» ՏՕՆԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Չորեքշաբթի՝ 2016 թ. փետրուարի 10-ի երեկոյեան ժամը 7:30-ին, նախաձեռնութեամբ Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների տեսչութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական խորհրդի, դպրոցի սրահում նշւեց «Սրբոց Վարդանանց» տօնը, որին ներկայ էին համայնքի հոգեւոր տեսուչ՝ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունճանեանը, արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանը, Սպահանի հայոց թեմի Կրթական խորհուրդը, Համայնքի վարչութիւնը եւ մի շարք հրաւիրեալներ ու ծնողներ:

Բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ ուսուցչուհի Վիոլետ Յարութիւնեանը, ով անդրադառնալով Սրբոց Վարդանանց հերոսամարտին, այն բնութագրեց որպէս հայ ժողովրդի յաջորդ հերոսապատումների ուղենիշը: Նա Իր խօսքում նշեց. «*Վարդանանց ճակատամարտի յաղթանակի բաղադրութիւնը ամփոփւում է հիմնա-*



*կան երեք կէտի մէջ։ Նախ այն իսկական մի օրինակ է պայքարի, ուր մի հաւատացեալ ազգ իր փոքրաթիւ զօրքով յաղթական դուրս եկաւ՝ իրենից աւելի հզօր ու կազմակերպուած բանակի դէմ։ Այս ոգուն Հայոց պատմութեան մէջ հանդիպում ենք տարբեր ժամանակաշրջաններում՝ անցնելով Մուսա Լեռից հասնելով Արցախեան պայքար։ Ապա այս շարժումը կարելի է որակել իբրեւ եկեղեցու ու բանակի միաձուլման իւրայատուկ հանդրւան, ուր ազգ ու եկեղեցի նոյն խրամատի մէջ ամփոփուած պայքարեցին ընդդէմ հզօր թշնամուն։ Եւ վերջապէս, Վարդանանք՝ իրենց նահատակութեամբ մեր ժողովրդին կտակեցին հաւատքի, անձնազոհութեան, քաջութեան եւ միասնականութեան արժէքները, որոնք մինչ այսօր մեր ուսերին կրած գոյատեւում ենք»։*



Ուսուցչական խօսքին յաջորդեց դպրոցի տարրական բաժնի աշակերտ-ուհիների գեղարուեստական ձեռնարկը, որը պարունակում էր ազգային-հայրենասիրական երգեր ու ասմունքներ՝ երաժիշտ-երգուսոյց պրն. Նարբէյ Գրիգորեանի ղեկավարութեամբ: Ծրագրի առաջին բաժինը յաջողութեամբ աւարտելուց յետոյ, բեմը տրամադրուեց Դերենիկ Դեմիրճեանի «Վարդանանք» վէպից մի հատուածի բեմադրութեանը, որի ընթացքում դերերով հանդէս եկան «Մասիս» միջնակարգ դպրոցի մի շարք աշակերտ-ուհիներ:

Օրուայ ձեռնարկը եզրափակեց հոգշ. Հայր Սուրբի պատգամը, որով Հայր Սուրբը նախ անդրադառնալով Սրբոց Վարդանանց ճակատամարտին՝ իր ուրախութիւնը յայտնեց այսպիսի որակեալ դպրոցական հանդէս կազմակերպելու կապակցութեամբ: Նա բարձր գնահատեց աշակերտ-ուհիների դերակատարութիւնը սոյն հանդէսում, որոնք ամենայն պատասխանատուութեամբ մասնակցեցին ձեռնարկին: Այնուհետեւ իր դրւատանքի խօսքն ուղղեց դպրոցի պատասխանատուներին, Ծնողական խորհրդին եւ ծնողներին, որոնք հայաբար ու հայավայել դաստիարակում են հայ աշակերտին՝ սերմանելով նրա մէջ հայրենասիրութեան, ազգասիրութեան եւ քաջ նախնիներին գնահատելու եւ ընդօրինակելու ոգին:

Հայր Սուրբն իր խօսքում ընդգծեց նաեւ Թեմիս Կրթական խորհրդի եւ Համայնքի վարչութեան դրական դերը, որոնք ամենայն յանձնառութեամբ հոգ են տանում հայոց դպրոցի բարգաւաճման եւ վերելքի մասին:

Օրուայ ձեռնարկի իրագործմանը համագործակցեցին արժն. Տ. Սահակ. քհնյ. Մինասեանը, երաժիշտ-երգուսոյց Նարբէյ Գրիգորեանը, ձայնի պատասխանատու Լէօ Օհիւանեանը եւ Հայ համայնքի վարչութիւնը, որոնք արժանացան շնորհակալական խօսքի, իսկ Ծնողական խորհուրդը արժն. Տէր Հայրի ցուցաբերած համագործակցութեանը իր երախտիքը յայտնեց՝ մի ծաղկեփունջ նուիրելով նրան:

Հարկ է նշել, որ ծնողների միջոցով կատարուեց սրտաբուխ նուիրատուութիւն՝ դպրոցի Ծնողական խորհրդին:



## ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ ՆՇՈՒԵՑ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՕՆԸ

Շաբաթ՝ 2016 թւականի փետրուարի 13-ի միջօրէին, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների տեսչութեան, ուսուցչական կազմի եւ ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ տօնւեց Տեառնընդառաջը:

Աշակերտ-ուհիների համար, Տեառնընդառաջի խորհուրդը հանգամանօրէն բացատրեցին ուսուցիչներ Վարդուհի Պօղոսեանը եւ Քարմէն Մատթէոսեանը, որից յետոյ աշակերտները հաւաքւեցին նախապէս պատրաստուած թուփի շուրջ, որը բոցավառւեց բարշ. Ռազմիկ սրկ. Գալստանեանի ձեռամբ:

Այնուհետեւ աշակերտները հաճելի պահեր վայելեցին կրակի շուրջ՝ ցատկելով նաեւ կրակի վրայից: Ծնողական խորհուրդը բոլոր ներկաներին հիւրասիրեց պատրաստած հրուշակով եւ աղանձով:



Նոյն օրը՝ երեկոյեան, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի շրջափակում կատարւեց Տեառնընդառաջի նախատօնակ եւ աւանդական հրավառութիւն՝ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունճանեանի ձեռամբ: Արարողութեանը ներկայ էին արժ. Տ. Սահակ քհնյ. Մինասեանը, սարկաւագաց դասը, համայնքի «Նարեկ» երգչախումբը, Հայ համայնքի վարչութեան անդամները եւ հաւատացեալներ:

Եկեղեցական արարողութեան ընթացքում կատարւեց նորածինների տաճար ընծայման կարգը:



Եկեղեցական արարողութեան աւարտին, հոգշ. Հայր Սուրբը բացատրեց Տեառնընդառաջի խորհուրդը եւ նրա հետ կապւած ժողովրդական ծիսական մի քանի սովորոյթներ: Նա իր քարոզի աւարտին շնորհաւորելով Տեառնընդառաջը՝ օրհնեց նորածիններին ու բարեմաղթեց նորապսակներին սէր, փոխադարձ յարգանք, ամուր ընտանիք եւ քաջառողջութիւն:

Նախատօնակի արարողութիւնից յետոյ, հոգշ. Հայր Սուրբի աղօթքով եւ նորապսակ զոյգերի միջոցով բոցավառւեց դպրոցի բակում տեղադրուած հսկայ թուփը, որին յաջորդեց տօնական տրամադրութիւնը կրակի շուրջ:

Այնուհետեւ նորապսակ զոյգերը եւ նորածինները իրենց ծնողների հետ մեկնեցին Նոր Ջուղա՝ մասնակցելու նորապսակների եւ նորածինների պատւին կազմակերպւած հիւրասիրութեանը:

## ԱՄԱՆՈՐԵԱՅ ՀԱՆԴԷՍ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Երկուշաբթի՝ 2015 թւականի դեկտեմբերի 27-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Շահինշահրի «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ կազմակերպւել էր ամանորեայ հանդէս: Սոյն ձեռնարկին ներկայ էին Սպահանի հայոց թեմի բարեջան առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը, համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունճանեանը, Թեմի Կրթական խորհրդի, Համայնքի վարչութեան եւ Պատգամաւորական ժողովի ներկայացուցիչներն ու սաների ծնողները:

Բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ դպրոցի տեսչուհի օրդ. Կարինէ Մինասքանեանը, ով շնորհաւորելով Ամանորը՝ շնորհակալական խօսք ուղղեց թեմակալ առաջնորդին, հոգշ. Հայր Սուրբին, ազգային մարմիններին եւ ծնողներին, ովքեր միշտ գտնւել են կրթօջախի կողքին եւ որեւէ ճիգ ու ջանք չեն խնայել՝ այն պայծառացնելու եւ զարգացնելու նիւթական գործում:



Օրդ. Մինասքանեանը մաղթեց, որ 2016 թւականը բերի նորանոր նւաճումներ ու յաջողութիւններ դպրոցի համար եւ իրագործւեն ուսումնական օգտաշատ աշխատանքներ: Իր խօսքի աւարտին տեսչուհին իր շնորհակալական խօսքն ուղղեց բոլոր այն անձանց, որոնց համագործակցութեան շնորհիւ իրագործւեց այդ գեղե-

ցիկ հանդէսը: Այնուհետեւ բեմի գեղեցիկ զարդարանքը ճոխացաւ սաների խանդավառ ելոյթով, որոնք իրենց գունագեղ զգեստներով առանձնայատուկ փայլ նիրեցին կազմակերպուած հանդէսին:

Ինչպէս ամէն Նոր տարի մեր հրաշք սաներին հիւր եկան Ձմեռ պապն ու Ձիւնանուշը, որոնց՝ իրենց ուրախ բացականչութիւններով դիմաւորեցին մանուկները:

Օրուայ առիթով իր հայրական պատգամը փոխանցեց գերշ. Սրբազան Հայրը, որն իր գոհունակութիւնը յայտնելով դպրոցի անձնակազմի եւ Ծնողական խորհրդի գործունէութիւնից՝ մաղթեց նրանց առաւել ուժ ու կորով, քաջառողջութիւն եւ յաջողութիւն: Թեմական առաջնորդը մաղթեց, որ 2016 թ. հանդիսանայ նոր, ազնիւ մտքերի ու գաղափարների եւ վեհ նպատակների իրականացման տարի:

Բեմային ելոյթին յաջորդեց ուրախ ժամանց, որին մեծ սիրով մասնակցեցին սաների ծնողները եւ ընտանիքները:

## ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Չորեքշաբթի, 2016 թ. փետրուարի 3-ի առաւօտեան ժամը 9:30-ին, Շահինշահրի «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ նշուեց Բուն Բարեկենդանը՝ ներկայութեամբ դպրոցի սաների ծնողների:



Օրուայ առիթով սաները ներկայացել էին գեղեցիկ զգեստներով եւ տեսքով՝ ըստ ճաշակի եւ ցանկութեան, որոնք խանդավառութեամբ կատարեցին ուրախ երգեր ու ասմունքներ՝ մեծ հրճուանք պատճառելով ներկաներին:



Աշխոյժ ծաղրածուն եւս իր հետաքրքիր շարժումներով միացաւ փոքրիկներին՝ գեղեցիկ փաթեթաւորուած մրգեր նուիրելով նրանց: Իսկ օրուայ ուրախ տրամադրութեանը միանալով, ծնողները եւս մասնակցեցին կազմակերպուած խրախճանքին:

## ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԸ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

2016 թուականի փետրուարի 13-ի առաւօտեան՝ Շահինշահրի Հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանում տօնուեց Տեառնընդառաջը:



Աւանդական հրավառութիւնը նշելու համար դպրոցի Ծնողական խորհուրդը պատրաստել էր հրավառութեան թուփը, որը վառուեց՝ մեծ հետաքրքրութիւն պատճառելով փոքրիկներին:



Այնուհետեւ սաները դաստիարակների հետ կրակի շուրջ պտտուելով ուրախ պահեր վայելեցին եւ նրանց օգնութեամբ ցատկեցին կրակի վրայից:

Ծրագրի աւարտին սաները ստացան գունագեղ փաթեթաւորումներով պատրաստուած քաղցրաւենիքները եւ ուրախ վերադարձան իրենց տները:

# ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ԱՅՑ ԲՈԼՈՐԱՆ ԳԻՒՂ

2016-ի յունուարի 4-ին, Ս. Ծննդեան ու Նոր տարուայ առիթով, Բոլորան գիւղ ներկայացան Բուին-Միան-դաշտի գաւառապետ պրն. Մաշալլահ Թահանեան-զադէն, նրա տեղեկալ պրն. Մուսլեմ Ասադին եւ նահան-գապետարանի գիւղաշինութեան գերատեսուչ պրն. Իսա Բահմանին, որոնք հիւրընկալեցին տեղիս խոր-հըրդի կողմից:



Հանդիպման ընթացքում խօսակցութիւն ծաւալեց գիւղի տնտեսական, շինարարական եւ տուրիստական ոլորտների բարելաւման վերաբերեալ, որոնց իրագործ-ման ուղղութեամբ հիւրերը խոստացան կարեաց սահ-մաններում օգտակար հանդիսանալ:

Անդրադառնալով գիւղի եկեղեցու կողոպուտի հար-ցին, պրն. Իսա Բահմանին գիւղաշինութեան տնօրէնի թոյլտուութեամբ եւ գաւառապետի միջոցով 50,000,000 ռիալ բիւջէ յատկացրեց՝ եկեղեցում ապահովական տեսախցիկներ տեղադրելու համար:



Փերիայի պատգամաւորը եւ տեղիս խորհուրդն ու եկեղեցական վարչութիւնը շնորհակալութիւն յայտնե-ցին պատուարժան հիւրերին՝ կատարած նիրատուու-թեան համար:

Պրն. գաւառապետը գնահատելով Բոլորան գիւղի խորհրդի գործունէութիւնն ու նրանց ջանքերը, կազմի անդամներին յանձնեց գնահատագիր:

# ՂԱՐՂՈՒՆ ԳԻՒՂԻ Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՇՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ



Չորեքշաբթի՝ 2015 թուականի դեկտեմբերի 2-ին, Ղարղուն գիւղի «Ս. Նշան» եկեղեցու վարչութիւնը տարիների իր կատարած աշխա-տանքի զեկոյցը եւ հաշուեցուցակը ներկայացրեց Սպահանի հայոց թե-մի թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի եւ Կրօնա-կան խորհրդի ատենապետ պրն. Վարուժ Մովսիսեանի հետ ունեցած հանդիպման ընթացքում:

Սոյն հանդիպման ընթացքում վար-չութիւնը նաեւ յանձնեց «Ս. Նշան» եկե-ղեցուն պատկանող խնամքով պահպան-ւած բոլոր սպասներն ու իրերը, այսպիսով իր գործունէութեան ժամանակաշրջանը աւարտած համարելով:

Թեմակալ առաջնորդն իր գնահա-տանքի խօսքն ասաց վարչութեան բոլոր անդամներին՝ իրենց տարիների կատա-րած անշահախնդիր աշխատանքի եւ եկեղեցանուէր ծառայութեան համար, նաեւ բարձր գնահատեց զեկոյցի եւ հաշ-ւեցուցակի խնամքով եւ յստակ պատրաս-տութիւնն ու Կրօնական խորհրդին յանձ-նումը:

Հանդիպմանը ներկայ էին նաեւ «Ս. Նշան» եկեղեցու նորընտիր վարչութեան անդամները, ովքեր ականատես եղան հաշիւների եւ սպասների փոխանցմանը:

Գերշ. Սրբազան Հայրը ողջունեց նաեւ նորընտիր վարչութեան անդամներին եւ յոյս յայտնեց, որ նրանք նոյն բծախնդրութեամբ, աշխատասիրութեամբ եւ նախանձախնդրութեամբ շարունակելու են նախորդ վարչութեան գործունէութիւնը՝ ի խնդիր «Ս. Նշան» եկեղեցու բարեզարդ եւ կողքի դպրոցի տարածքի վերանորոգ պահպանման:

# Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԵՐԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՂԱՐՂՈՒՆ ԳԻՒՂԻ «Ս. ՆՇԱՆ» ԵԿԵՂԵՑՈՒՄ



Ս. Աստուածայայտնութեան տօնի առիթով Ղարղուն գիւղի «Ս. Նշան» եկեղեցու վարչութիւնը կազմակերպել էր Ջրօրհնէքի արարողութիւն, որը տեղի ունեցաւ ուրբաթ՝ 2016 թւականի յունուարի 15-ին, հանդիսապետութեամբ Սպահանի հայոց թեմի թամակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի, մասնակցութեամբ արժն. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանի եւ ներկայութեամբ Պատգամաւորական ժողովի դիւանի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ներկայացուցիչների եւ մեծ թւով հայորդիների: Ջրօրհնէքի արարողութեանը խաչքաւորի պաշտօնն ստանձնել էր Թադէ Թահմազեանը:



Արարողութեան աւարտին առաջնորդ Սրբազան Հայրն իր պատգամը փոխանցեց՝ անդրադառնալով Ս. Ծննդեան տօնի եւ Ջրօրհնէքի խորհուրդներին: Նա գնահատեց «Ս. Նշան» եկեղեցու վարչութեանը եւ բոլոր ներկայ ուխտաւոր հաւատացեալներին, ովքեր մասնակցելով սոյն արարողութեանը՝ պայծառացրին եկեղեցին:



Յետ-արարողութեան, առաջնորդ Սրբազան Հայրը եւ ազգային մարմինների ներկայացուիչներն առիթ ունեցան մտերմիկ հանդիպում ունենալու եւ զրուցելու ուխտաւոր հաւատացեալների հետ:



Վերջում տեղի ունեցաւ սիրոյ ճաշ՝ պատրաստուած «Ս. Նշան» եկեղեցու վարչութեան միջոցով, որի ընթացքում արտասանւեցին խօսքեր՝ առաջնորդ Սրբազան Հօր, ազգային մարմինների եւ վարչութեան ներկայացուցիչների կողմից:

## 2015 ԹՈՒԱԿԱՆԻ ՅԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ԿՐՕՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄՕՏ ՊԱՀ ԴՐՈՒԱԾ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻՑ

**Ա) Գալուստ, Մուրասա, Նւարդ եւ Լուսիկ հիմնադրամ** *(Լեւոն Մինասեանի կողմից)*

Կրթական խորհրդին՝ ........ 6,000,000 ռիալ

Համալսարանականների կրթական նպաստի ֆոնդին՝ ........ 6,000,000 ռիալ

Բարեսիրական մարմնին՝ ........ 6,000,000 ռիալ

Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան՝ ........ 6,000,000 ռիալ

Հայ դատի յանձնախմբի աշխատանքներին՝ ........ 8,000,000 ռիալ

Ն.Ջ. եկեղեցիների, դպրոցների եւ ազգային ու մշակութային կառոյցների նորոգութեան՝ ........ 6,000,000 ռիալ

**Բ) Սէթ եւ Ծողեր Եսայեաններ հիմնադրամ**

Կրթական խորհրդին՝ ........ 6,000,000 ռիալ

Կրօնական խորհրդին՝ ........ 4,000,000 ռիալ

Հայ դատի յանձնախմբի աշխատանքներին՝ ........ 4,000,000 ռիալ

Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան՝ ........ 6,000,000 ռիալ

**Գ) Ժենիկ Աւետիքեան (Արթէքեան) հիմնադրամ**

Կրթական խորհրդին՝ ........ 725,000,000 ռիալ

Բարեսիրական մարմնին՝ ........ 240,000,000 ռիալ

**Դ) Վահան, Անահիտ եւ Հերոս Վարդեւանեաններ**

Կրթական խորհրդին (կրօնական-հայեցի դաստիարակութեան)՝ ........ 12,000,000 ռիալ

Կրօնական խորհրդին՝ ........ 12,000,000 ռիալ

**Ե) Չարլզ Էդգար հիմնադրամ**

Բարեսիրական մարմնին՝ ........ 50,000,000 ռիալ

**Զ) Սոֆիա Մաշուրեան հիմնադրամ**

Բարեսիրական մարմնին՝ ........ 38,000,000 ռիալ

Կրօնական խորհրդին՝ ........ 38,000,000 ռիալ

Հայ դատի յանձնախմբի աշխատանքներին՝ ........ 38,000,000 ռիալ

**Է) Գառնիկ Բապիլ հիմնադրամ**

Բարեսիրական մարմնին՝ ........ 5,500,000 ռիալ

**Ը) Կօշկակար Մատթէոս հիմնադրամ**

Հայ դատի յանձնախմբի աշխատանքներին՝ ........ 13,000,000 ռիալ

**Թ) Բարդուղ եւ Երանուհի Բարդուղեաններ հիմնադրամ**

Բարեսիրական մարմնին՝ ........ 13,000,000 ռիալ

Կրթական խորհրդին՝ ........ 13,000,000 ռիալ

Կրօնական խորհրդին՝ ........ 13,000,000 ռիալ

Հայ դատի յանձնախմբի աշխատանքներին՝ ........ 13,000,000 ռիալ

**Ժ) Զանի Յովհաննիսեան հիմնադրամ**

Բարեսիրական մարմնին`.................................................................................. 15,000,000 ռիալ

**ԺԱ) Սահակ Աղասեան հիմնադրամ**

Բարեսիրական մարմնին (անօգնական ընտանիքներին).............................. 2,000,000 ռիալ

**ԺԲ) Յովհաննէս (Զունիկ) Յովհաննէս-Փուռ հիմնադրամ**

Բարեսիրական մարմնին (անօգնական ընտանիքներին)............................ 20,000,000 ռիալ

**ՅԻՍՈՒՍԻ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ:**

# ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

**Ն.Ձ. Հայոց առաջնորդական եկեղեցեաց վարչութիւն**

***Ս. Գէորգ եկեղեցի***

- 1,500,000 ռիալ. Շահիլէ
- 1,000,000 ռիալ. Էմիլի եւ Ադրիան Մկրտչեաններ
- 500,000 ռիալ. Աքոամ
- 300,000-ական ռիալ. Լիանա Զարդն-Դաւութ, ոմն
- 100,000 ռիալ. Մուշեղ Այլազեան

***Ս. Մինաս եկեղեցի***

- 200,000 ռիալ. Մինաս Մինասեան

***Ս. Ստեփանոս եկեղեցի***

- 200,000 ռիալ. Թենի եւ Թոմիկ Բաղրամեաններ, Լալա Բաղդասարեան, Մհեր եւ Վեհանուշ Խուդաբախշեաններ
- 100,000-ական ռիալ. Բալիկ Մարտիրոսեան, Նվարդ Վարդանեան` Եսայի եւ Սերժիկ Վարդանեանների յիշատակին

***Ս. Աստուածածին եկեղեցի***

- 1,000,000 ռիալ. Աքրամ
- 500,000-ական ռիալ. Իշխան Թահմազեան` Ս. Աբգար թագաւորի տօնի առիթով` իր հանգուցեալ ամուսնու` Աբգար Թորոսեանի յիշատակին, Էմին Յարութիւնեան` Ս. Յակոբ տօնի աթիով:

***Ս. Սարգիս եկեղեցի***

***Ս. Սարգիս Զօրավարի տօնի մատաղացու գառ***

- Վազրիկ Մարկոսեան (երկու գառ), Վարուժ Փաթաթանեան, Վրէժ Մինասեան, Վիգէն Մարգարեան, Ռանդօլֆ Սահակեան, Շահէն Թահմազեան

***Ս. Սարգիս Զօրավարի տօնի առթիւ***

- 5,000,000 ռիալ. Գառնիկ եւ Հրանուշ Զարգարեաններ
- 2,500,000 ռիալ. Մահբուբէ Շարիֆի
- 2,000,000 ռիալ. Արմէն եւ Ալենուշ Ղարիբեաններ
- 1,500,000-ական ռիալ. Զաւէն Կիրակոսեան, Հօմա, Ժալէ Սալեհի
- 1,000,000-ական ռիալ. Արեւահատ Մարկոսեան, Րաֆֆի Դեհբաշեանի յիշատակին, Արշամ Ղազարեան, Վաչէ եւ Սեւանա Յարութիւնեաններ, Գագիկ Հայրապետեան, Սերժիկ Պարսամեան, Մարինա եւ Կարէն Ղարախանեաննե, Ծաղկուշ Համբարչեան, Հայկազ եւ Ծաղկուշ Դաւթեաններ, Էմին եւ Նելլի Թորոսեաններ, Թորոսեան ընտանիք, Շիրակ Յովսէփեան, Շահնազ Քիամանեշ, ոմն
- 600,000-ական ռիալ. Արաքս Բարսեղեան, Արմինէ Հայրապետեան, Մեղմիկ, Համիկ եւ Թանգիկ Միրզախանեաններ, ոմն
- 500,000-ական ռիալ. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեան եւ տիրուհի, Արարատ Թորոսեան, Վարդան Մարուքեան, Բրայեան Փանոսեան եւ Էրիկ Կիրակոսեան, Անահիտ Միրզայեան, Նայիրի Թորոսեան, Արուսեակ Շահբազեան, Ֆարիբա Միրզայեան, Ժանեթ Դաւթեան, Վանէ Տէր-Մարտիրոսեան, Մելինա Տէր-Յովհաննիսեան, Մինէ եւ Անի Մինասեաններ, Սիւնէ եւ Սօսէ Մինասեաններ, Թենի եւ Թադէ Մկրտչեաններ, Գառնէ Սարգսեան, Սերժիկ եւ Ալենուշ Ասատրեաններ, Սոնիա Քամարզարեան, Գեւիկ եւ Գեղանի Ղարիբեաններ, Ադրիան եւ Էմելի Մկրտչեաններ, Մինասեան, Ռազմիկ Յովսէփեան, Խորէն Խուդավերդեան, Պետրոսեան ընտանիք, Էդւին Բահրամեան, Սեւակ եւ Նայիրի, Միրօ եւ Արմօ Ծառուկեաններ, Վահիկ Թահմազեան, Մասիս Հայրապետեան, Գեղամ եւ Սաթօ Յարութիւնեաններ, Զանի Օրօջեան, Այլին Կիրակոսեան, Անահիտ եւ Անդրանիկ Յարութիւնեաններ, Սթելլա եւ Վարուժ Վարդանեաններ, Ժորժ եւ Թելմա Հայրապետեաններ, Մովսէս Յովսէփեան, Հենրիկ, Զինա եւ Մոնթէ Առաքելեաններ, Ժենիկ Պօղոսեան, Հրաչ Թահմազեան, Իուինա Խաչատրեան, Էլին Աբրահամեան, Մուշեղ Այլազեան, Ասպետ եւ Լորեթա Վարդանեաններ, Սաշա Մելքոմեան, Էմին Յարութիւնեան, Ռանա Բորումանդ, ոմն (2 պարագայ)
- 450,000 ռիալ. Գառնիկ Մարկոսեան
- 400,000-ական ռիալ. Տիգրան Թորոսեան, Քեւին Քրիստին, Նարբէ եւ Անասիկ Կարապետեաններ, ոմն
- 300,000-ական ռիալ. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեան, Հրանուշ Դաւթեան, Լալա Բաղդասարեան, Ալիս Անդրիասեան, Անդրէ եւ Նայիրի Քեշիշեաններ, Նայիրի Շահիջանեան, Հայկ Գրիգորեան, Պօղոսեան, Արմոնդ Աղախանեան, Անդրէ Կարապետեան, Շերամ Յակոբեան, Արաքս Յարութիւնեան, Նարեկ եւ Նինել Օրօջեաններ, Հրաչ Մովսիսեան ի յիշատակ Արաքսի եւ Սոֆիկի, Սոնիա Զարգարեան, Ալբերտ Ղազարեան
- 250,000-ական ռիալ. Մինաս Թահմազեան, Մալուս Յովսէփեան, Անեթ, Ալեքս, Արմինէ, Էդւին եւ Վիլեամ Շահմիրզայեաններ
- 200,000-ական ռիալ. Թէոդիկ եւ Դիոն Վարդանեաններ ի յիշատակ Սերժիկ եւ Եսայի Վարդանեանների, Սերժիկ Քեշիշեան, Սիմիկ եւ Մանուշ Ղարախանեաններ, Միրօ եւ Մէնուա Յարութիւնեաններ, Արին եւ Մհեր Դաւթեաններ, Թենի ե Թոմիկ Բաղրամեաններ, Արաքս Մկրտչեան, Նանէ, Արգիշտի եւ Մհեր Մարգարեաններ, Արաքս Կիրակոսեան, Օժենի Եաղուբինասաբ, Օրբէլ Յակոբեան, Մարօ եւ Զանի Թորոսեաններ, Մարգարիտ Ալեքսանդրեան, Երեմ եւ Մագի Յարութիւնեաններ, Համասփիւռ Մարգարեան, Ռայեա Խուդավերդեան, Եղիշ եւ Նվարդ Աւետեաններ, Մասիս Յովսէփեան, Սինթիա Պօղոսեան, Վարդուշ Սարուխանեան, Սուլթան Թորոսեան, Աւուկ Խուդաբախշեան, Մհեր եւ Վեհանուշ Խուդաբախշեաններ, Մինուշ Մարգարեան, Անդրէ Մինաս Խաչիկեան, Արթուր եւ Միգանուշ Սարգսեաններ, Սարգսեան, Մարինէ Մկրտչեան, Սերոժ եւ Պերճիկ Յովհաննիսեաններ, Մելինա Պարսամեան, Թումանեան ընտանիք, Նելի եւ

Էմին Թորոսեաններ, Գուրգէն Թահմազեան, Խաչատրեան եւ Աւետումեան, Արեգնազ Տէր-Յովհաննիսեան, Պօղոս Յովսէփեան, Թորգոմ Բարսեղեան, Երեմիա Ջաւահերի, Ժանեթ Աղախանեան, Մարինէ Ղարիբեան, Մարգար Մինասքանեան, Ալենուշ Սիմոնեան, Սոնիկ Նահապետեան, Սերինէ Յակոբեան, Արին Քեշիշեան, Դերենիկ Մկրտչեան, Հայրապետ Խոդադադեան, Արմինէ Խաչատրեան, Օֆիկ Սիմոնեան, Վարդուհի Ղարախանեան, Արթին Պօղոսեան, Անի Խոսրովեան, Վանուհի Մկրտչեան, Քեւիկ Մինաս Խաչիկեան, Գառնիկ Բաղդասարեան, Անիա Յովսէփեան, Լիա եւ Նոյէմի Մարկոսեաններ, Հերմինէ Թահմազեան, Հրանուշ Փանոսեան, Վանենի Մանսուրեան, Վահան Թահմազեան, Մառիթա Սարուխանեան ի յիշատակ Գալստան Սարուխանեանի, Նազանին Ջահրա

- 150,000-ական ռիալ. Վարդուշ Ասատրեան, Թամար Գրիգորեան, Արմէն Յովսէփեան, Լուսիկ Յարութիւնեան, Արփա եւ Արէն Մարգարեաններ

- 100,000-ական ռիալ. Արտուշ Սիրջանեան, Նարեկ Յովսէփեան, Սարինէ Խաչիկեան, Արաքս Մանուկեան, Զարսանեթ Պարսամեան, Ժորժ Դաւթեան, Արազ Ղազարեան, Աբգար Ղազարեան, Անահիտ Իսաղուլեան, Մերի Աղախանեան, Թադէոս Աբրահամեան, Սանդուխտ Հայրապետեան, Ալֆրէդ Յովսէփեան, Սարգիս Ծատուրեան, Բալիկ Մարտիրոսեան, Ժենիկ Քեշիշեան, Սոնիա Սուքիազեան, Էդգար Աբդալեան, Զոհրաբեան, Նարբէ Մարկոսեան, Խաթուն Խաչիկեան, Համբարձում Բաղումեան, Ծահէն Օհանեան, Արփա Տէր-Մարտիրոսեան, Լորիկ Բաղդասարեան, Անգինէ Մարկոսեան, Ծաղկուշ Ծիրւանեան, Էլհամ, ոմն

- 50,000 ռիալ. Վահան Վարդանեան, Զարթիկ Սուքիազեան, Արմէն Յովսէփեան, Կարինէ Ծահբազեան, ոմն

***Հանգուցեալ Մինաս Տէր-Յովհաննիսեանի յիշատակին***

- 500,000 ռիալ. ոմն

***Հանգուցեալ Սոֆիկ Յակոբեան- Սիմոնեանի յիշատակին***

- 800,000 ռիալ. Մասիս եւ Նարինէ Քեշիշեաններ

- 500,000-ական ռիալ. Սնկերտ գիւղի վարչութիւն, Վարուժ Ղարիբեան, Ամիրխան եւ Ռուբինա Յովսէփեաններ, Ռազմիկ Տէր-Գրիգորեան, Խաչատրեան ընտանիք, մի խումբ ընկերուհիներ, Սերժիկ եւ Արմինէ Վարդանեաններ

- 300,000-ական ռիալ. Գարեգին եւ Այդա Մարկոսեաններ, Խաչիկ Յովսէփեան, Հայրապետ Եսայի

- 250,000 ռիալ. Ադրինէ Խաչատրեան

- 200,000-ական ռիալ. Լուսիկ Տէր-Ստեփանեան, Արսէն Ծահբազեան, Ստեփան Մինասեան

- 170,000 ռիալ. Հայկազ Ղազարեան

- 150,000 ռիալ. Աստղիկ Մարկոսեան

- 120,000 ռիալ. Գալուստ Դիլանչեան

- 100,000-ական ռիալ. Վարդանուշ Մկրտչեան, Հայկազ Պետրոսեան, Մարօ Բաղումեան, Արփի

- 50,000 ռիալ. Վահիկ Այւազեան

***Հանգուցեալ Սրբուհի Առաքելեան- Աբրահամեանի յիշատակին***

- 1,000,000 ռիալ. Արմէն Կրթահամալիրի տեսչութիւն, ուսուցչական կազմ եւ ծնողական խորհուրդ

- 600,000 ռիալ. Մարլինի ընկերուհիներ

- 500,000-ական ռիալ. Բարեգործական ընկերութիւն, Մարիկ Մինասեան, Կայծակ եւ Դիանա Կարապետեաններ

- 300,000 ռիալ. Արարատ Քեշիշեան

- 200,000-ական ռիալ. Հռիփսիկ Համբարչեան, Մալուս եւ Լուսիկ Յովսէփեաններ, Աբրահամ եւ Վոլգա Մեսրոբեաններ

- 150,000 ռիալ. Համազ Մարգարեան

***Հանգուցեալ Էւլին Նահապետեանի յիշատակին***

- 500,000 ռիալ. Սարօ եւ Մառիեթ Դաւթեան

***Հանգուցեալ Մանուէլ Խաչիկեանի յիշատակին***

- 150,000 ռիալ. Հայկազ Պետրոսեան

- 100,000 ռիալ. Սոնիկ Կիրակոսեան

***Հանգուցեալ Հենրիկ Թորոսեանի յիշատակին***

- 500,000-ական ռիալ. Փերիոյ կրթասիրաց միութիւն, Արարատ Մելիքեան

- 400,000 ռիալ. Ռոբերթ Քեշիշեան

- 300,000-ական ռիալ. Հայ ուս. Չհարմահալ միութիւն, Փերիոյ կրթասիրաց միութեան Ծահինշահրի մասնաճիւղ, Վիգէն Ղազարեան

- 290,000 ռիալ. Մարօ Դարաբիդեան

- 200,000-ական ռիալ. Իշխանուհի Թորոսեան, Բագրատ Սիմոնեան, Առաքել Կարապետեան, Սեդա եւ Ալլին Աբդալեաններ

- 150,000-ական ռիալ. Անդրէ Փանոսեան, Պայծառ Սիմոնեան

***Հանգուցեալ Խորէն Թահմազեանի յիշատակին***

- 1,000,000 ռիալ. Մասիս եւ Բալիկ Անդրիասեաններ ու Յովիկ եւ Իսկուհի Մանուկեաններ ու Արարատ եւ Զեփիւռ Յակոբեաններ

- 500,000-ական ռիալ. Էլիզ Տէր-Սուքիազեան, Վազգէն Մինասեան, Հրայր եւ Սեդա Խաչատրեաններ, Վազգէն եւ Ադիկ Թահմազեաններ, Վահիկ եւ Իւետ Թահմազեաններ

- 400,000-ական ռիալ. Վրէժ Մինասեան, Վոլգա Թահմազեան

- 350,000 ռիալ. «Անի» շէնքի բնակիչներ

- 300,000-ական ռիալ. Սերոժ Մինասեան, Արամ Ծատուրեան, Րաֆֆի Պարսամեան, Խաչիկ Յովսէփեան, Արիս Թահմազեան, Անդրանիկ Ծիրւանեան

- 250,000 ռիալ. Մինաս Թահմազեան

- 200,000-ական ռիալ. Սիլվարդ Թորոսեան, Մարջիկ Մինասեան, Հռիփսիկ Մինասեան, Արտուշ եւ Մարգարիտ Սիրջանեաններ, Սամսոն եւ Արեւիկ Զարգարեաններ, Մարօ Զարգարեան, Վազգէն Անդրիասեան, Հրաչ Մինասեան, Արարատ Աղախանեան

- 150,000-ական ռիալ. Նինա Վարդանեան, Գալստան Ղազարեան

- 100,000-ական ռիալ. Սոնիկ Կիրակոսեան, Մալուս Յովսէփեան, Վարդանուշ Մկրտչեան

***Հանգուցեալ Յովհաննէս Այւազեանի յիշատակին***

- 2.500,000 ռիալ. Վարդան Այւազեանի ընկերներ

- 2.000,000-ական ռիալ. Վահիկ եւ Սոնիա Այւազեաններ, Համիդ Քիմիայի, Հասան Սալեհի

- 1,000,000-ական ռիալ. Ռոլանդ եւ Եւգինէ Ասատրեաններ, Վահիկ եւ Լեռնիկ Ղազարեաններ, Աքբար Ղադիրեան

- 800,000 ռիալ. Աբբաս Ղասեմի

- 500,000-ական ռիալ. Մուշեղ Այւազեան, Համբիկ Այւազեան, Սայիդ Ռեզայի, Փուռ-Ալի, Մոհամմադի, Վանունի, Հոսէյն Թալեբի, Ռասուլ Ղոռէյշի

- 300,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Երէցների միաւոր, Նժդեհ Ստեփանեան

- 250,000 ռիալ. Միսակ Թահմազեան

***Հանգուցեալ Յովսէփ Շահբազեանի յիշատակին***

- 600,000 ռիալ. Քլար Խաշաքեան

- 200,000-ական ռիալ. Յակոբ Մարկոսեան, Արսէն Ծահբազեան

- 100,000-ական ռիալ. Մալուս Յովսէփեան, Անուշաւան Աղաբաբայեան

**Քրիստոնէական դաստիարակութեան խորհուրդ**

- 500,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայ կանանց գթութեան միութիւն, Հայուհեաց բարեգործական ընկերութիւն, Ղարղուն գիւղի Ս. Նշան եկեղեցու վարչութիւն, Խոյգան գիւղի Ս. Աստուածածին եկեղեցու վարչութիւն, Հայ ուս. Չհարմահալ միութեան Նոր Ջու-

ղայի մասնաճիւղ, Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեան, Ուրֆա եւ Արփա եւ Անիա Անդրիասեաններ
- 300,000 ռիալ, Մինաս Թահմազեան
- 200,000 ռիալ, Հայոց ազգային «Արմէն» կրթահամալիր

**Ն.Ջ. Հայոց ազգային «Քանանեան» դպրոց**
- 2,000,000 ռիալ. Թանգիկ Զարդն Դաւուդ
- 1,000,000 ռիալ. Արմինէ Զարգարեան
- 500,000 ռիալ. Լորետա Մինասեան
- 300,000 ռիալ. Մառիտա Սարեան

***Գրքի ցուցահանդէսի առթիւ** (նոյ. 2015 թ.)*
- 2,000,000 ռիալ. Ն.Ջ. Հայ կանանց գթութեան միութիւն
- 500,000 ռիալ. Հայ ուս.Չհարմահալ միութեան Ն.Ջ. մասնաճիւղ, Ն. Ջ. Հայուհեաց բարեգործական ընկերութիւն

***«Իրանահայութեան տարազներ» ցուցահանդէսի առթիւ***
- 1,000,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայ կանանց գթութեան միութիւն, Անի Աբգար
- 500,000-ական ռիալ. Հայ ուս. Չհարմահալ միութիւն, Լալա Դիլանչեան, Իշխանուհի Ղազարեան, Հիլդա Խուդաբախշեան
- 300,000 ռիալ. Տիգրանուհի Օրօջեան
- 200,000 ռիալ. Սոնիա Միրզաբէկեան

**Ն.Ջ. Հայոց ազգային «Կատարինեան» դպրոց**
- 1,100,000 ռիալ. մի խումբ ընկեր-ուհիներ՝ Պետրոս Բաղումեանի յիշատակին

**Ն.Ջ. Հայոց ազգային կրթահամալիր**
- Մէկ հատ դաշնամուր. Ժենիկ Տէր-Գրիգորեան՝ իր քրոջ Էդնա Տէր-Գրիգորեանի յիշատակին

**Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբ**
***40-ամեակի հանդիսութիւն***
- 2,500,000 ռիալ. Մինաս Գէորգեան
- 2,000, 000 ռիալ. Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութիւն
- 1,500,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայ կանանց գթութեան միութիւն, Սերժիկ Վարդանեան
- 1,000,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայուհեաց բարեգործական Ընկերութիւն, Նոէլ Մինասեան, Մերի Մելիքեան, Անիթա Կիրակոսեան
- 500,000-ական ռիալ. «Շուշանիկ» երգչախումբ եւ Կանանց հոգեւոր լսարան, Հայ ուս. Չհարմհալ միութեան Նոր Ջուղայի մասնաճիւղ, Ս.Ա. վանքի «Տաթեւ» երգչախումբ, Վանենի Մանսուրեան, Նինելիա Ալլահվերդեան
- 400,000 ռիալ. Փերիոյ կրթասիրաց միութիւն
- 250,000 ռիալ. Անուշիկ Յովհաննիսեան

***40-ամեակի գեղարուեստական ձեռնարկ***
- 2,000,000 ռիալ. Ծաղկուշ Համբարչեան
- 1,500,000-ական ռիալ. Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհուրդ, Ն.Ջ. Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութիւն, Շահինշահրի Հայ համայնքի վարչութիւն, Սերժիկ Վարդանեան
- 1,000,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայուհեաց բարեգործական ընկերութիւն, Հայ Դատի Ն.Ջ. յանձնախումբ, Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեան, Անդրանիկ Մինասքանեան, Մարօ Ղարախանեան, Սերժիկ Բաղրամեան, Օֆիկ Գէորգեան, Այլին Գէորգեան, Կարինէ Արմէն Խաչիկ
- 800,000 ռիալ. Փերիոյ կրթասիրաց միութիւն
- 600,000 ռիալ. Սեդա Բարղեան
- 500,000-ական ռիալ. Հայոց ազգային «Նարեկ» մանկապարտեզ-նախակրթարան, Ն.Ջ. Հայ կանանց գթութեան միութիւն, Ն.Ջ. Հայոց ազգային «Քանանեան» դպրոցի տեսչութիւն, ուսուցչական կազմ եւ Ծնողական խորհուրդ, Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեան, Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեան, Անժէլ Քոչարեան, Սիրան Կարապետեան, Մարինէ Ասատրեան, Հրաչ Իսաղուլեան, Ռուբինա Ղարիբեան, Անիթա Ալեքսանդրեան, Կարօ Կարապետեան, Գամեր եւ Գիլբերթ Թահամազեան, Վիգէն Մովսիսեան, Համիկ Ալեքսանդրեան, Արեգա Օրօջեան, Նարէ Ասատրեան, Թանիա Մինասեան, Արփիար Յովհաննիսեան, Անի Ասատրեան, Լինա Թէյմուրեան, Հարմա Կարապետեան, Արմինէ Մելիքեան, Ադլին Յովհաննիսեան, Շողիկ Վարդանեան, Այիդա Կիրակոսեան, Ստելլա Ղարիբեան, Վահան Վարդեւանեան, Ժորժիկ Հայրապետեան, Դաւիթ Թորոսեան, Րաֆֆի Ալեքսանդրեան, Յովիկ Թորոսեան, Յովիկ Աղախանեան, Ժանէթ Խուդաբախշեան, Ալենուշ Մարտոյեան, Մարօ Սէթաղեան, Սերոժ եւ Անահիտ Շահիջանեաններ, Սոնիա Պօղոսեան, Ռիմա Սիմոնեան, Վոլգա Ղարիբեան, Մանուշ Շահվալադեան, Վարուժան Բաղումեան, Անդրէ եւ Արսինէ Անդրիասեաններ, Սիւնէ Շահիջանեան
- 400,000-ական ռիալ. «Շուշանիկ» երգչախումբ եւ Կանանց հոգեւոր լսարան, Նարինէ եւ Թաթուլ Ալավերդեաններ, Ռիթա Մկրտչեան, Անահիտ Պետրոսեան, Լիդա Յակոբեան
- 300,000-ական ռիալ. Շահինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութիւն, Ն.Ջ. Հայոց ազգային «Կատարինեան» դպրոցի տեսչութիւն, ուսուցչական կազմ եւ Ծնողական խորհուրդ, Տ. Վարդան քհնյ. Աղաբաբյեան, Մանէ Թահմազեան, Վահիկ Թահմազեան, Վահիկ Մկրտչեան, Սիւնէ Ուղուրեան, Ադլին Յարութիւնեան, Նարեկ Խաչիկեան, Մարալ Ղարիբեան, Մարգարիտ Սիրջանեան, Ալենուշ Ամիրխանեան, Արմէն եւ Արփի Թահմազեաններ, Նժդիկ Տ. Մարտիրոսեան, Մելանիա Ծատուրեան, Ռոբերտ Ղարախանեան, Ժուլիետ Կիրակոսեան, Ռազմիկ Ալեքսանդրեան, Սարինէ Յարութիւնեան, Սեւադա Խաչիկեան, Քրիստինէ Օհանեան, Խաթունիկ Բաբումեան, Արայիկ Գրիգորեան, Անուշ Յովհաննիսեան, Փրենի Ղազարեան
- 250,000 ռիալ. Մեղեդի Մանուկեան
- 200,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայոց Ազգային «Արմէն» Կրթահամալիր, Գեղանի Ղարիբեան, Նարինէ Յովսէփեան, Անահիտ Սիմոնեան, Վանէ Թահմազեան, Թենի Համազասպեան, Ալիս Մուսախանեան, Մելանիա Դաւթեան, Գեղանի Յակոբեան, Պարգեւ Բաբումեան, Արայիկ Սիմոնեան, Փիւնիկ Թորոսեան, Արփի Դիլանչեան, Արութին Թորոսեան, Մարինէ Մկրտչեան, Ռիմա Մուսախանեան, Մագի Յարութիւնեան, Գրիշ Թորոսեան, Մեղրի Կարապետեան
- 150,000-ական ռիալ. Դերիկ Թահմազեան, Մեղմիկ Մանուկեան, Նւարդ Վարդանեան, Համասփիւռ Մարգարեան
- 100,000-ական ռիալ. Ժենիկ Քէշիշեան, Վանէ Շահնազարեան, Վարուժ Մատթեւոսեան, Աիդա Նոշադեան

**Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութիւն**
***«Շաղոյեան» նորաձեւութեան ծրագրի առթիւ***
- 10,000,000 ռիալ. Հայ կանանց գթութեան միութիւն
- 2,000,000 ռիալ. Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհուրդ
- 600,000 ռիալ. Փերիոյ կրթ. միութեան կենտրոնական վարչութիւն
- 500,000-ական ռիալ. Հայ Դատի Ն.Ջ. յանձնախումբ, Ս.Ա. վանքի «Տաթեւ» երգչախումբ, Հայոց ազգային «Արմէն» կրթահամալիր, Հայ ուս. Չհարմահալ միութեան Նոր Ջուղայի մասնաճիւղ, Հայոց ազգային «Քանանեան» դպրոց, Ն.Ջ. Հայուհեանց բարեգործական ընկերութիւն, Հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարան, Համիկ Ալեքսանդրեան, Ռուբէն Խաչիկ-Գրիգորեան, Ռիմա Սիմոնեան, Զարեհ Յովսէփեան
- 400,000 ռիալ. Արազ Մարտիրոսեան
- 300,000-ական ռիալ. Հայոց ազգային «Կատարինեան» դպրոց, Ս.Ա. վանքի «Կոմիտաս» երգչախումբ, Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեան, Նարբէյ Քոչարեան, Կարին Տէր-Մարտիրոսեան, Հրաչ Տէր-Յովհաննիսեան, Մինաս Թահմազեան

**Նոր Ջուղայի Հայ կանանց գթութեան միութիւն**
***Միութեան հիմնադրութեան* 100*-ամեակ***

- 5,000,000-ական ռիալ. Վարուժ Մինասեան
- 3,000,000-ական ռիալ. Հայ Դատի Ն.Ջ. յանձնախումբ
- 1,000,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութիւն, Շահինշահրի Հայ համայնքի վարչութիւն, Փերիոյ կրթասիրաց միութիւն, Ն.Ջ. Հայուհեաց բարեգործական ընկերութիւն, Փերիոյ կրթասիրաց միութեան Շահինշահրի մասնաճիւղ, Նոէլ Մինասեան, Գասպար Ղարիբեան, Մագի Միրզայեան, Նինիկ Կրէտեան, Տարօն Տէր-Մարտիրոսեան, Ծաղկուշ Դաւթեան, Լիլիկ Պօղոսեան, Արտեմիս Խաչեան:
- 700,000-ական ռիալ. Հրաչիկ Միրզախանեան, Ռայա Խուդավերդեան, Աիդա Բաղումեան
- 500,000-ական ռիալ. Հայ ուս. Չհարմահալ միութեան Ն.Ջ. մասնաճիւղ, Ս.Ա. վանքի «Տաթեւ» երգչախումբ, Ս.Ա. վանքի «Կոմիտաս» երգչախումբ, Ն.Ջ. Հայոց ազգային մանկապարտէզ, Ն.Ջ. Հայոց ազգային «Արմէն» կրթահամալիր, Ն.Ջ. Հայոց ազգային «Քանանեան» դպրոց, Ն.Ջ. Հայոց ազգային «Կատարինեան» դպրոց, Ս.Ա. վանքի տպարանի տնօրինութիւն, Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեան, Վրէժ Տէր-Մարտիրոսեան, Քառոլին Ղարիբեան, Անասիկ Խաչիկեան, Դրօ Մարգարեան, Դիմիթրի Յովհաննիսեան, Անդրէ Պարսամեան, Մասիս Պարսամեան, Մանուշ Ծահվալադեան, Մանիֆա Խուդաբախշեան, Քաթրին Ղազարեան, Մարօ Յովսէփեան, Դիանա Ղարախանեան, Ալինա Գրիգորեան, Սւետլանա Պօղոսեան, Սեւանա Ղարախանեան, Հրանուշ Թահմազեան, Էմմիկ Վարդանեան, Լիդա Սիմոնեան, Քրիստ Պօղոսեան, Նւարդ Փանոսեան, Մառիկ Մկրտչեան, Երանուհի Միրզայեան, Ժարմինէ Ուղուրեան, Ալվարդ Կարապետեան, Ռիթա Մկրտչեան, Վանուհի Մովսիսեան, Նւարդ Ծահնազարեան
- 400,000-ական ռիալ. Շահինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութիւն, «Շուշանիկ» երգչախումբ եւ Կանանց հոգեւոր լսարան
- 300,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Շահինշահրի մասնաճիւղ, Ս. Աստուածածին եկեղեցու տիկնաց յանձնախումբ, Անահիտ Ջանի, Անահիտ Սէթ-Աղայեան, Ֆրիդա Ալլահվերդեան, Հերմինէ Այազեան, Արմինէ Թորոսեան, Անգինէ Քեշիշեան, Ժերմէն Մինասեան, Ժուլեթ Սէթ-Աղայեան
- 200,000-ական ռիալ. Սօսէ Պօղոսեան, Գալստան Ծառուկեան, Յասմիկ Փանոսեան, Աիդա Խուդավերդեան

***Բարեսիրական նպատակների համար***

- 50,000,000 ռիալ. Վարուժ Մինասեան
- 10,000,000 ռիալ. Արբի Բաբայեան
- 5,000,000-ական ռիալ. Հայ Դատի Ն.Ջ. յանձնախումբ, Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի դիւան, Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհուրդ
- 3,500,000 ռիալ. Տ. Բաբգէն արք. Չարեան
- 100-ական ԱՄՆ դոլար. Սպահանի հայոց թեմի Թեմական խորհուրդ, Գասպար Ղարիբեան, Մատթէոս եւ Անուշ Մինասեանններ, Էմմիկ Վարդանեան,
- 50-ական եւրօ. Տ. Վարուժան արք. Հերկէլեան
- 3,000,000-ական ռիալ. Շահինշահրի Հայ համայնքի վարչութիւն, Ժորժիկ Աբրահամեան
- 2,000,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միու-թիւն, Փերիոյ կրթասիրաց միութիւն, Ն.Ջ. Հայուհեաց բարեգործական ընկերութիւն, մի խումբ երիտասարդներ, Գեւիկ Խաչատրեան, Վարսենիկ Օրօջեան
- 50 ԱՄՆ դոլար. Լիլիթ Տէր-Գրիգորեան
- 1,500,000-ական ռիալ. Տ. Անանիա վրդ. Գուճանեան, Հայկազ եւ Ծաղկուշ Դաւթեաններ
- 1,000,000-ական ռիալ. Շահինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութիւն, Փերիոյ կրթասիրաց միութեան Շահինշահրի մասնաճիւղ, Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեան, Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեան, Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեան, Մուշեղ Այազեան, Դիանա Ղազարեան, Վիգէն Մովսիսեան, Մարօ Ղարախանեան, Յակոբ Գուճանեան, Արնէ եւ Մանիֆա Մանսուրեաններ
- 500,000-ական ռիալ. Լեւոն Մարկոսեան, Ծաղկուշ Մկրտչեան, Զարեհ Ղարախանեան, Սաքօ Տէր-Յովհաննիսեան

**<u>Հայ ուս. Չհարմահալ միութիւն</u>**

***Նոր Տարւայ առիթով***

- 500,000 ռիալ. Հայդուկ Մարգարեան, Մարտիրոս Գասպար Ղիասեան
- 400,000 ռիալ. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեան
- 200.000 ռիալ. Բիւրեղ Քամարզարեան, Նւարդ Վարդանեան, Սաթօ Վարդանեան
- 100,000 ռիալ. Համասփիւռ Մարգարեան, Զարդիկ Սուքիասեան

**<u>Շահինշահրի Հայ համայնքի վարչութիւն</u>**

- 2,000,000-ական ռիալ. Վերժիկ Միրզախանեանից՝ իր ամուսնու՝ Սուրիկ Բաբումեանի յիշատակին
- 1,100,000-ական ռիալ. Հենրիկ Մատթէոսեան՝ իր հօր՝ Դաւիթ Մատթէոսեանի յիշատակին

***Ս. Ծննդեան տօնի առիթիւ***

- 500,000-ական ռիալ. Րաֆֆի Թորոսեան

***Սրբոց Վարդանանց տօնի առիթիւ***

- 2,000,000 ռիալ. Էլսիկ Սոհբաթեան
- 1,000,000-ական ռիալ. Արշամ Սէթ-Աղայեան, Արարատ Աղախանեան
- 500,000-ական ռիալ. Էդւին Փիլոսեան, Նարբէյ Յովսէփեան, Ջանիկ Առաքելեան, Եղիա Թորոսեան
- 400,000 ռիալ. Սեւադա Իսաղուլեան
- 300,000-ական ռիալ. Կարօ Գալուստեան, Յովհաննէս Խոդավերդեան, Երեմ եւ Մագի Յարութիւնեաններ
- 200,000-ական ռիալ. Հռիփսիմէ Յովսէփեան, Նարէ Մարկոսեան, Իւրիկ Մարկոսեան, Մայիս Խան-Մելիքեան, Ծաքէ Բաբումեան, Մելինէ Թորոսեան
- 100,000-ական ռիալ. Անդրանիկ Գալուստեան, Զարդիկ Սուքիազեան, Սմբատ Քեշիշեան, Վարդան Յովսէփեան

**<u>Ղարղուն գիւղի Ս. Նշան եկեղեցի</u>**

- 20,700,000 ռիալ. Վազրիկ Մարկոսեան
- 1,500,000 ռիալ. Ռիմա Կարապետեան
- 500,000 ռիալ. Գարեգին Մարկոսեան

*Առաջնորդարանին եւ ազգային կառոյցին առնչուող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային Առաջնորդարանի Հանրային կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւններին՝ «Ալիք»-ի թղթակիցները, «Արարատ» Միութեանը՝ Երանուշ Թահմազեանը, Շահինշահրի հայ համայնքինը եւ տեղի «Արարատ» միութեան մասնաճիւղինը՝ Վիոլետ Յարութիւնեանը եւ Աիդա Մուրադեանը։*

*Որոշ լուսանկարներ տրամադրում է Գեւիկ Խաչատրեանը։*

**ՄԵՐ ՀԱՍՑԷՆ**

خلیفه گری ارامنه اصفهان و جنوب ایران

صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵

Armenian Cathedral - P.O.Box 81735-115

New - Julfa, Isfahan, Iran

WWW.Norjugha.ir

WWW.Vank.ir

E-mail: Sourbv@Yahoo.com

Tel: +98–31–36243471-2

Fax: +98–31–36270999

Ծառայութիւնը կը կազմէ Նոր Կտակարանին հիմքը,
որովհետեւ Նոր Կտակարանին առանցքը հանդիսացող
Աստուծոյ Որդին Ինքզինք որպէս ծառայ նկատեց
եւ որպէս մարդու եւ Աստուծոյ ծառայ ապրեցաւ
Իր երկրաւոր կեանքը
ու իրագործեց Իր առաքելութիւնը...

Արդ, Քրիստոս ծառայութիւնը կը նկատէ
մարդուն մէջ աստուածային պատկերը վերականգնելու
եւ փրկութեան ճամբով
մարդը դէպի Աստուած առաջնորդելու
ամենէն վաւերական ճամբան:
Ճամբայ մը,
որ Քրիստոս Իր առաքելութեամբ հունաւորեց
եւ Իր կեանքով ցոյց տուաւ մարդուն:

ԱՐԱՄ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ